



«Կանանց իրավունքների պաշտպանության մեխանիզմների ամրապնդման հեռանկարները հայաստանում» զեկույցը պատրաստվել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում:

Զեկույցի բովանդակության համար պատասխանատու է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, և այն կարող է չարտացոլել Եվրոպական միության տեսակետները:

© Իրավաբանների հայկական ասոցիացիա, 2019թ.

Նյութերի օգտագործման դեպքում հղումը պարտադիր է:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցը նվիրված է կանանց իրավունքների պաշտպանությանը, հատկապես այն ոլորտներում, որոնցում կանայք մեր երկրում խոցելի են ամենից շատ, և առկա է միջամտություն կատարելու անհրաժեշտություն:

Զեկույցի առաջին բաժինը վերաբերում է կանանց իրավունքների պաշտպանության ոլորտում համակարգային խնդիրներին: Զեկույցի հաջորդ բաժինները վերաբերում են կանանց տնտեսական և աշխատանքային իրավունքների պաշտպանությանը, կանանց առողջապահական (վերարտադրողական) իրավունքների պաշտպանությանը, կանանց իրավունքների պաշտպանությանը ընտանիքում, ներառյալ՝ սեփականության իրավունքի համատեքստում, և կանանց քաղաքական մասնակցությանը:

Զեկույցի հիմքում դրված է ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներով, Պեկինյան գործողությունների ծրագրով, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեի ընդհանուր և «ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի ՀՀ կողմից կատարման վերաբերյալ 5-րդ և 6-րդ համատեղ պարբերական զեկույց»-ի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումների հատուկ հանձնարարականներից և մի շարք այլ միջազգային փաստաթղթերից բխող ՀՀ պարտավորությունների կատարման գնահատականը՝ ՀՀ գործող օրենսդրության, օրենսդրական նախաձեռնությունների և «ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023թթ. ռազմավարության և միջոցառումների ծրագրի» նախագծի դրույթների հետ համադրմամբ՝ միջազգային առաջավոր փորձի լույսի ներքո: Զեկույցի համար հիմք է ծառայել նաև «Կանանց իրավունքների պաշտպանության մեխանիզմների ամրապնդման հեռանկարները հայաստանում» թեմայով կլոր սեղան-քննարկման ամփոփումը:

Հավելված 1-ը նվիրված է վերոնշյալ ռազմավարության և միջոցառումների ծրագրի վերաբերյալ ընդհանրական դիտարկումներին, իսկ Հավելված 2-ը՝ վերոնշյալ քննարկման ամփոփմանը:

Զեկույցի յուրաքանչյուր բաժնում ներկայացված են այդ բաժնում բարձրաձայնված հիմնախնդիրների լուծմանն ուղղված առաջարկություններ:

Զեկույցը և դրանով բարձրացված հարցերը կարող են ծառայել ինչպես ռազմավարության և միջոցառումների ծրագրի բարելավման համար, այնպես էլ դրանցից բխող միջոցառումների փաստացի իրականացման ընթացքում:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ/ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ՑԱՆԿ..... 6

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ ..... 7

ԳՈՐԾԱԴԻՐ ԱՄՓՈՓՈՒՄ..... 8

I. ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ ..... 11

1. ԿԱՆԱՆՑ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ ՉԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ..... 11

2. ԱՌԿԱ ՉԷ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳ ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՉԲԱՂՎՈՂ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ..... 18

3. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԻՆՔ ՉՈՒՆԵՆ ԱՆԿՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ..... 18

II. ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ..... 20

1. ԿԱՆԱՅՔ ՉՈՒՆԵՆ ԻՐԵՆՑ ԽԱԽՏԿԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՐԾՈՒՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ ..... 20

2. ԱՇԽԱՏԱԿԱՅՐՈՒՄ ՍԵՌԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄՆԵՐԸ (SEXUAL HARASSMENT) ԱՐԳԵԼՎԱԾ ՉԵՆ 20

3. ՉԻ ՎԱՐՎՈՒՄ ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ..... 26

4. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԵՆ ԳՈՐԾՈՒՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ՝ ՈՒՂՂՎԱԾ ԸՆՏԱՆԻՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՄԱՏԵՂԵԼՈՒՆ ..... 27

5. ԱՇԽԱՏԱԿԱՐՁԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՃԵՂՔՎԱԾՔԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՄԱՍ ԲԱՐՁՐ ..... 32

A. ՈՒՂՂԱՀԱՅԱՑ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ..... 34

B. ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ..... 36

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՉԷ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ..... 39

7. ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԿԱՆԱՅՔ ԳՐԵԹԵ ..... 40

ՆԵՐԳՐԱԿՎԱԾ ՉԵՆ ..... 40

III. ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ..... 40

1. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՉԻ ՎԱՐՎՈՒՄ ՊԱՏՇԱՃ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ..... 41

2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆ..... 46

3. ՀԱՐԿԱԴԻՐ ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ..... 53

4. ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԲՈՒՆԱԲԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ..... 55

5. ՀԵՏԱՄՏՈՒՄԸ (STALKING) ՔՐԵԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ..... 57

6. ՀՀ-ՈՒՄՆԵՐԴՐՎԱԾ ՉԷ ՓԱՍՏԱՅԻ ԿԱՄ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԻՍԱԿԱՐԳՈՎ ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ..... 60

7. ԱԼԻՄԵՆՏ ՎՃԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ՀԱՃԱԽ ՉԻ ՊԱՀՊԱՆՎՈՒՄ .. 61

8. ԿԱՆԱՆՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԲԱԿԱՐԱՐ ՉԱՓՈՎ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ՉԷ ..... 62

9. ԱՌԿԱ ՉԷ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ ԱՌ ԱՅՆ, ԹԵ ՈՒՄ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՏԱՆԻՆ ..... 63

10.	ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԿԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆ64	
IV.	ԿԱՆԱՆՑ ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ (ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ) ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 65	
1.	ՀԱՐԿԱԴԻՐ ԱՔՈՐՏ ԿԱՏԱՐԵԼԸ, ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱԿՈՐԿԱԾ, ԹԵՐԻ Է ԿԱՐԳԱՎՈՐԿԱԾ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ .....	66
2.	ՀԱՐԿԱԴԻՐ ԱՄԼԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼԸ ՆԱԽԱՏԵՍԿԱԾ ՉԷ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ .....	78
3.	ԱՌԿԱ Է ՄԻԱԿ-ՁԻՎՀ ԿԱՐԱԿ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ ՀԱՎԵԼՅԱԼ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՆԱԽԱՏԵՍՄԱՆ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ.....	79
V.	ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.....	84
1.	ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԵՆՍԴՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ .....	87
2.	ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱԴԻՐ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.....	95
3.	ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.....	98
4.	ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԼՈԿԱԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ .....	100
	ՀԱՎԵԼՎԱԾ 1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀՀ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈԱՉՄԱԿԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ.....	107
	ՀԱՎԵԼՎԱԾ 2 «ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ-ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ.....	112

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ/ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ՑԱՆԿ**

ԱԺ	Ազգային ժողով
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
Աշխատանքային խումբ	Կանանց և տղամարդկանց հավասարության հիմնահարցերով խորհրդին կից աշխատանքային խումբ
Եզրափակիչ դիտարկումներ	«ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի Հայաստանի Հանրապետության կողմից կատարման վերաբերյալ 5-րդ և 6-րդ համատեղ պարբերական զեկույց»-ի եզրափակիչ դիտարկումներ
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵԽ ՄԻՀ	Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար
ԵԽԽՎ	Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով
ԵՄ	Եվրոպական միություն
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
Խորհուրդ	Կանանց և տղամարդկանց հավասարության հիմնահարցերով խորհուրդ
Կոմիտե	ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե
Կոնվենցիա	ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա (CEDAW)
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԲՀ	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԿ-ի ՏՄՄԻԿ	ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ՄԻԵԿ	Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա
ՄԻՊ	ՀՀ մարդու իրավունքների պաշտպան
Միջոցառումների նախագիծ	Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարության միջոցառումների ծրագրի նախագիծ
Ռազմավարության նախագիծ	Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարության նախագիծ
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. Զբաղվածները՝ ըստ զբաղմունքի խմբերի և սեռի..... 34

Աղյուսակ 2. Քաղաքացիական ծառայողները՝ ըստ պաշտոնների խմբերի և սեռի ..... 35

Աղյուսակ 3. Զբաղվածները՝ ըստ տնտեսական գործունեության խոշոր խմբերի..... 36

Աղյուսակ 4. Միջին աշխատավարձի սեռային խզվածքը՝ ըստ տնտեսական գործունեության խոշոր խմբերի ..... 36

Աղյուսակ 5. ՀՀ ոստիկանության տվյալները 2013-2018թթ. ընտանեկան բռնության գործերի վերաբերյալ..... 42

Աղյուսակ 6.ՀՀ քննչական կոմիտեի տվյալները 2016-2018թթ. ընտանեկան բռնության գործերի վերաբերյալ..... 43

Աղյուսակ 7. ՀՀ դատախազության տվյալները 2018թ. ընտանեկան բռնության գործերի վերաբերյալ..... 44

Աղյուսակ 8. Կանանց դեմ բռնության տարածվածությունը՝ ըստ տեսակների..... 45

Աղյուսակ 9. Ընտանեկան բռնության արդարացումը կամ հանդուրժումը՝ ըստ սեռի ..... 45

Աղյուսակ 10. Ծնվածներն ըստ սեռի, 1990-2018թթ..... 67

Աղյուսակ 11. Արական սեռի նորածինների գերակշռության ամենաբարձր հորիզոնականները աշխարհում..... 68

Աղյուսակ 12. ՀՀ մարզերի և ք. Երևանի սեռերի հարաբերակցության գործակիցը ծննդից, 2010-2017թթ..... 69

Աղյուսակ 13. Սեռերի հարաբերակցության գործակիցն ըստ ծննդի կարգի, 2002-2017թթ. .... 69

Աղյուսակ 14. Կանայք օրենսդիրում ..... 87

Աղյուսակ 15. Կանայք գործադիր իշխանությունում և Նախագահի աշխատակազմում ..... 95

Աղյուսակ 16. Կանայք գործադիր իշխանության առանցքային մարմիններում ..... 97

Աղյուսակ 17. Կանայք արտաքին ծառայությունում..... 97

Աղյուսակ 18. Եվրոպայի Խորհրդի անդամ երկրների՝ կին և տղամարդ դատավորների տեղաբաշխվածությունն ըստ դատավորների և դատարանների ղեկավարների ..... 98

Աղյուսակ 19. Կանայք դատական համակարգում..... 99

Աղյուսակ 20. Կանայք դատական համակարգում՝ ըստ աստիճանների և աստիճանների ղեկավարների ..... 99

Աղյուսակ 21. Կանայք ՀՀ սահմանադրական դատարանում..... 100

Աղյուսակ 22. Կանայք տարածքային կառավարման մարմիններում և ՏԻՄ-երում ..... 101

Աղյուսակ 23. Կանայք Երևան համայնքում..... 101

Աղյուսակ 24. Կանայք ՏԻՄ-երում խոշորացումից առաջ և հետո..... 101

## ԳՈՐԾԱԴԻՐ ԱՍՓՈՓՈՒՄ

ՀՀ-ում կանանց իրավունքներն ամբողջ ծավալով պաշտպանված չեն: Այդ մասին է վկայում «Գենդերային ճեղքվածքի մասին 2018թ.-ի հաշվետվություն»-ը, որի համաձայն՝ Հայաստանը 149 երկրների շրջանում զբաղեցրել է 98-րդ հորիզոնականը՝ ըստ Գենդերային ճեղքվածքի համաշխարհային ցուցանիշի<sup>1</sup>:

**Կանանց իրավունքների պաշտպանության հարցում անկյունաքարային նշանակություն ունի կանանց առաջխաղացման արդյունավետ մեխանիզմ ունենալը:** Մինչդեռ, ՀՀ-ում գործող «Կանանց և տղամարդկանց հավասարության հիմնահարցերով խորհուրդը» չի համապատասխանում նման մեխանիզմներին վերաբերող միջազգային չափանիշներին: Մասնավորապես, այն մշտապես գործող կառույց չէ, ինչպես նաև վերջինիս գործառույթները և լիազորությունները խիստ սահմանափակ են: Բացի այդ, այն ներառական չէ, քանի որ քաղաքացիական հասարակությունը ներգրավված չէ կառույցում: Հաջորդ համակարգային խնդիրը, որը հատուկ է կանանց իրավունքների խախտումներին, կայանում է հետևյալում. **առկա չէ լրացուցիչ կրթության կայուն կառուցակարգ, որտեղ կձևավորվեն կանանց իրավունքների հարցերով մասնագիտացված իրավապաշտպաններ:**

Ոլորտային հիմնախնդիրներից առանձնացվել են կանանց տնտեսական և աշխատանքային իրավունքների պաշտպանությունը, կանանց առողջապահական (վերարտադրողական) իրավունքների պաշտպանությունը, կանանց իրավունքների պաշտպանությունն ընտանիքում, ներառյալ՝ սեփականության իրավունքի համատեքստում, և կանանց քաղաքական մասնակցությունը, քանի որ այս ոլորտներում կանայք մեր երկրում խոցելի են ամենից շատ, և առկա է միջամտություն կատարելու անհրաժեշտություն:

**Կանանց տնտեսական և աշխատանքային իրավունքների պաշտպանության կապակցությամբ** հարկ է նշել, որ, ըստ վերոնշյալ ցուցիչի «Տնտեսական մասնակցության» ցուցանիշ»-ի, ՀՀ-ն զբաղեցնում է 73-րդ հորիզոնականը: Ամենակարևոր խնդիրներից մեկը կանանց խախտված աշխատանքային իրավունքների պաշտպանության համար գործուն մեխանիզմների բացակայությունն է, որը պայմանավորված է Աշխատանքի պետական տեսչության գործունեության դադարեցմամբ և նորաստեղծ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի լիազորությունների ու գործառույթների փոքր ծավալով, քանի որ դրանք չեն ներառում աշխատանքային խտրականությունների դեմ պայքարը կամ աշխատանքային իրավունքների խախտումների հարցերով վիճակագրության վարումը՝ սեռի հիմքով: Հաջորդ

<sup>1</sup> The Global Gender Gap Report 2018, World Economic Forum, page 9-10, available at: [http://www3.weforum.org/docs/WEF\\_GGGR\\_2018.pdf](http://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2018.pdf)



խնդիրը վերաբերում է աշխատավայրում սեռական հետապնդումները (sexual harassment) արգելող օրենսդրական կարգավորումների խիստ թերի լինելուն, որոնք չեն ապահովում կանանց պատշաճ պաշտպանությունը, որի հետևանքով էլ, հաշվի առնելով նաև երկրում տիրող կարծրատիպային մտածելակերպը, կանայք վախենում են բարձրաձայնել նման արատավոր երևույթի մասին: Բացի այդ, սահմանված չեն գործուն մեխանիզմներ՝ ուղղված ընտանիքը և աշխատանքը համատեղելուն, ինչպիսիք առկա են մի շարք երկրներում, օրինակ՝ երեխայի ծննդյան դեպքում ամուսնուն ևս վճարովի արձակուրդի տրամադրումը, ոչ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատելու դեպքում հղիության և ծննդաբերության՝ օրենքով սահմանված բոլոր երաշխիքների տրամադրումը, երեխային աշխատավայրում կերակրելու համար պայմանների ստեղծումը և այլն: Աշխատավարձի գենդերային ճեղքվածքը շարունակում է մնալ բարձր, որը պատճառ է հանդիսանում թե՛ ուղղահայաց, թե՛ հորիզոնական խտրականության: Երկրում գործազրկության, ներառյալ՝ երկարատև գործազրկության, մակարդակը շարունակում է մնալ բարձր, հատկապես՝ կանանց շրջանում, իսկ ՀՀ սահմանադրությամբ ամրագրված չէ աշխատանքի իրավունքը, որը ՀՀ-ին կպարտավորեցներ իր հնարավորությունների սահմաններում քաղաքացիներին ապահովել աշխատանքով: Արհմիությունների գործունեության մեջ կանանց ներգրավվածության մակարդակի բարձրացումը ևս կհանդիսանա կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված քայլ:

**Ընտանիքում կանանց իրավունքների պաշտպանության** առնչությամբ պայմանականորեն կարելի է առանձնացնել երկու խումբ խնդիրներ՝ **կապված ընտանեկան բռնության և կանանց սեփականության իրավունքների ոտնահարման հետ:** Մասնավորապես, ընտանեկան բռնության վերաբերյալ իրավակարգավորումները վերանայման կարիք ունեն, բացի այդ, քրեականացված չեն հարկադիր ամուսնությունը, ամուսնական բռնաբարությունը և հետամտումը (stalking), այն է՝ դիտավորյալ և շարունակական սպառնալից վարքագիծ՝ ուղղված այլ անձի դեմ, որը վերջինիս մոտ առաջացնում է իր անվտանգության վերաբերյալ վախ: Ամուսնության տարիքի վերաբերյալ կարգավորումները ևս չեն համապատասխանում միջազգային չափանիշներին: Չի վարվում նաև միասնական և պատշաճ վիճակագրություն ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ: Ինչ վերաբերում է սեփականության իրավունքի տեսանկյունից կանանց պաշտպանվածությանը, հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ ՀՀ-ում ներդրված չէ փաստացի կամ եկեղեցական ծիսակարգով ամուսնության ինստիտուտը, և իրավական տեսանկյունից հետևանքներ են առաջացնում միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնությունները, մինչդեռ շատ հաճախ, հատկապես մարզերում, կանայք իրագրված չեն այդ մասին և ամուսնանում են

միայն եկեղեցական ծիսակարգով: Գործնականում խնդիրներ են առաջանում նաև ոչ բարեխիղճ ամուսինների կողմից իրենց համատեղ սեփականությունը հանդիսացող գույքն առանց կնոջ համաձայնության օտարելու, ինչպես նաև փաստացի եկամուտներն ալիմենտ վճարելու պարտականությունը չկատարելու նպատակով թաքցնելու ժամանակ: Կնոջ ամուսնական մատանու սեփականության իրավունքի վերաբերյալ իրավանորմերը ևս տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք են տալիս:

**Կանանց առողջապահական (վերարտադրողական) իրավունքների պաշտպանության տեսանկյունից** երկու հիմնական խնդիր է առանձնացվել: Առաջինը վերաբերում է հարկադիր աբորտներ կատարելու վերաբերյալ թերի իրակարգավորումներին: Նշյալ խնդիրը հատկապես արտահայտված է սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատում կատարելու արատավոր պրակտիկայում, երբ կնոջն իր ամուսինը և/կամ ընտանիքի անդամները հարկադրում են աբորտ կատարել, որովհետև պտուղը իզական սեռի է: Հայաստանը, չնայած վերջին տարիների չնչին բարելավումներին, շարունակում է մնալ աշխարհում արական սեռի նորածինների գերակշռության ամենաբարձր մակարդակն ունեցող երկրների շարքում: Բացի այդ, խոցելի է նաև ՄԻԱՎ-ՁԻԱՀ դրական կանանց իրավունքների պաշտպանությունը, քանի որ վերջիններս ենթարկվում են կրկնակի խտրականության: Հավելենք, որ, ըստ վերոնշյալ ցուցիչի «Առողջապահական» ցուցանիշի, ՀՀ-ն զբաղեցնում է 148-րդ հորիզոնականը:

**Կանանց քաղաքական մասնակցության կապակցությամբ նշենք, որ,** ըստ վերոնշյալ ցուցիչի «Քաղաքացական մասնակցության» ցուցանիշի, ՀՀ-ն զբաղեցնում է 115-րդ հորիզոնականը: Որևէ մակարդակում (օրենսդիր, գործադիր, դատական) չի ապահովվում որոշումների կայացման համար կրիտիկական համարվող 30% մասնակցության շեմը: Խնդիրն առավել արտահայտված է ՏԻՄ-երում, հատկապես՝ համայքների խոշորացումից հետո:

Վերանայման կարիք ունի նաև նոր գենդերային ռազմավարության նախագիծը, քանի որ վերջինիս արդյունքային ցուցանիշների ճնշող մեծամասնությունը չափելի չէ:

# I. ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

## 1. ԿԱՆԱՆՑ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ ՉԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ

ՀՀ-ում կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմը Խորհուրդն է, որի ստեղծումը և գործունեությունը կարգավորող իրավական ակտերը ՀՀ վարչապետի N 1152-Ս և N 178-Ս որոշումներն են:<sup>2</sup> Սակայն, **Խորհուրդը չի հանդիսանում միջազգային չափանիշներին համապատասխանող ազգային մեխանիզմ:**

Միջազգային պարտավորությունների շարքում անկյունաքարային նշանակություն ունեն Կոնվենցիան<sup>3</sup> և վերջինիս վերահսկիչ մարմնի՝ **Կոմիտեի, Եզրափակիչ դիտարկումները**՝ «Կոմիտեն կոչ է անում ՀՀ-ին՝ ք) ընդարձակել Խորհրդի հնարավորությունները՝ կանանց և տղամարդկանց համար հավասար իրավունքներ և հավասար հնարավորություններ ապահովելու համար, որպեսզի այն կարողանա ավելի արդյունավետ իրականացնել և վերահսկել գենդերային հավասարության վերաբերյալ թեմատիկ ծրագրեր, համակարգել այդ ծրագրերի իրականացմամբ զբաղվող հաստատությունների գործունեությունը, ապահովել, որ գենդերային խնդիրները քննարկվեն բոլոր պետական գերատեսչություններում, և իրականացնել կանանց վիճակի բարելավման ազգային մեխանիզմի գործառույթը, գ) ավելացնել Խորհրդին կից գործող կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման աշխատանքային խմբի և գենդերային հարցերով տարածքային հանձնաժողովների մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները»:<sup>4</sup>

<sup>2</sup> ՀՀ վարչապետի N 1152-Ս որոշումը «ՀՀ-ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով խորհուրդ ստեղծելու և ՀՀ վարչապետի 2000 թվականի դեկտեմբերի 29-ի N 862 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», ընդունված՝ 19.11.2014թ., հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=98101>, ՀՀ վարչապետի N 178-Ս որոշումը «ՀՀ-ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով խորհրդի անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու մասին», ընդունված՝ 09.03.2015թ., հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112013>:

<sup>3</sup> «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա, Միավորված ազգերի կազմակերպություն, Պայմանագրերի շարք [Treaty Series], հատոր 1249, թիվ 20378, ընդունված՝ 1979թ.-ի դեկտեմբերի 18-ին, Նյու Յորք քաղաքում, ՀՀ-ի կողմից վավերացված՝ 13.10.1993թ.-ին, հոդված 3, հայերեն լեզվով հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60505>:

<sup>4</sup> «ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի՝ Հայաստանի Հանրապետության կողմից կատարման վերաբերյալ 5-րդ և 6-րդ համատեղ պարբերական գեկույցի» Եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե, ընդունված 2016 թվականի նոյեմբերի 25-ին, CEDAW/C/ARM/CO/5-6, պարբերություն 13, հասանելի է՝ <https://undocs.org/CEDAW/C/ARM/CO/5-6>:

Բացի այդ, **Կոմիտեի «Արդյունավետ ազգային մեխանիզմ և հրապարակայնություն» վերտառությամբ**<sup>5</sup> թիվ 6 Ընդհանուր Հանձնարարականով սահմանված է՝ «Պետությունները պարտավոր են Կառավարական բարձր մակարդակներում ստեղծել և/կամ ամրապնդել ազգային մեխանիզմներ, ինստիտուտներ կամ ընթացակարգեր, որոնք ունեն համապատասխան ռեսուրսներ, պարտավորություններ և լիազորված են. ա) խորհուրդ տալ կանանց նկատմամբ բոլոր պետական քաղաքականությունների ազդեցության վերաբերյալ, բ) համակողմանիորեն մոնիթորինգի ենթարկել կանանց իրավիճակը, գ) օգնել նոր քաղաքականությունների ձևակերպմանը և կանանց նկատմամբ խտրականության վերացմանն ուղղված ռազմավարությունների և միջոցների արդյունավետ իրականացմանը»:<sup>5</sup>

Կանանց իրավունքների պաշտպանության հարցում մեկ այլ կարևորագույն փաստաթղթով՝ **Պեկինյան հռչակագրով և Գործողությունների ծրագրով**, սահմանված է. «201. Կանանց դրության բարելավման ազգային մեխանիզմը կառավարության ներսում քաղաքականությունների գենդերային ուղղորդման կենտրոնական միավորն է: Դրա հիմնական խնդիրը կառավարությանը բոլոր քաղաքականությունների բնագավառներում գենդերային հավասարության հեռանկարների լայնածավալ աջակցությունն է: Նման ազգային մեխանիզմի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ պայմանները ներառում են՝ 1. Կառավարությունում հնարավորինս բարձր մակարդակում գտնվելը, որն ընկնում է Վարչապետի պատասխանատվության ներքո, 2. Ինստիտուցիոնալ մեխանիզմների կամ գործընթացների առկայությունը, որոնք համապատասխանաբար նպաստում են ապակենտրոնացված պլանավորմանը՝ նպատակ ունենալով ներգրավել հասարակական կազմակերպություններին և համայնքային կազմակերպություններին՝ համաձայն ներքնից վերն սկզբունքին, 3. Բյուջեի և մասնագիտական կարողությունների բավարար ռեսուրսների առկայությունը, 4. Բոլոր պետական քաղաքականությունների ձևավորման վրա ազդելու հնարավորությունը: Պեկինյան գործողությունների ծրագիրը սահմանում է «Կանանց դրության բարելավման ինստիտուցիոնալ մեխանիզմներ»-ի համար հետևյալ ռազմավարական նպատակները՝ «1. ազգային մեխանիզմների և ուրիշ կառավարական մարմինների ստեղծում կամ ամրապնդում, 2. օրենսդրությունների, պետական քաղաքականության, ծրագրերի և նախագծերի շրջանակներում գենդերային հայեցակետերի հաշվառում և 3. սեռի հատկանիշի կտրվածքով տվյալների ու տեղեկատվության հավաքում ու տարածում պլանավորման և

<sup>5</sup> «Արդյունավետ ազգային մեխանիզմ և հրապարակայնություն» վերտառությամբ Ընդհանուր հանձնարարական թիվ 6, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե, ընդունված 1988 թ.-ին 8-րդ նստաշրջանում, հասանելի է անգլերեն լեզվով՝ [https://tbinternet.ohchr.org/Treaties/CEDAW/Shared%20Documents/1\\_Global/INT\\_CEDAW\\_GEC\\_5828\\_E.pdf](https://tbinternet.ohchr.org/Treaties/CEDAW/Shared%20Documents/1_Global/INT_CEDAW_GEC_5828_E.pdf) f:

գնահատման նպատակներով»: Առաջին ռազմավարական նպատակին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ գործողությունները. «203. ա) միջոցներ ձեռնարկել, որպեսզի կանանց առաջխաղացումը գտնվի կառավարության բարձր օղակների ուշադրության կենտրոնում, շատ դեպքերում այդպիսի օղակ է հանդիսանում Վարչապետը, բ) հիմք ընդունելով ուժեղ քաղաքական կամքը՝ ստեղծել կանանց դրության բարելավման նոր ազգային մեխանիզմներ կառավարության ամենաբարձր մակարդակում այն երկրներում, որտեղ դրանք բացակայում են, և հզորացնել արդեն իսկ գոյություն ունեցող մեխանիզմները. այն պետք է ունենա հստակ սահմանված մանդատ և լիազորություններ, օժտված լինի բավարար ռեսուրսներով և քաղաքականությունների վրա ազդեցություն գործելու և օրենսդրություն կազմելու ու վերանայելու կարողությամբ, պետք է օժտված լինի նաև քաղաքականության վերլուծության, ջատագովության, հաղորդակցության, համակարգման և քաղաքականության կատարման մշտադիտարկման իրականացման կարողություններով, գ) իրականացնել անձնակազմի՝ տվյալների մշակման և վերլուծության վերապատրաստման դասընթացներ՝ գենդերային տեսանկյունից, դ) մշակել ընթացակարգեր, որոնք հնարավորություն կընձեռեն նշյալ մեխանիզմին հավաքագրել տեղեկատվություն կառավարության բոլոր քաղաքականությունների խնդիրների վերաբերյալ քաղաքականության մշակման սկզբնական փուլում և շարունակաբար օգտագործել այն քաղաքականությունների մշակման և կառավարության ներսում վերանայումների ժամանակ, ե) կանոնավոր կերպով զեկուցել օրենսդիր մարմիններին գենդերային ուղղորդմանն ուղղված իր կողմից գործադրած ջանքերի առաջընթացի վերաբերյալ՝ սույն Գործողությունների ծրագրի իրականացումը, զ) խրախուսել և աջակցել հանրային, մասնավոր և կամավորական հատվածների լայն և տարբեր շարքերի ինստիտուցիանալ դերակատարների ակտիվ ներգրավվումը կանանց և տղամարդկանց հավասարության ապահովման գործընթացում»:<sup>6</sup>

**Վերլուծելով միջազգային պարտավորությունները՝ պարզ է դառնում, որՍ**

**1. Թե՛ Խորհրդի, թե՛ Աշխատանքային խմբի կազմերը բավականին միատարր են և չեն ներառում որևէ ներկայացուցիչ հասարակական կամ ակադեմիական սեկտորից:** Այսպես, Խորհրդի կազմի մեջ են մտնում ՀՀ վարչապետը, 4 նախարարներ, 9 փոխնախարարներ, ոստիկանության պետի տեղակալը և կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետը, և Խորհրդի կազմի մեջ, իրենց համաձայնությամբ, մտնում են նաև Ազգային

<sup>6</sup> «Պեկինյան գործողությունների ծրագիր», Ընդհանուր վեհաժողովի բանաձև թիվ S-23/2, հավելված, և բանաձև թիվ S-23/3, հավելված, ընդունված 1995 թ. սեպտեմբերի 15-ին Պեկինում: Փաստաթուղթն անգլերեն լեզվով հասանելի է՝ <http://www.un.org/womenwatch/daw/beijing/pdf/BDPfA%20E.pdf>, պարբերություններ 196-209, հայերեն լեզվով ամփոփագիրն հասանելի է՝ [http://www.un.am/up/file/Beijing-Decl\\_PLAT\\_ARM.pdf](http://www.un.am/up/file/Beijing-Decl_PLAT_ARM.pdf):

ժողովի պատգամավորը, ՎՃճԲԵԿ դատարանի դատավորը և ՀՀ Նախագահի աշխատակազմի ներման, քաղաքացիության, պարզների և կոչումների վարչության պետը, իսկ Խորհրդին կից Աշխատանքային խմբի կազմում ընդգրկված են կառավարության աշխատակազմի երկու աշխատակից, 13 նախարարությունների և գերատեսչությունների աշխատակիցներ, ինչպես նաև, իրենց համաձայնությամբ, մեկական աշխատակից Ազգային ժողովի, Երևանի քաղաքապետարանի և Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի աշխատակազմերից: Մինչդեռ, հասարակական կազմակերպություններից և հետազոտական ու ակադեմիական կառույցներից ներկայացվածությունն ապահովված է Վարչապետին կից մի շարք այլ խորհուրդներում, օրինակ՝ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և այլն: Ավելին, վերջիններս նույնիսկ չեն հանդիսանում Աշխատանքային խմբի անդամներ, այլ ուղղակի կարող են մասնակցել դրա նիստերին: Բացի այդ, որևէ իրավական ակտով սահմանված չէ, թե ինչ չափանիշների հիման վրա են ընտրվում Աշխատանքային խմբի նիստերին հրավիրված քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, և կարգավորված չէ մարզերից ներկայացվածության ապահովման հարցը:

**2. Խորհուրդն արդյունավետ չի աշխատում, և վերջինիս գործունեությունը չունի իրական ներազդեցություն ՀՀ-ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման տեսանկյունից:** Նախ և առաջ, Խորհրդի կանոնադրության 3-րդ գլխի 13-րդ կետը սահմանում է. *«Խորհրդի աշխատանքները կազմակերպվում են նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են խորհրդի նախագահի կողմից ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան յուրաքանչյուր չորս ամիսը մեկ անգամ:* Հետևաբար, սահմանված է տարեկան ընդամենը 3 անգամ նիստերի անցկացման նվազագույն շեմ: Ավելին, թե՛ Խորհրդի, թե՛ Աշխատանքային խմբի բոլոր անդամներն ունեն իրենց շուրջօրյա պարտավորություններն ու առաջնահերթություններն իրենց աշխատավայրերում, որի արդյունքում նվազում է վերջիններիս կողմից նախաձեռնություններով հանդես գալու և ակտիվ աշխատանքային գրաֆիկ ունենալու հավանականությունը: Այդ մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ կազմավորումից ի վեր՝ տարիների ընթացքում, թե՛ Խորհուրդը, թե՛ աշխատանքային խումբը, գումարել են ընդամենը մի քանի նիստ:

**3. Թեև Խորհուրդն ունի իրեն կից Աշխատանքային խումբ, սակայն ո՛չ Խորհուրդը և ո՛չ էլ Աշխատանքային խումբը չունեն բավարար մարդկային, ֆինանսական ռեսուրսներ և փորձագիտական ներուժ, քանի որ չունեն աշխատակազմ և գեներային հարցերով փորձագետներ:**

**4. Խորհուրդը չունի հանրային լայն ճանաչում:** Ավելին, վերջինս այն նույնիսկ չունի պաշտոնական ինտերնետային էջ, իսկ ՀՀ կառավարության պաշտոնական կայքէջի

«Խորհուրդներ» բաժնում բացակայում է Խորհրդի վերաբերյալ տեղեկատվությունը: Խորհրդի աշխատակարգը սահմանում է. *«Խորհրդի խնդիրն է, սերտորեն համագործակցելով քաղաքացիական հասարակության աշխատանքային խմբի նիստի ինստիտուտների հետ, հետևել «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթների ապահովմանը»*<sup>7</sup>: Սակայն, քաղաքացիական հասարակության ինստիտուտներից շատերը տեղյակ չեն լինում նիստերից:

**5. Խորհուրդը չունի լիազորությունների լայն շրջանակ.** Մասնավորապես, այն գործնականում չի հանդիսանում գենդերային քաղաքականությունների կենտրոնացված համակարգման միավոր և չի իրականացնում գենդերային քաղաքականությունների, թեմատիկ ծրագրերի և օրենսդրական ակտերի կապված ուղղորդում ու փորձաքննություն նախքան դրանց ընդունումը և արդեն իսկ գործող քաղաքականությունների ազդեցության գնահատում, դրանց իրականացում և/կամ դրանց իրականացման նկատմամբ համակողմանի վերահսկողություն, այդ թվում՝ ապահովում, որ գենդերային խնդիրները քննարկվեն բոլոր պետական գերատեսչություններում:

**6. Խորհուրդը չի համակարգում գենդերային հարցերով զբաղվող այլ մարմինների աշխատանքները,** որոնք են ՄԻՊ կանանց իրավունքների հարցերով խորհրդականը, «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով սահմանված պատասխանատուների<sup>8</sup>, ՀՀ մարզպետարաններում և Երևանի քաղաքապետարանում գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովների, Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերում գործող գենդերային հարցերով զբաղվող աշխատանքային խմբերի և այլ շահագրգիռ կողմերի աշխատանքները:

#### **7. Նախատեսված չեն Խորհրդի հաշվետվողականության մեխանիզմներ:**

Խորհրդին է նվիրված **Միջոցառումների ծրագրի նախագծով** նախատեսված հետևյալ միջոցառումը՝ *«ՀՀ վարչապետի 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1152-Ս որոշման մեջ*

<sup>7</sup> «ՀՀ-ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով խորհրդի անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու մասին», ՀՀ վարչապետի N 178-Ս որոշում, ընդունված՝ 09.03.2015թ., 5-րդ կետ, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112013>:

<sup>8</sup> «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք՝ ՀՕ-320-Ն, ընդունված 13.12.2017թ., հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118672>:

փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի մշակում, իսկ որպես ակնկալվող արդյունք՝ «Կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմի ամրապնդում»:<sup>9</sup> Հարկ է նշել, որ նման ձևակերպումն անորոշ է և իր մեջ չի պարունակում այդ կապակցությամբ վերոնշյալ միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված կոնկրետ քայլեր, որոնք կբարձրացնեն Խորհրդի արդյունավետությունը:

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- i. Դիտարկել Խորհրդի՝ որպես կանանց դրության բարելավման ազգային մեխանիզմի, վերանայման նպատակահարմարության հարցը՝ ստեղծելով կա՛մ ամբողջապես նոր մեխանիզմ, կա՛մ Խորհուրդը վերափոխելով իրապես և արդյունավետ գործող մեխանիզմի: Ցանկացած պարագայում **անհրաժեշտ է ստեղծել կանանց դրության բարելավման ազգային մեխանիզմ, որը կլինի մշտապես գործող կառույց, օրինակ՝ կառավարության աշխատակազմում Կանանց հարցերով քարտուղարություն:**
- ii. Սահմանել ազգային մեխանիզմում քաղաքացիական հասարակայության և ակադեմիական և հետազոտական սեկտորներից մասնակիցների ներգրավման մրցութային և հրապարակային կարգ՝ հատկապես կարևորություն տալով կանանց իրավունքների ոլորտում վերջիններիս փորձառությանը և ՀՀ տարբեր մարզերի ներկայացվածության ապահովմանը:
- iii. Որպես ազգային մեխանիզմի լիազորություններ սահմանել գենդերային քաղաքականությունների, թեմատիկ ծրագրերի և օրենսդրական ակտերի կապված ուղղորդումը ու փորձաքննությունը՝ նախքան դրանց ընդունումը և արդեն իսկ գործող քաղաքականությունների ազդեցության գնահատում, դրանց իրականացում և/կամ դրանց իրականացման նկատմամբ համակողմանի վերահսկողություն, այդ թվում՝ ապահովում, որ գենդերային խնդիրները քննարկվեն բոլոր պետական գերատեսչություններում:
- iv. Բարելավել ցանկացած իրավական ակտի ընդունումից առաջ վերջիններիս պարտադիր գենդերային փորձաքննության անցկացման համակարգը՝ նախատեսելով ոլորտային փորձագետների ակրեդիտացիոն համակարգ:

<sup>9</sup> «ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ որոշման նախագիծ, Հավելված 2, մշակող մարմին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հանրային քննարկման ժամանակաշրջան՝ 22.05.2019թ.-06.06.2019թ., N1 գերակայություն, N4 միջոցառում, հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/1712/about>:



- v. Սահմանել ազգային մեխանիզմի կողմից աշխատանքների կազմակերպման այնպիսի կարգ, որպեսզի բացառվի Խորհրդի և Աշխատանքային խմբի՝ նիստեր գրեթե չհրավիրելու՝ նախկինում տեղ գտած բացասական պրակտիկան:
- vi. Ազգային մեխանիզմի արդյունավետ և պրոֆեսիոնալ աշխատանքի ապահովման նպատակով տրամադրել աշխատակազմ, մասնավորապես՝ դրա կազմում ընդգրկել կանանց իրավունքների ոլորտային փորձագետներին:
- vii. Իրականացնել թեմատիկ դասընթացներ ազգային մեխանիզմի աշխատակազմի համար՝ կարողությունների զարգացման նպատակով:
- viii. Ազգային մեխանիզմի արդյունավետ և պրոֆեսիոնալ աշխատանքի ապահովման նպատակով սահմանել բյուջետային միջոցներ «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի առանձին տողով:
- ix. Իրականացնել իրազեկման արշավ՝ ազգային մեխանիզմի հանրային ճանաչելիության ապահովման նպատակով:
- x. Ստեղծել ազգային մեխանիզմի պաշտոնական էլեկտրոնային կայք, որտեղ տեղ կգտնեն կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների վերաբերյալ բոլոր ներպետական և միջազգային օրենսդրական ակտերը, միջազգային կառույցների կողմից տրված հանձնարարականները, դրանց կատարմանն ուղղված ներպետական, ինչպես նաև ստվերային և այլ զեկույցներ ու ոլորտային այլ փաստաթղթեր՝ ապահովելով նշյալ բոլոր փաստաթղթերի հայերեն թարգմանությունը:
- xi. Ապահովել ազգային մեխանիզմի կողմից Մարդու իրավունքների պաշտպանի կանանց իրավունքների հարցերով խորհրդականի, «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքով սահմանված պատասխանատուների, ՀՀ մարզպետարաններում և Երևանի քաղաքապետարանում գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովների, Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերում գործող գենդերային հարցերով զբաղվող աշխատանքային խմբերի և այլ շահագրգիռ կողմերի աշխատանքների համակարգումը:
- xii. Ապահովել ազգային մեխանիզմի հաշվետվողականությունը՝ ի թիվս այլնի նախատեսելով գենդերային ուղղորդմանն ուղղված իր կողմից իրականացված քայլերի վերաբերյալ Կանոնավոր կերպով զեկուցումների ներկայացում օրենսդիր մարմիններին:

## 2. ԱՌԿԱ ՉԷ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳ ԿԱՆԱՆՑ

### ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ-ում առկա չէ որևէ լրացուցիչ կրթության կայուն կառուցակարգ կանանց իրավունքների հարցերով զբաղվող իրավաբանների համար, որտեղ կդասավանդվեն, օրինակ, ՄԻԵԴ նախադեպերը, որոնք վերաբերում են կանանց սեփականության, ընտանեկան, վերարտադրողական, աշխատանքային և այլ իրավունքներին:

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

xiii. Ստեղծել լրացուցիչ կրթության կայուն կառուցակարգ կանանց իրավունքների հարցերով զբաղվող իրավաբանների համար, օրինակ՝ կանանց իրավունքների դպրոց:

## 3. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԻՆՔ ՉՈՒՆԵՆ ԱՆՎՃԱՐ

### ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Հանրային պաշտպանի կողմից ծառայությունների անվճար տրամադրման հիմքերի շարքին չի դասվում գենդերային խտրականությունը: Արդյունքում, գենդերային խտրականության ենթարկված անձինք չեն կարողանում ստանալ անվճար իրավաբանական օգնություն: Միջոցառումների ծրագրի նախագծի առաջին շրջանառված տարբերակով նախատեսված էր «Սեռի հատկանիշով պայմանավորված բռնության ենթարկված կանանց տրամադրվող անվճար իրավաբանական օգնության ծառայությունների համակարգի ներդրում» միջոցառումը<sup>10</sup>, որը բավարար չէր, քանի որ ներառում էր միայն բռնությունների դեպքերը, մինչդեռ գենդերային խտրականության կարելի է բախվել տարբեր հարաբերությունների ժամանակ, օրինակ՝ աշխատանքային, առողջապահության ոլորտներում և այլն: Սակայն, հարկ է նշել, որ նույնիսկ այդ տեքստով միջոցառումը դուրս է մնացել նախագծի գործող տարբերակից<sup>11</sup>:

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

<sup>10</sup> «ՀՀ-ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության իրականացման 2019-2023 թթ. ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, Հավելված 2, մշակող մարմին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հանրային քննարկման ժամանակաշրջան՝ 28.11.2018-13.12.2018թ., N1 գերակայություն, N6 միջոցառում, հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/1397/about>:

<sup>11</sup> «ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ որոշման նախագիծ, Հավելված 2, մշակող մարմին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հանրային քննարկման ժամանակաշրջան՝ 22.05.2019-06.06.2019, հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/1712/about>:

xiv. Նախատեսել անվճար իրավաբանական օգնության ծառայությունների տրամադրում գեղերային խտրականության ենթարկված անձանց ՀՀ հանրային պաշտպանի գրասենյակի կողմից՝ կատարելով համապատասխան օրենսդրական փոփոխություններ:

## II. ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### 1. ԿԱՆԱՅՔ ՉՈՒՆԵՆ ԻՐԵՆՑ ԽԱԽՏՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՐԾՈՒՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Մինչ փոփոխությունների կատարումը, խախտված աշխատանքային իրավունքների պաշտպանությամբ էր զբաղվում Աշխատանքի պետական տեսչությունը: Սակայն, 2013 թ.-ին ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի պետական տեսչությունը միաձուլման ձևով վերակազմակերպվեցին ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի Առողջապահական պետական տեսչության, որը, այնուհետև, անվանվեց ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմին, որն էլ, իր հերթին, վերակազմավորվել է ՀՀ կառավարությանը ենթակա առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի և ներկայումս կարգավորվում է «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով<sup>12</sup>: Վերջինիս լիազորությունները խիստ սահմանափակ են և չեն ներառում աշխատանքային խտրականությունների դեմ պայքարը:

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

xv. Նախատեսել օրենսդրական փաթեթի ընդունում, որը կընդլայնի ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործառույթների և լիազորությունների շրջանակը՝ ներառելով սեռային հատկանիշով պայմանավորված աշխատանքի ընդունման և աշխատանքային այլ խտրականությունների և սեռական հետապնդումների դեպքերի ուսումնասիրում և միջոցների ձեռնարկում՝ աշխատողների խախտված իրավունքների պաշտպանության նպատակով:

### 2. ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ ՄԵՌԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄՆԵՐԸ (SEXUAL HARASSMENT) ԱՐԳԵԼՎԱԾ ՉԵՆ

Հայաստանում աշխատանքի վայրում սեռական բնույթի հետապնդման դեպքերը շատ հաճախ չեն բարձրաձայնվում, ինչը չի նշանակում, որ նման դեպքերը մեր իրողության մեջ բացակայում են, այլ պայմանավորված է, մի կողմից, պաշտպանության մեխանիզմների բացակայությամբ, քանի որ տուժողը վախենում է կորցնել աշխատանքը, և, մյուս կողմից, հասարակական կարծիքով և պիտակավորմամբ, քանի որ հասարակությունը հակված է դեպքի պատասխանատվությունը հիմնականում վերագրել տուժողին՝ կնոջը:

<sup>12</sup> «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենք՝ ՀՕ-254-Ն, ընդունված 17.12.2014թ.-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121903>:

Այնուամենայնիվ, առկա են նման դեպքերի հավաքագրած հետազոտություններ<sup>13</sup> և ՋԼՄ հաղորդագրություններ:<sup>14</sup> **Ռուսաստանում** անցկացված վիճակագրության համաձայն՝ աշխատող կանանց 100%-ը ենթարկվել է սեռական հետապնդումների իրենց ղեկավարների կողմից, 32%-ը նշել է, որ ունեցել է սեռական հարաբերություններ վերջիններիս հետ նվազագույնը մեկ անգամ, և 7%-ը նշել է, որ բռնաբարվել է:<sup>15</sup>

ՀՀ-ում աշխատավայրում սեռական հետապնդումների արգելքի վերաբերյալ օրենսդրական կարգավորումները չեն համապատասխանում **միջազգային պարտավորություններով սահմանված չափանիշներին**:

Այսպես, **Կոմիտեն իր Եզրափակիչ Դիտարկումներում** մտահոգություն է հայտնել սեռական հետապնդումների վերաբերյալ օրենսդրության բացակայության վերաբերյալ, և ՀՀ-ին հանձնարարվել է *«Ընդունել աշխատավայրում սեռական հետապնդումը սահմանող և արգելող օրենք և հաջորդ պարբերական զեկույցում ընդգրկել տեղեկություններ գրանցված սեռական ոտնձգության դեպքերի, քրեական հետապնդումների, հանցագործների նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցների և դատավճիռների մասին»*<sup>16</sup>:

**Կոմիտեի թիվ 12 Ընդհանուր Հանձնարարականն** առաջին փաստաթուղթն է, որն ամրագրում է պետությունների կողմից կանանց ամենօրյա կյանքում հանդիպող ցանկացած բռնությունից պաշտպանելու իրավական մեխանիզմներ մշակելու անհրաժեշտությունը՝ այդ թվում սեռական հետապնդումից աշխատավայրում:<sup>17</sup>

**Կոմիտեի թիվ 19 Ընդհանուր Հանձնարարականն** «աշխատավայրում սեռական հետապնդում» եզրույթը սահմանում է հետևյալ կերպ. *«սեռական բնույթ ունեցող այնպիսի անցանկալի վարքագիծ, ինչպիսիք են ֆիզիկական շփումները և առաջարկները, սեռական բնույթ ունեցող ակնարկները, պոռնոգրաֆիայի ցուցադրումը և սեռական բնույթ կրող*

---

<sup>13</sup> «Սեռական բնույթի հետապնդումները աշխատավայրում որպես կանանց մասնագիտական առաջընթացը խոչընդոտող գործոն. Հայաստանում արդի իրավիճակի ուսումնասիրություն», Հավելված 1, Գենդերային հետազոտությունների և առաջնորդության ԵՊՀ կենտրոն, Նվարդ Մելքոնյան, Յուլիանա Մելքումյան, Երևան, 2015թ., էջեր 52-56, հասանելի է <http://www.yasu.am/files/Nvard%20Melkonyan%20and%20Yuliana%20Melkumyan-arm.pdf>:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում, էջեր 20-21:

<sup>15</sup> Blomfield, Adrian (29 Jul 2008). "Sexual harassment okay as it ensures humans breed, Russian judge rules." The Daily Telegraph. Retrieved on 09 09 2015.

<sup>16</sup> «ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի Հայաստանի Հանրապետության կողմից կատարման վերաբերյալ 5-րդ և 6-րդ համատեղ պարբերական զեկույցի» Եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականությունների բոլոր ձևերի վերացման կոմիտե, ընդունված՝ 2016 թվականի նոյեմբերի 25-ին, CEDAW/C/ARM/CO/5-6, պարբերություն 25 (e), հասանելի է <https://undocs.org/CEDAW/C/ARM/CO/5-6>:

<sup>17</sup> «Կանանց նկատմամբ բռնությունը» վերտառությամբ Ընդհանուր հանձնարարական թիվ 12, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե, ընդունված է 1989 թ.-ին 8-րդ նստաշրջանում, հասանելի է <https://www.ohchr.org/en/hrbodies/cedaw/pages/recommendations.aspx>:

պահանջների ներկայացումը բառերով կամ գործողություններով: Այսպիսի վարքագիծը կարող է նվաստացուցիչ լինել և առաջացնել առողջության և անվտանգության հետ կապված խնդիրներ: Այն առաջացնում է խտրականություն, երբ կինն ունի հիմնավոր պատճառներ հավատալու համար, որ իր մերժումը անբարենպաստ պայմաններ է ստեղծելու իր համար աշխատավայրում՝ ներառյալ կադրերի հավաքագրման կամ առաջխաղացման հարցում, կամ ստեղծելու է թշնամական աշխատանքային միջավայր»<sup>18</sup>:

ԱՄԿ-ն 2019թ.-ին ընդունել է «Աշխատավայրում բռնության և հետապնդումների վերացմանն» ուղղված կոնվենցիան, որը վերաբերում է հանրային և մասնավոր ոլորտին, իր գործողությունը տարածում է ինչպես աշխատողների, այնպես էլ աշկերտների, աշխատողների, ում աշխատանքային պայմանագիրը լուծվել է, և աշխատանք փնտրողների վրա, ինչպես նաև պետությունների վրա դրվում է խնդրո առարկայի մշտադիտարկման պարտականություն<sup>19</sup>:

ԵՄ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիան ևս արգելում է սեռական հետապնդումները՝ սահմանելով դրանք որպես *«խոսքային, ոչ խոսքային կամ ֆիզիկական գործողությամբ դրսևորվող սեքսուալ բնույթի ցանկացած վարքագիծ, որը նպատակ ունի՝ խոցելու անձի արժանապատվությունը, կամ հանգեցնում է դրան, մասնավորապես՝ ահաբեկման, թշնամական, նվաստացուցիչ, ստորացնող կամ վիրավորական մթնոլորտ ստեղծելու միջոցով»*<sup>20</sup> Կարևոր է նշել, որ «սեռական հետապնդում» սովորաբար նշանակում է շարունակական գործողություն, որի անհատական տարրերը, առանձին վերցված, պարտադիր չէ, որ պատժելի լինեն: Բացի այդ, սեռական հետապնդումները, որոնք, որպես կանոն, տեղի են ունենում աշխատավայրում, կարող են տեղի ունենալ նաև այլ վայրերում: Այսինքն, աշխատանքային իրավահարաբերություններում գտնվելը չի հանդիսանում սեռական հետապնդումների պարտադիր տարր, ուստի

<sup>18</sup> «Կանանց նկատմամբ բռնությունը» վերտառությամբ Ընդհանուր հանձնարարական թիվ 19, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե, ընդունված է 1992 թ.-ին 11-րդ նստաշրջանում, 11-րդ հոդվածի 18-րդ կետ, հասանելի է <https://www.ohchr.org/en/hrbodies/cedaw/pages/recommendations.aspx>:

<sup>19</sup> «Աշխատավայրում բռնության և հետապնդումների վերացմանն ուղղված կոնվենցիա», N C190, ԱՄԿ, ընդունված է 21.06.2019 թ.-ին, 108-րդ նստաշրջան, Ժնև, հասանելի է՝ [https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO::P12100\\_ILO\\_CODE:C190](https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO::P12100_ILO_CODE:C190):

<sup>20</sup> «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիա, ԵՄ, Treaty Series N 210, ընդունված է 11.05.2011թ.-ին, Ստամբուլ, 40-րդ հոդված, հայերեն լեզվով հասանելի է՝ <https://rm.coe.int/168046246d>:

անհրաժեշտ է օրենսդրությամբ անդրադարձ կատարել ցանկացած միջավայրում դրա դրսևորումներին:<sup>21</sup>

**«Աշխատանքի և զբաղվածության հետ կապված հարցերում հավասար հնարավորությունների և տղամարդկանց ու կանանց նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքը կիրարկելու մասին» ԵՄ հրահանգը** սահմանում է՝ *«պետությունները պետք է (...) խրախուսեն գործատուներին և մասնագիտական վերապատրաստման մատչելիության համար պատասխանատու անձանց ձեռնարկել արդյունավետ միջոցներ սեռի հիմքով խտրականության բոլոր ձևերը, մասնավորապես՝ աշխատավայրում ունեցվածությունը և սեռական ունեցվածությունն ու աշխատանքի, մասնագիտական վերապատրաստման և առաջխաղացման հարցերում խտրականության բոլոր ձևերը կանխելու նպատակով»:*<sup>22</sup>

**189 երկրներից 59 երկիր չունի աշխատավայրում սեռական հետապնդումների արգելքի վերաբերյալ օրենսդրություն:**<sup>23</sup> Տարբեր երկրներ սեռական հետապնդումների արգելքը սահմանում են տարբեր օրենսդրություններով՝ քրեական, աշխատանքային կամ քաղաքացիական: Գոյություն ունեն լավագույն փորձի բազմաթիվ օրինակներ:

**Ֆրանսիան** ներկայումս սեռական հետապնդումը սահմանում է քրեական օրենսդրությամբ՝ որպես *«որևէ մեկին պարբերաբար այնպիսի խոսքեր լսելուն կամ գործողությունների ենթարկվելուն հարկադրելը, որոնք ունեն սեքսուալ բնույթ»* կամ *«որոնք ազդում են անձի արժանապատվության վրա, որովհետև իրենց բնույթով նվաստացնող կամ ստորացնող են»* կամ *որոնք անձին դնում են «ահաբեկված, թշնամական կամ վիրավորական վիճակում»:*<sup>24</sup>

**ԱՄՆ** օրենսդրությամբ արգելվում են սեռական հետապնդումները, և աշխատանքային հարաբերությունների տեսանկյունից հետապնդողը կարող է լինել տուժողի ղեկավարը, այլ

---

<sup>21</sup> «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով սահմանված չափանիշների տեսանկյունից ՀՀ քրեական օրենսդրության վերլուծություն, Եվրոպայի խորհուրդ, հոկտեմբեր 2017, էջեր 33-34, հայերեն լեզվով հասանելի է <https://rm.coe.int/gap-analysis-armenian-law-arm/168075bae2>:

<sup>22</sup> «Աշխատանքի և զբաղվածության հետ կապված հարցերում հավասար հնարավորությունների և տղամարդկանց ու կանանց նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքը կիրարկելու մասին» հրահանգ, Եվրոպական խորհրդարան և խորհուրդ, ընդունված է 2006 թ.-ի հուլիսի 5-ին, 2006/54/ԵՀ հրահանգ, հոդված 26, հասանելի է՝ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A32006L0054>, տե՛ս նաև՝ ԵՄ 202/73/EC հրահանգ:

<sup>23</sup> “Women, Business and the Law 2018,” World Bank, March 29, 2018, [HTTPS://WBL.WORLDBANK.ORG/EN/REPORTS#](https://wbl.worldbank.org/en/reports#).

<sup>24</sup> Ֆրանսիայի քրեական օրենսգիրք, հոդվածներ 222-233, հասանելի է՝ [www.legifrance.gouv.fr/](http://www.legifrance.gouv.fr/):

ուղորտում ղեկավար, գործընկերը կամ այլ անձ, ով աշխատողի գործատուն չէ, օրինակ՝ հաճախորդը:<sup>25</sup>

**Հունաստանի** օրենսդրությամբ սեռական հետապնդումները աշխատավայրում սեռով պայմանավորված սեռական խտրականության տեսակ են հանդիսանում, իսկ սեռական հետապնդման ենթարկված անձինք փոխհատուցման իրավունք ունեն:<sup>26</sup>

«**Human Rights Watch**» կազմակերպությունը մշակել է աշխատավայրում սեռական հետապնդման դեմ պայքարի վերաբերյալ ստանդարտներ:<sup>27</sup>

**ՀՀ քրեական օրենսգիրքը** սեռական հետապնդումների վերաբերյալ դրույթներ չի պարունակում, այլ միայն վերջինիս 140-րդ հոդվածը նախատեսում է՝ «1. *Անձին սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի, այդ թվում՝ համասեռական գործողություններ կատարելուն հարկադրելը շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ տուժողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով (...)* պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով»:<sup>28</sup> Նշյալ կարգավորումը պատասխանատվություն է նախատեսում միայն սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողությունների համար, իսկ սեռական այնպիսի հետապնդումների հանդեպ, ինչպիսիք են, օրինակ, աշխատավայրում անպարկեշտ առաջարկներ անելը, տվյալ հոդվածի իրավաբանական ուժը չի տարածվի: Բացի այդ, այս հոդվածը կարող է մեկնաբանվել նեղ, օրինակ՝ նախատեսել պատասխանատվություն միայն անմիջական ղեկավարի կողմից սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողությունների համար, իսկ նույն աշխատավայրում ոչ անմիջական ղեկավարության ներքո և/կամ հորիզոնական հարաբերություններում գտնվող աշխատակիցները կամ նույնիսկ հաճախորդները սեռական հետապնդումներ կատարելիս չեն հանդիսանա տվյալ հանցակազմի սուբյեկտ:

**«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը** նկարագրում է գենդերային խտրականությունը՝ անդրադարձ կատարելով նաև սեռական հետապնդումներին՝ օգտագործելով «սեռական ոտնձգություն» եզրույթը: Սակայն, այդ հոդվածներն ունեն

<sup>25</sup> Civil Rights Act of 1964, Title VII, Pub. L. 88-352, available at: <https://www.eeoc.gov/laws/statutes/titlevii.cfm> Code of Federal Regulations, volume 4, Title 29 – Labor, Date: 2016-07-01 part 1604 guidelines on discrimination because of sex, section 1604.11 Sexual harassment, available at: <https://www.govinfo.gov/content/pkg/CFR-2016-title29-vol4/xml/CFR-2016-title29-vol4-part1604.xml>, see also: [http://www.eeoc.gov/laws/types/sexual\\_harassment.cfm](http://www.eeoc.gov/laws/types/sexual_harassment.cfm)

<sup>26</sup> Law 3488/2006: Framework on Equal Treatment of Men and Women (O.G.A.'191):

<sup>27</sup> “Ending Violence and Harassment at Work The Case for Global Standards”, «Human Rights Watch», May 2018, հասանելի է՝ [https://www.hrw.org/sites/default/files/news\\_attachments/2018\\_hrw\\_ilo\\_brochure.pdf](https://www.hrw.org/sites/default/files/news_attachments/2018_hrw_ilo_brochure.pdf)

<sup>28</sup> ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, ընդունված՝ 18.04.2003թ., հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132721>



դեկլարատիվ բնույթ, քանի որ որևէ պատժամիջոց նախատեսված չէ: Թեև օրենքը նախատեսում է խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու համար իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց պաշտպանության հնարավորություն, սակայն վերջինիս իրացման մեխանիզմները և գործընթացները դեռևս կյանքի չեն կոչվել: Բացի այդ, օրենքը չի նախատեսում սեռական հետապնդումների գոհերի համար փոխհատուցում ստանալու հնարավորություն:<sup>29</sup>

**ՀՀ աշխատանքային օրենսգրքով** բռնության վերաբերյալ նախատեսված է միայն 1 կարգավորում. «*Աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունքներն են՝ ցանկացած ձևի (բնույթի) հարկադիր աշխատանքի և աշխատողների նկատմամբ բռնությունների արգելումը*».<sup>30</sup> Թեև շրջանառվել էր օրենքի նախագիծ, որն առաջարկում էր նշյալ նորմը լրացնել և սահմանել, թե ինչ է բռնությունը՝ «*այն է՝ նրանց ֆիզիկական և (կամ) հոգեկան և (կամ) սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված արարքի կամ դրա սպառնալիք*», սակայն, նախ, սեռական անձեռնմխելիության դեմ բռնության կատարումը ամրագրված էր որպես դեկլարատիվ բնույթ կրող սկզբունք՝ չնախատեսելով պատասխանատվություն խախտման դեպքում, և, բացի այդ, նշյալ նախագիծը կյանքի չկոչվեց<sup>31</sup>:

**Միջոցառումների ծրագրի նախագծի** առաջին շրջանառված տարբերակում նախատեսված էր «*Սեռի հատկանիշով պայմանավորված բռնության դեմ պայքարի թեմաներով (այդ թվում՝ աշխատավայրում բռնության) տեղեկատվական նյութերի պատրաստում և տարածում*» և որպես «Ակնկալվող արդյունք» նախանշված էր «*Հասարակությունում սեռի հատկանիշով պայմանավորված բռնության (այդ թվում՝ աշխատավայրում բռնության) երևույթի կանխարգելում, բռնության երևույթի հանդեպ անհանդուրժողականության միջավայրի ձևավորում*».<sup>32</sup> Թեև տրված լուծումն ամենևին էլ բավարար չէր աշխատավայրում բռնության, այդ թվում՝ սեռական հետապնդումների դեմ

<sup>29</sup> «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք, ՀՕ-57-Ն, ընդունված է 20.05.2013թ., հոդվածներ 3, մաս 1, կետ 21 և հոդված 6, մաս 2, կետ 3, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83841>:

<sup>30</sup> ՀՀ աշխատանքային օրենսգրք, ՀՕ-124-Ն, ընդունված է 09.11.2004թ., հոդված 3, մաս 1, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126314>:

<sup>31</sup> «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, մշակող մարմին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հանրային քննարկման ժամանակաշրջան՝ 24.10.2017թ.-08.11.2017թ., հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/494/about>:

<sup>32</sup> «ՀՀ-ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության իրականացման 2019-2023թթ. ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, Հավելված 2, մշակող մարմին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հանրային քննարկման ժամանակաշրջան՝ 28.11.2018թ.-13.12.2018թ., N6 գերակայություն, N5 միջոցառում, հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/1397/about>:

պայքարի համար, սակայն Միջոցառումների ծրագրի նախագծի ներկայիս տարբերակով նշյալ հարցին առհասարակ անդրադարձ չկատարելը<sup>33</sup> մեր կողմից գնահատվում է որպես մեկ քայլով հետընթաց:

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- xvi. ՀՀ օրենսդրությամբ սահմանել նորմեր, որոնք աշխատավայրում կրացառեն սեռական հետապնդումները,
- xvii. Նախատեսել համաչափ պատժամիջոցներ սեռական հետապնդումների համար,
- xviii. Սահմանել սեռական հետապնդումների գոհերի կողմից նմանատիպ միջադեպերի վերաբերյալ ազդարարման մեխանիզմներ,
- xix. Սահմանել սեռական հետապնդումների դեպքում ապացուցման բեռին վերաբերող իրավանորմեր՝ հաշվի առնելով առանձնահատկությունները,
- xx. Նախատեսել սեռական հետապնդումներից տուժողների համար փոխհատուցման մեխանիզմներ:

### 3. ՉԻ ՎԱՐՎՈՒՄ ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱՄՏՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ո՛չ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի, ո՛չ էլ որևէ այլ մարմնի գործառույթները չեն ներառում վիճակագրության հավաքագրում և վերլուծություն սեռով պայմանավորված աշխատանքային իրավունքների խախտումների վերաբերյալ:

Միջոցառումների ծրագրի նախագծով նախատեսված է «ՀՀ-ի սոցիալական, տնտեսական, պետական, քաղաքական գենդերային իրավիճակի վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության հավաքագրում և ամփոփում ըստ վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագիր» միջոցառումը, որի «Արդյունքային ցուցանիշներ»-ի վերլուծությունից պարզ է դառնում, որ այն առավելապես վերաբերում է պետական համակարգում կանանց և տղամարդկանց մասնակցությանը:<sup>34</sup> Մինչդեռ, Միջոցառումների ծրագրի նախագծի որևէ միջոցառում չի անդրադառնում կանանց աշխատանքային իրավունքների խախտման հարցերով վիճակագրությանը:

<sup>33</sup> «ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ որոշման նախագիծ, Հավելված 2, մշակող մարմին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հանրային քննարկման ժամանակաշրջան՝ 22.05.2019թ.-06.06.2019թ., հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/1712/about>:

<sup>34</sup> «ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ որոշման նախագիծ, Հավելված 2, մշակող մարմին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հանրային քննարկման ժամանակաշրջան՝ 22.05.2019թ.-06.06.2019թ., N5 գերակայություն, N11 միջոցառում, հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/1712/about>:

xxi. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործառույթների թվին դասել նաև վիճակագրական տվյալների հավաքագրումն աշխատողների պաշտպանված և վերականգնված իրավունքների վերաբերյալ, ներառյալ՝ սեռային հասկանիշով պայմանավորված, ինչպես նաև դատական պրակտիկայի ամփոփումը՝ համագործակցելով իրավասու մարմինների հետ:

#### 4. ՄԱՀՄԱՆՎԱԾ ՉԵՆ ԳՈՐԾՈՒՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ՝ ՈՒՂՂՎԱԾ ԸՆՏԱՆԻՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՄԱՏԵՂԵԼՈՒՆ

Պեկինյան գործողությունների ծրագրի «Կանայք և տնտեսությունը» բաժնի ռազմավարական նպատակներից է «Կանանց և տղամարդկանց աշխատանքային և ընտանեկան պարտականությունների հավասարակշռված բաշխման օժանդակությունը»:<sup>35</sup>

Միջոցառումների ծրագրի նախագծով նախատեսված են «Ընտանիքը և աշխատանքը համատեղելու կանանց հնարավորությունների ընդլայնմանն ուղղված պետական քաղաքականության վերլուծությունների իրականացում» (արդյունքային ցուցանիշներից՝ «Աշխատուժում կանանց մասնակցության բարձրացմանը, ընտանիքը և աշխատանքը համատեղելու հնարավորությունների ընդլայնմանն ուղղված առաջարկությունների փաթեթի, իրավական ակտերի առկայություն, օրենսդրական փոփոխությունների իրականացում») և «Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց՝ խնամքն աշխատանքի հետ համադրելու աջակցության ծրագրի իրականացում» (ակնկալվող արդյունք՝ «Կանանց համար աշխատանքային և ընտանեկան պարտականությունները համատեղելու համար նպաստավոր պայմանների ձևավորում, աշխատանքն ու երեխայի/ընտանիքի խնամքը համադրելու հնարավորությունների ընդլայնում») միջոցառումները,<sup>36</sup> որոնք խիստ ընդհանուր են և հնարավորություն չեն տալիս հասկանալ, թե պետությունը կոնկրետ ինչ խնդիրներ է պատրաստվում լուծել: Այս կապակցությամբ առանձնացրել ենք հետևյալ խնդիրները՝

1. Տղամարդկանց կողմից ծնողական արձակուրդի օգտագործմանն ուղղված հավելյալ երաշխիքներ առկա չեն: ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված է՝ «աշխատողի

<sup>35</sup> «Պեկինյան գործողությունների ծրագիր», Ընդհանուր վեհաժողովի բանաձև թիվ S-23/2, հավելված, և բանաձև թիվ S-23/3, հավելված, ընդունված է 1995 թ. սեպտեմբերի 15-ին Պեկինում: Փաստաթուղթն անգլերեն լեզվով հասանելի է՝ <http://www.un.org/womenwatch/daw/beijing/pdf/BDPfA%20E.pdf>, հայերեն լեզվով ամփոփագիրը հասանելի է՝ [http://www.un.am/up/file/Beijing-Decl\\_PLAT\\_ARM.pdf](http://www.un.am/up/file/Beijing-Decl_PLAT_ARM.pdf), էջ 20:

<sup>36</sup> «ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ որոշման նախագիծ, Հավելված 2, մշակող մարմին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հանրային քննարկման ժամանակաշրջան՝ 22.05.2019թ.-06.06.2019թ., N2 գերակայություն, N6 և N9 միջոցառումներ, հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/1712/about>:

պահանջով հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվող, ինչպես նաև մինչև մեկ տարեկան երեխային խնամելու համար արձակուրդում գտնվող կնոջ ամուսնուն իր պահանջով տրամադրվում է **չվճարվող արձակուրդ**»<sup>37</sup> Սակայն, **Կոմիտեի** կողմից **Եզրափակիչ դիտարկումներում** ՀՀ-ին տրվել է հանձնարարական՝ սահմանել տղամարդկանց կողմից ծնողական արձակուրդի օգտագործմանն ուղղված հավելյալ երաշխիքներ:<sup>38</sup> Միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այդ արձակուրդը մի շարք երկրներում վճարովի է, ինչը հնարավորություն է տալիս կանանց առանց խոչընդոտների կատարել իրենց աշխատանքային պարտականությունները: Այսպես, **Գերմանիայի** օրենսդրությամբ սահմանված են արտոնյալ դրույթներ, համաձայն որոնց՝ տղամարդկանց համար նախատեսվում է լրացուցիչ աշխատավարձի վճարում՝ երեխաների խնամատարության հարցը հանձն առնելու համար: **Մեծ Բրիտանիայում** նախատեսված է, որ երեխայի ծնվելուց հետո երեխայի հորը տրամադրվում է մինչև երկու շաբաթ տևողությամբ արձակուրդ, որի համար նախատեսված է վճարել 148 ֆունտ ստերլինգ կամ միջին շաբաթական աշխատավարձի 90%-ի չափով գումար: **Ֆինլանդիայում** հայրերի համար նախատեսված է երեխայի ծնվելու դեպքում մինչև 18 օր վճարովի արձակուրդի իրավունք: **Մոլդովայի** օրենսդրությամբ նախատեսված է, որ հայրերին տրամադրվում է 14 օր տևողությամբ արձակուրդ երեխայի ծնվելու դեպքում նորածնի խնամքի հարցում մայրերին օգնելու համար: **Էկվադորում** երեխայի ծնվելուց հետո հայրերի համար նախատեսված է մինչև 10 օր վճարովի արձակուրդի իրավունք, որը կարող է 5 օրով երկարաձգվել մեկից ավելի երեխաների ծնվելու դեպքում և 8 օրով՝ վաղաժամ և բարդ ծննդաբերության դեպքում:

2. ՀՀ-ում շատ գործատուներ ձևակերպում են փաստացի աշխատանքային գրաֆիկով աշխատող անձանց քաղաքացիաիրավական հարաբերություններում, որի արդյունքում կանայք հնարավորություն չեն ստանում օգտվել հղիության և մայրության համար օրենքով նախատեսված սոցիալական երաշխիքներից: Հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ առկա չեն մեխանիզմներ պարզելու համար՝ արդյոք կինն աշխատում է միայն պայմանագրով

<sup>37</sup> ՀՀ աշխատանքային օրենսգիրք, ՀՕ-124-Ն, ընդունված է 09.11.2004թ., հոդված 176, մաս 1, կետ 1, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126314>:

<sup>38</sup> «ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի Հայաստանի Հանրապետության կողմից կատարման վերաբերյալ 5-րդ և 6-րդ համատեղ պարբերական զեկույց»-ի Եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե, ընդունված է 2016 թվականի նոյեմբերի 25-ին, CEDAW/C/ARM/CO/5-6, պարբերություն 25 (c), հասանելի է՝ <https://undocs.org/CEDAW/C/ARM/CO/5-6>: Սույն հանձնարարականով ՀՀ-ին առաջարկվել է նաև «պատշաճ մանկապարտեզների բավարար քանակության ապահովում, ֆորմալ տնտեսությանը կանանց մուտքը հասանելի դարձնելու համար ոչ ֆորմալ տնտեսությունից ֆորմալ տնտեսության անցնելու մասին ծրագրի ընդունում՝ հստակ ժամկետների սահմանմամբ, ինչը բխում է 2015թ. ԱՄԿ թիվ 204 հանձնարարականից:

նախատեսված ծառայությունների մատուցման օրերին, թե ամբողջական աշխատանքային գրաֆիկով:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ **ՄԻՊ գրասենյակը** ևս բարձրաձայնել է այս արատավոր պրակտիկայի մասին. «Որոշ ՀԿ-ների կողմից գրանցվել են դեպքեր, որոնք վերաբերում են օրենքով նախատեսված հղիության և ծննդաբերության արձակուրդի և նպաստի իրավունքի իրականացման սահմանափակումներին: Մասնավորապես, արձանագրվել են դեպքեր, երբ աշխատանքային պայմանագրի փոխարեն կանանց հետ կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր, և արդյունքում նրանք զրկվել են իրավունքից՝ իրացնելու հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակաշրջանում իրենց աշխատավայրի պահպանման, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանալու իրավունքները»:<sup>39</sup>

Բացի այդ, **Պեկինյան գործողությունների ծրագրով** կառավարություններին հետևյալ հանձնարարականն է ներկայացվել. «Ընդունել քաղաքականություններ՝ ապահովելու աշխատանքային օրենսդրության և սոցիալական ապահովության նպաստների պաշտպանություն 0.5 դրույքով, ժամանակավոր, սեզոնային աշխատողների և տանից աշխատանքը կատարողների համար»:<sup>40</sup>

**Կոմիտեի Եզրափակիչ դիտարկմամբ** հանձնարարականն ունի հետևյալ տեսքը՝ «Երաշխավորել ոչ ֆորմալ (չգրանցված) հատվածում աշխատող կանանց համար սոցիալական ապահովության, մայրության և երեխայի խնամքի պաշտպանության հասանելիությունը»:<sup>41</sup>

Վերոնշյալ միջազգային հանձնարարականների վերլուծությունից պարզ է դառնում, որ դրանք հետապնդում են կանանց համար մայրանալու դեպքում բոլոր սոցիալական երաշխիքների ապահովման նպատակ: Ավելին, այդ երաշխիքների ապահովման պարտականությունը նախատեսում են ոչ միայն աշխատանքային պայմանագրի հիման վրա

<sup>39</sup> «ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի Հայաստանի Հանրապետության կողմից կատարման վերաբերյալ 5-րդ և 6-րդ համատեղ պարբերական զեկույցի» վերաբերյալ այլընտրանքային զեկույց, ՀՀ ՄԻՊ գրասենյակ, հասանելի է՝ [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CEDAW/C/ARM/CO/5-6&Lang=En](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CEDAW/C/ARM/CO/5-6&Lang=En):

<sup>40</sup> «Պեկինյան գործողությունների ծրագիր», Ընդհանուր վեհաժողովի բանաձև թիվ S-23/2, հավելված, և բանաձև թիվ S-23/3, հավելված, ընդունված՝ 1995 թ. սեպտեմբերի 15-ին Պեկինում, պարբերություն 179: Փաստաթուղթն անգլերեն լեզվով հասանելի է՝ <http://www.un.org/womenwatch/daw/beijing/pdf/BDPfA%20E.pdf>, հայերեն լեզվով ամփոփագիրը հասանելի է՝ [http://www.un.am/up/file/Beijing-Decl\\_PLAT\\_ARM.pdf](http://www.un.am/up/file/Beijing-Decl_PLAT_ARM.pdf):

<sup>41</sup> «ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի Հայաստանի Հանրապետության կողմից կատարման վերաբերյալ 5-րդ և 6-րդ համատեղ պարբերական զեկույց»-ի Եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե, ընդունված է 2016 թվականի նոյեմբերի 25-ին, CEDAW/C/ARM/CO/5-6, պարբերություն 25, հասանելի է՝ <https://undocs.org/CEDAW/C/ARM/CO/5-6>:

աշխատող կանանց համար, այլ այդ պարտավորությունը մեկնաբանում են շատ ավելի լայն՝ ներառելով բոլոր աշխատող կանանց՝ ներառյալ չգրանցված: Ուստի, ծառայությունների մատուցման պայմանագրով աշխատող կանանց համար նշյալ սոցիալական երաշխիքների ապահովումը նվազագույնն է, որ հարկավոր է կատարել այս փուլում:

**3. Հղի կանանց համար աշխատանքային հարաբերությունները պահպանելու հավելյալ երաշխիքներ սահմանված չեն:** Այսպես, ՀՀ աշխատանքային օրենսգիրքը սահմանում է. «աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ արգելվում է՝ հղի կանանց հետ՝ հղիության մասին գործատուին տեղեկանք ներկայացնելու օրվանից մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի ավարտման օրվանից հետո մեկ ամիսը լրանալը» և «աշխատանքային պայմանագիրը լուծվում է պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում»<sup>42</sup>: Այսինքն, նշյալ արգելքը նախատեսված է միայն անորոշ ժամկետով կնքված պայմանագրերի համար, քանի որ խոսքը գնում է գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելուն վերաբերող դրույթներին, որը չի տարածվում որոշակի ժամկետով կնքված պայմանագրերի վրա: Մինչդեռ, միջազգային պրակտիկայում սահմանված են հավելյալ աշխատանքային երաշխիքներ հղի կանանց համար, մասնավորապես՝ արգելվում է գործատուին խուսափել հղի կնոջ հետ որոշակի ժամկետով կնքված պայմանագրի ավարտից հետո երկարացնել վերջինիս գործողության ժամկետը միայն այն պատճառով, որ կինը հղի է: Այսպես, ԵՄ «Հղի աշխատողների և վերջերս ծննդաբերած կամ կրծքով կերակրող աշխատողների անվտանգության և առողջության բարելավմանն ուղղված միջոցների ներդրման մասին» հրահանգի<sup>43</sup> համաձայն՝ «պետություններն ընդունում են անհրաժեշտ միջոցներ՝ արգելելու աշխատողներին աշխատանքից ազատելը վերջիններիս հղիության սկզբից մինչև հղիության և հետծննդյան արձակուրդի ավարտն ընկած ժամանակահատվածում: ԵՄ արդարադատության դատարանը «Ջիմինեզ Մելգարն ընդդեմ Այունտամիենտո դը Լոս Բարրիոս» գործով<sup>44</sup> փաստել է. «Եթե որոշակի ժամկետով կնքված պայմանագրի ժամկետը երկարացնելուց հրաժարվելը պայմանավորված է աշխատողի հղիության փաստով, այն իրենից ներկայացնում է սեռի հիմքով պայմանավորված խտրականություն»: Թեև ԵՄ Խորհրդի հրահանգները և ԵՄ արդարադատության դատարանի

<sup>42</sup> ՀՀ աշխատանքային օրենսգիրք, ՀՕ-124-Ն, ընդունված է 09.11.2004թ., հոդվածներ 114, մաս 2, կետ 1 և 109, մաս 1, կետ 2, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126314>:

<sup>43</sup> «Հղի աշխատողների և վերջերս ծննդաբերած կամ կրծքով կերակրող աշխատողների անվտանգության և առողջության բարելավմանն ուղղված միջոցների ներմուծման մասին» հրահանգ 92/85/ԵՏՀ, Եվրոպական միություն, Խորհրդարան և Խորհուրդ, ընդունված է 1992 թ. հոկտեմբերի 19-ին, հոդված 10, հասանելի է՝ [http://www.translation-centre.am/pdf/Translat/EU\\_Direct/Social/DIR\\_92\\_85\\_am.pdf](http://www.translation-centre.am/pdf/Translat/EU_Direct/Social/DIR_92_85_am.pdf):

<sup>44</sup> *Jimenez Melgar v Ayuntamiento de Los Barrios*, European Court of Justice, 4 October 2001, Case C-438/99, հասանելի է՝ <http://curia.europa.eu/juris/showPdf.jsf?docid=102196&doclang=en>:

վճիռները ՀՀ-ի համար պարտադիր իրավաբանական ուժ չունեն, այնուամենայնիվ վերջիններս դիտվում են որպես առաջադեմ փորձ:

**4. Գործնականում աշխատող կերակրող մայրերի համար հարմարություններ չկան:**  
«Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» ՀՀ օրենքում սահմանված է. *«Կրծքով կերակրող կինն իրավունք ունի՝ ունենալու համապատասխան պայմաններ աշխատավայրերում, քրեակատարողական հիմնարկներում, առողջապահական կազմակերպություններում և այլ հասարակական վայրերում կրծքով կերակրելու համար»<sup>45</sup>*: Գործնականում այս նորմը չէր իրացվում, քանի որ բացակայում էին դրա համար նախատեսված պայմանները: Թեև գովելի է **Միջոցառումների ծրագրի նախագծով** *«Բարձրագույն կրթական և պետական հաստատություններում կերակրող մայրերի համար կերակրասենյակների նախատեսումը Երևան քաղաքում փորձնական ծրագրերի իրականացմամբ»* միջոցառման նախատեսումը<sup>46</sup>, սակայն նախատեսված չեն չափելի արդյունքային ցուցանիշներ առ այն, թե քանի բարձրագույն կրթական և քանի պետական հաստատություններում է նախատեսվում հիմնել նման կերակրասենյակներ:

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

- xxii. Փոփոխություններ կատարել ՀՀ աշխատանքային օրենսգրքում և նախատեսել ամուսնու համար վճարովի արձակուրդ երեխայի ծննդյան դեպքում,
- xxiii. Ապահովել նախադպրոցական հաստատությունների բավարար քանակություն,
- xxiv. Ֆորմալ տնտեսությանը կանանց մուտքը հասանելի դարձնելու համար ոչ ֆորմալ տնտեսությունից ֆորմալ տնտեսության անցնելու մասին ընդունել ծրագիր՝ հստակ ժամկետների սահմանմամբ,
- xxv. Հղի կանանց համար սահմանել հավելյալ աշխատանքային երաշխիքներ՝ արգելելով գործատուին խուսափել հղի կնոջ հետ որոշակի ժամկետով կնքված պայմանագրի ավարտից հետո երկարացնել վերջինիս գործողության ժամկետը միայն այն պատճառով, որ կինը հղի է,
- xxvi. Հղի աշխատող կանանց համար սահմանել հավելյալ սոցիալական երաշխիքներ, այն է՝ փաստացի աշխատանքային գրաֆիկով, սակայն քաղաքացիաիրավական

<sup>45</sup> «Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-177-Ն, ընդունված է 20.11.2014թ., հոդված 10, մաս 1, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120786>:

<sup>46</sup> «ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ որոշման նախագիծ, Հավելված 2, մշակող մարմին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հանրային քննարկման ժամանակաշրջան՝ 22.05.2019թ.-06.06.2019թ., N4 գերակայություն, N8 միջոցառում, հասանելի է <https://www.e-draft.am/projects/1712/about>:



ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա աշխատող կանանց համար օրենքով նախատեսված հղիության և մայրության համար արձակուրդի և ժամանակավոր անաշխատունակության նպաստների տրամադրում՝ համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարմամբ և փաստացի աշխատանքային գրաֆիկի պարզման մեխանիզմի մշակմամբ:

xxvii. Միջոցառումների ծրագրի նախագծի N4 գերակայության N8 միջոցառմամբ նախատեսել չափելի արդյունքային ցուցանիշներ առ այն, թե քանի բարձրագույն կրթական և քանի պետական հաստատություններում է նախատեսվում հիմնել նման կերակրասենյակներ:

## 5. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՃԵՂՔՎԱԾՔԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՄՆԱԼ ԲԱՐՁՐ

«Գենդերային ճեղքվածքի մասին 2018թ.-ի հաշվետվության» համաձայն՝ Հայաստանը 149 երկրների շրջանում զբաղեցրել է 73-րդ հորիզոնականը՝ ըստ վերջինիս բաղադրիչ Տնտեսական մասնակցության ցուցանիշի:<sup>47</sup> Թեև ՀՀ-ն վավերացրել է ԱՄԿ համապատասխան<sup>48</sup> կոնվենցիաները, սակայն գործնականում ՀՀ-ում միջին աշխատավարձի գենդերային խզվածքը շարունակում է մնալ բավականին բարձր՝ կազմելով 32.5%:<sup>49</sup> Համեմատության համար նշենք, որ ԵՄ-ում այն կազմում է 16.2%<sup>50</sup>, իսկ ամբողջ աշխարհում՝ շուրջ 20%<sup>51</sup>: Ըստ աշխատավարձի գենդերային ճեղքվածքի՝ Հայաստանը Եվրոպայի և Ասիայի տարածաշրջանի երկրների շարքում ամենավատ ցուցանիշն արձանագրած երկրների թվին է պատկանում:<sup>52</sup>

<sup>47</sup> The Global Gender Gap Report 2018, World Economic Forum, page 9-10, available at: [http://www3.weforum.org/docs/WEF\\_GGGR\\_2018.pdf](http://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2018.pdf), Այն 2007-2017թթ. ընթացքում 8.3%-ով բարելավվել է:

<sup>48</sup> «Համարժեք աշխատանքի դիմաց տղամարդկանց և կանանց հավասար վարձատրման մասին» N 100 կոնվենցիա, ԱՄԿ, ընդունված՝ 29.06.1951թ., ժնն, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81163>, «Աշխատանքի և զբաղվածության բնագավառում խտրականության մասին» N 111 կոնվենցիա, ԱՄԿ, ընդունված է՝ 25.06.1958թ., ժնն, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81179>:

<sup>49</sup> «Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2018» վիճակագրական գրքույկ, ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 88, ներկայացված են 2017թ.-ի տվյալները, հասանելի է՝ [https://www.armstat.am/file/article/gender\\_2018.pdf](https://www.armstat.am/file/article/gender_2018.pdf):

<sup>50</sup> «The gender pay gap in the European Union», Eurostat, 2016, the data of 2016 is presented, available at: [https://ec.europa.eu/info/sites/info/files/aid\\_development\\_cooperation\\_fundamental\\_rights/equalpayday-eu-factsheets-2018\\_en.pdf](https://ec.europa.eu/info/sites/info/files/aid_development_cooperation_fundamental_rights/equalpayday-eu-factsheets-2018_en.pdf):

<sup>51</sup> «Global Wage Report 2018/19. What lies behind gender pay gaps», International Labour Office – Geneva, International Labour Organization, 2018, page 23 (Gender Pay Gap varies from 16 per cent (in the case of mean hourly wages) to 22 per cent (in the case of median monthly wages), depending on which measure is used), the data of 2018 is presented, available at: [https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---dcomm/---publ/documents/publication/wcms\\_650553.pdf](https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---dcomm/---publ/documents/publication/wcms_650553.pdf)

<sup>52</sup> «Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրի և Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ազգային ծրագրի իրականացման գնահատման



ԱՄԿ Կոնվենցիաների և հանձնարարականների կիրառմամբ զբաղվող անկախ փորձագետների հանձնաժողովը ՀՀ իշխանություններին կրկին հանձնարարական է ներկայացրել «հավասար աշխատանք, հավասար վճար» սկզբունքի թերի կարգավորման կապակցությամբ օրենսդրական փոփոխություններ կատարելու վերաբերյալ:<sup>53</sup> Նշյալ խնդիրը բարձրաձայնվել է նաև ԵՄ-ի կողմից:<sup>54</sup>

Կոմիտեն ևս Եզրափակիչ դիտարկումներում իր մտահոգությունն է հայտնել աշխատավարձի՝ մշտական բնույթ կրող գենդերային ճեղքվածքի, աշխատաշուկայում գենդերային ուղղահայաց և հորիզոնական մշտական բնույթ կրող սեգրեգացիայի և ղեկավար պաշտոններում կանանց ներկայացվածության ցածր մակարդակի վերաբերյալ: Ավելին, Կոմիտեն կոչ է արել կիրառել համարժեք աշխատանքի դիմաց տղամարդկանց և կանանց հավասար վարձատրման սկզբունքը, ինչպես նաև կիրառել գենդերային չեզոք աշխատանքների դասակարգում, գնահատման մեթոդներ և կանոնավոր բնույթ կրող աշխատավարձի հարցումներ, որոնք բխում են դեռևս Կոմիտեի նախորդ հանձնարարականներից:<sup>55</sup>

Միջոցառումների ծրագրի նախագծով գենդերային խտրականության կանխարգելմանն ուղղված գերակայության ներքո թվարկված միջոցառումներից որևէ մեկը չի անդրադառնում աշխատավարձի գենդերային խզվածքի խնդրին:<sup>56</sup>

Աշխատավարձի գենդերային խզվածքի հիմնական խումբ պատճառներն են՝ կանանց աշխատանքային գործունեության ուղղահայաց խտրականությունը՝ կարիերայի

---

գեկույց», ՄԱԶԾ, ՄԱԲՀ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, 2015թ, Երևան, էջ 72 – 73, հասանելի է՝ [https://www.un.am/up/library/Assesment\\_2011-2015\\_Gender%20Policy\\_arm.pdf](https://www.un.am/up/library/Assesment_2011-2015_Gender%20Policy_arm.pdf):

<sup>53</sup> Մեկնարանություն ԱՄԿ «Համարժեք աշխատանքի դիմաց տղամարդկանց և կանանց հավասար վարձատրման մասին» N 100 կոնվենցիայի վերաբերյալ, Հայաստան, Կոնվենցիաների և հանձնարարականների կիրառմամբ զբաղվող անկախ փորձագետների հանձնաժողով (CEACR), ԱՄԿ, ընդունված՝ 2016թ.-ին, հրապարակված՝ 2017թ.-ին, ԱՄԿ 106-րդ նստաշրջանի ժամանակ, հասանելի է՝ [https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=1000:13100:0::NO:13100:P13100\\_COMMENT\\_ID:3300695:NO](https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=1000:13100:0::NO:13100:P13100_COMMENT_ID:3300695:NO):

<sup>54</sup> «6 Եվրոպական հարևանության քաղաքականության (ENP) առաջընթացի և գնահատման գեկույցներ Հայաստանի կողմից GSP+ պարտավորությունների կատարման վերաբերյալ», ավարտական գեկույց 2015թ.-ի դեկտեմբերից 2017թ.-ի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածի համար, 2018թ.-ի մայիսի 31-ի ավարտական տարբերակ, ALTAIR, CEU GmbH & Ameriagroup, էջեր՝ 284-285:

<sup>55</sup> «ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի Հայաստանի Հանրապետության կողմից կատարման վերաբերյալ 4-րդ պարբերական գեկույցի» Եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականությունների բոլոր ձևերի վերացման Կոմիտե, ընդունված՝ 02.02.2019թ.-ին, CEDAW/C/ARM/CO/4/Rev.1, պարբերություն 33, հասանելի է՝ <https://www.refworld.org/docid/52dd05054.html>:

<sup>56</sup> «ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ որոշման նախագիծ, Հավելված 2, մշակող մարմին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հանրային քննարկման ժամանակաշրջան՝ 22.05.2019թ.-06.06.2019թ., N5 գերակայություն, հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/1712/about>:


աստիճանների ոչ հավասար մատչելիությունը, և հորիզոնական խտրականությունը՝ ըստ մասնագիտությունների և սեկտորների:

### A. ՈՒՂՂԱՀԱՅԱՑ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կանանց աշխատանքային գործունեության ուղղահայաց խտրականությունն իրենից ենթադրում է կանանց ցածր տեսակարար կշիռ դեկավար պաշտոններում: Աղյուսակ 1-ում պատկերված են զբաղվածներն ըստ զբաղմունքի խմբերի, որի վերլուծությունից պարզ է դառնում, որ դեկավար պաշտոն զբաղեցնող տղամարդիկ 2.4 անգամ գերազանցում են կանանց, իսկ որակավորում չունեցող կանայք 2.2 անգամ գերազանցում են տղամարդկանց<sup>57</sup>: Գրեթե նույն պատկերն է Աղյուսակ 2-ի դեպքում, որտեղ ներկայացված են քաղաքացիական ծառայողները՝ ըստ ծառայության աստիճանի՝ կանայք հիմնականում զբաղեցնում են ծառայության կրտսեր պաշտոններ, իսկ տղամարդիկ՝ գլխավոր և բարձրագույն: Ավելին, կանանց ընդամենը 15%-ն է զբաղեցնում բարձրագույն պաշտոն<sup>58</sup>:

#### Աղյուսակ 1Ո Չբաղվածները՝ ըստ զբաղմունքի խմբերի և սեռի


(Յուրաքանչյուր սեռի տեսակարար կշիռն է համապատասխան խմբի զբաղվածների մեջ՝ արտահայտված %-ով):



<sup>57</sup> «Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2018» վիճակագրական գրքույկ, ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 103, ներկայացված են 2017 թ.-ի տվյալները, հասանելի է՝ [https://www.armstat.am/file/article/gender\\_2018.pdf](https://www.armstat.am/file/article/gender_2018.pdf):

<sup>58</sup> «Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2018» վիճակագրական գրքույկ, ՀՀ վիճակագրական կոմիտե, էջեր 74 և 103, ներկայացված են 2017թ.-ի տվյալները, հասանելի է՝ [https://www.armstat.am/file/article/gender\\_2018.pdf](https://www.armstat.am/file/article/gender_2018.pdf):

## Աղյուսակ 2. Քաղաքացիական ծառայողները՝ ըստ պաշտոնների խմբերի և սեռի



Բիզնես ոլորտում ղեկավար պաշտոններում կանայք կազմում են միայն 23%:<sup>59</sup> Թեև Միջոցառումների ծրագրի նախագծով բարձրաձայնվում է կանանց քաղաքական մասնակցության հարցը<sup>60</sup>, անդրադարձ չի կատարվում կանանց՝ ղեկավար պաշտոններ զբաղեցնելու հարցին մասնավոր ոլորտում: Միջազգային պրակտիկայում խնդիրը կարգավորվում է առևտրային ընկերությունների խորհուրդներում կանանց մասնակցությունն ապահովող քվոտաների ներդրմամբ: Մասնավորապես, 2003թ.-ին **Նորվեգիան** դարձավ առաջին երկիրն աշխարհում, ով պարտադրեց գենդերային քվոտան, որով պահանջվում է, որ պետական մասնակցությամբ ընկերությունների խորհուրդների անդամների առնվազն 40 տոկոսը լինեն կանայք: Այլ երկրներ, այդ թվում՝ Ֆրանսիան, Իսպանիան և Նիդեռլանդները, հետևել են այդ օրինակին: Այսպես, **Ֆրանսիայի** օրենսդրության համաձայն՝ պետական և մասնավոր ոլորտի խոշոր գործատուները պարտավոր են ներդնել քվոտաներ, որոնց համաձայն արգելվում է նույն սեռի ոչ ավելի, քան 70% ներգրավվածություն իրավաբանական անձի որևէ մակարդակում՝ ներառյալ որոշումների կայացման: 2016թ.-ից **Գերմանիան** ևս կատարեց օրենսդրական փոփոխություններ, որոնց համաձայն՝ 100 խոշոր ընկերությունների ոչ գործադիր խորհուրդների անդամների 30 տոկոսը պետք է զբաղեցնեն կանայք, իսկ հաջորդ 3500 միջին ընկերությունները պետք է իրենք որոշեն, թե ինչպես են բաշխում քվոտաները գործադիր և վերահսկիչ խորհուրդներում:<sup>61</sup>

<sup>59</sup> «Կանայք բարձրաստիճան պաշտոններում. աճի համար միջավայրի ձևավորում», Գրանտ Թորնթոն, 2013թ., էջ 7, ներկայացված են 2013թ. տվյալները, ցուցանիշը նվազել է 2012թ.-ի 27%-ի համեմատ:


<sup>60</sup> «ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ որոշման նախագիծ, Հավելված 2, մշակող մարմին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հանրային քննարկման ժամանակաշրջան՝ 22.05.2019թ.-06.06.2019թ., N1 գերակայություն, N2 և 6 միջոցառումներ, հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/1712/about>:

<sup>61</sup> <http://uk.reuters.com/article/2015/03/06/uk-germany-women-quotas-idUKKBN0M214W20150306>:


## B. ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կանանց աշխատանքային գործունեության հորիզոնական խտրականությունն իրենից ենթադրում է կանանց խտացում ցածր վարձատրությամբ աշխատատեղերում կամ ոլորտներում:

Աղյուսակ 3. Զբաղվածները՝ ըստ տնտեսական գործունեության խոշոր խմբերի



Աղյուսակ 4. Միջին աշխատավարձի սեռային խզվածքը՝ ըստ տնտեսական գործունեության խոշոր խմբերի



Աղյուսակ 3-ում պատկերված են զբաղվածները՝ ըստ տնտեսական գործունեության խոշոր խմբերի, որի համաձայն՝ կանայք առավելապես աշխատում են պետական կառավարման, կրթության և առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման ոլորտում, իսկ առավել պակաս՝ շինարարության և արդյունաբերության ոլորտներում: Աղյուսակ 4-ում պատկերված է միջին աշխատավարձի սեռային խզվածքը՝ ըստ տնտեսական գործունեության խոշոր խմբերի, որի համաձայն՝ միջին աշխատավարձի ճեղքվածքն առավելապես արտահայտված է ֆինանսական և ապահովագրական գործունեության, արդյունաբերության, առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման և

տեղեկատվության և կապի ոլորտներում, իսկ համեմատաբար փոքր՝ պետական կառավարման և շինարարության ոլորտներում:<sup>62</sup>

Վերոնշյալ աղյուսակների համատեղ վերլուծության արդյունքում կարող ենք փաստել, որ միջամտություն իրականացնելու անհրաժեշտություն առկա է ֆինանսական և ապահովագրական գործունեության, արդյունաբերության, առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման և տեղեկատվության և կապի ոլորտներում, սակայն այդ ոլորտներից ոչ բոլորում է առկա հորիզոնական խտրականություն, ուստի հարկ է կիրառել տարաբնույթ միջոցառումներ: Մասնավորապես, կանայք շատ են ներկայացված ցածր վարձատրվող այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են առողջապահությունը և բնակչության սոցիալական սպասարկումը, կանայք քիչ են ներկայացված բարձր վարձատրվող այնպիսի ոլորտներում, ինչպիսին արդյունաբերությունն է, կանայք և տղամարդիկ ֆինանսական և ապահովագրական գործունեության և տեղեկատվության ու կապի ոլորտներում համեմատաբար հավասարաչափ են ներկայացված, հետևաբար, այստեղ խոսքը գնում է վերոնշյալ ուղղահայաց խտրականության մասին:

Աշխատանքի շուկայում կանանց կողմնորոշման դրդապատճառները և դրա արդյունքում հորիզոնական խտրական պատկերի առկայությունը կարող է լինել հետևյալի արդյունք՝ կանանց կողմից կատարվող աշխատանքների կարծրատիպային թերարժևորում և դրա հետևանքով կանանց գերակշռությամբ ոլորտներում ցածր աշխատավարձի առկայության և աշխատավարձի աճի ցածր տեմպեր, զբաղունակության տեսանկյունից բարձրագույն մասնագիտական կրթության շրջանում մասնագիտությունների սահմանափակ ընտրություն, վաղ մանկությունից կրթական հաստատություններում կրթական խտրական բովանդակության և մանկավարժական խտրական մեթոդների կիրառում, մանկավարժների շրջանում առկա կարծրատիպերի վերարտադրումը և նույն արարքի համար ըստ սեռի մանկավարժների տարբերակված մոտեցումների առկայություն:<sup>63</sup>

Բացի այդ, **Կոմիտեն Եզրափակիչ դիտարկումներում** կոչ է արել վերացնել ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված<sup>64</sup> «Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ

<sup>62</sup> Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2018» վիճակագրական գրքույկ, ՀՀ վիճակագրական կոմիտե, էջեր 70 և 89, ներկայացված են 2017թ.-ի տվյալները, հասանելի է՝ [https://www.armstat.am/file/article/gender\\_2018.pdf](https://www.armstat.am/file/article/gender_2018.pdf):

<sup>63</sup> «Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրի և Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ազգային ծրագրի իրականացման գնահատման զեկույց», ՄԱԶԾ, ՄԱԲՀ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, Երևան, 2015թ., էջ 48-50, հասանելի է՝ [https://www.un.am/up/library/Assesment\\_2011-2015\\_Gender%20Policy\\_arm.pdf](https://www.un.am/up/library/Assesment_2011-2015_Gender%20Policy_arm.pdf):

<sup>64</sup> ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2308-Ն որոշման «Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկ» Հավելված, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=21817>,

տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը»:<sup>65</sup>

Միջազգային պրակտիկայում «հավասար վարձատրություն համարժեք աշխատանքի համար» սկզբունքի իրացման նպատակով սահմանվում են նաև այլ մեխանիզմներ: Օրինակ՝ **Իսլանդիայում** սահմանված է համարժեք աշխատանքի համար անհավասար վարձատրության օրենսդրական արգելք և դրա խախտման դեպքում պատասխանատվություն: Այդ նպատակով մշակվել են հանրային հաշվետվությունների ձևեր մասնավոր սեկտորում գործող իրավաբանական անձանց համար, որոնք պարունակում են տեղեկատվություն կին և տղամարդ աշխատողների, նրանց զբաղեցրած պաշտոնների և աշխատավարձերի վերաբերյալ: Օրինակ, **Շվեյցարիայում**, պետական գնումների մասին իրավական կարգավորումների համաձայն, պետական գնումներին կարող են մասնակցել միայն այն տնտեսվարողները, որոնք ապահովում են հավասար վարձատրություն համարժեք աշխատանքի համար:<sup>66</sup>

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- xxviii. Օրենսդրական փոփոխություններ կատարել և **ամրագրել համարժեք աշխատանքի համար անհավասար վարձատրության օրենսդրական արգելքը և դրա խախտման դեպքում պատասխանատվություն սահմանել,**
- xxix. Օրենսդրական փոփոխություններ կատարել և **նախատեսել կանանց՝ առնվազն 30 տոկոս մասնակցությունն ապահովող քվոտաներ մասնավոր ոլորտում գործող առևտրային ընկերությունների, պետական և համայնքային մասնակցության կազմակերպությունների ղեկավար մարմիններում,**
- xxx. Օրենսդրական փոփոխություններ կատարել և **նախատեսել կանանց առնվազն 30 տոկոս մասնակցությունն ապահովող քվոտաներ հանրային ծառայության ղեկավար պաշտոններում,**

<sup>65</sup> «ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի Հայաստանի Հանրապետության կողմից կատարման վերաբերյալ 5-րդ և 6-րդ համատեղ պարբերական զեկույց»-ի Եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե, ընդունված է 2016 թվականի նոյեմբերի 25-ին, CEDAW/C/ARM/CO/5-6, պարբերություն 24 և 25, հասանելի է՝ <https://undocs.org/CEDAW/C/ARM/CO/5-6>:

<sup>66</sup> «Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրի և Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ազգային ծրագրի իրականացման գնահատման զեկույց», ՄԱԶԾ, ՄԱԲՀ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, Երևան, 2015թ., էջ 76, հասանելի է՝ [https://www.un.am/up/library/Assesment\\_2011-2015\\_Gender%20Policy\\_arm.pdf](https://www.un.am/up/library/Assesment_2011-2015_Gender%20Policy_arm.pdf):

- xxxi. Իրականացնել աշխատանքների նկարագրերի գենդերային փորձաքննություն՝ միտված գենդերային չեզոք նկարագրերի մշակմանը և աշխատանքի գնահատման գենդերային չեզոք մեթոդների կիրառմանը,
- xxxii. Վերանայել ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված «Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը»,
- xxxiii. Նախատեսել աշխատավարձի բարձրացում և սոցիալական փաթեթներում կանանց ներգրավում այն ոլորտներում, որոնցում առավել շատ աշխատում են կանայք, մասնավորապես՝ առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման,
- xxxiv. Մշակել մասնավոր սեկտորում գործող իրավաբանական անձանց համար հանրային հաշվետվությունների ձևեր, որոնք պարունակում են տեղեկատվություն կին և տղամարդ աշխատողների, նրանց զբաղեցրած պաշտոնների և աշխատավարձերի վերաբերյալ, և կանոնավոր կերպով իրականացնել հարցումներ դրանց վերաբերյալ,
- xxxv. Սահմանել պետական գնումներին մասնակցության արգելք համարժեք աշխատանքի դիմաց հավասար վարձատրություն չապահովող ընկերությունների համար, նախապես հայտարարել նման կարգավորման անցնելու նպատակադրման մասին և տնտեսվարողներին ցուցաբերել աստիճանական աջակցություն դեպի այդ համակարգ անցնելու անցումն ապահովելու նպատակով:

## 6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՉԷ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ

Ըստ Համաշխարհային բանկի և ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ անկախության 26 տարիների (1991-2016թթ.) ընթացքում Հայաստանում գործազրկության միջին մակարդակը կազմել է 21,7%: Գործազրկության ամենաբարձր ցուցանիշը եղել է 2001թ.-ին՝ 35,9%, իսկ ամենացածրը՝ 2013թ.-ին՝ 16,2%: Վերջին 5 տարիների ընթացքում ԱՊՀ անդամ երկրների շարքում Հայաստանն ունեցել է գործազրկության ամենաբարձր մակարդակը:<sup>67</sup> 2017թ.-ին հինգ գործազուրկից երեքի (56%)՝ աշխատանք փնտրելու տևողությունը գերազանցել է մեկ և ավելին տարին (երկարատև գործազրկություն) և կարող է հանգեցնել աշխատանք գտնելու հնարավորությունների սահմանափակմանը և դրանից բխող տնտեսական, սոցիալական, բարոյահոգեբանական բազմաթիվ բացասական հետևանքների: Երկարատև գործազրկության մակարդակը հատկապես բարձր է կանանց շրջանում՝ կազմելով իգական

<sup>67</sup> International Labour Organization, ILOSTAT database, հասանելի է՝ <https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.ZS?locations=AM>, ՀՀ վիճակագրական կոմիտե, ԵԱՏՄ վիճակագրության բաժին:



սեռի գործազուրկ բնակչության 57%-ը:<sup>68</sup> ՀՀ սահմանադրությամբ ամրագրված է աշխատանքի ազատ ընտրության իրավունքը<sup>69</sup>, սակայն ոչ աշխատանքի իրավունքը: Աշխատանքի իրավունքը համարվում է հիմնարար իրավունքներից մեկը և իր ամրագրումն է ստացել միջազգային մի շարք փաստաթղթերում:<sup>70</sup> Աշխատանքի իրավունքի ամրագրումն օրենսդրությամբ պետության վրա կոդի պոզիտիվ պարտականություն՝ իր հնարավորությունների շրջանակում իր քաղաքացիներին ապահովելու աշխատանքով:

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

xxxvi. Օրենսդրական մակարդակով ամրագրել աշխատանքի իրավունքը:

### 7. ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԿԱՆԱՅՔ ԳՐԵԹԵ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՉԵՆ

Արհմիությունների անդամակցության սեռական ներկայացվածության վերաբերյալ առկա չեն վիճակագրական տվյալներ, սակայն գաղտնիք չէ, որ դրանցում առավել ներկայացված են տղամարդիկ: Կանանց ներգրավվածության բարձր աստիճանի դեպքում կին աշխատողների իրավունքներն ավելի պաշտպանված կլինեն, քանի որ վերջիններս ավելի զգայուն կլինեն այնպիսի հարցերում, ինչպիսիք, օրինակ, աշխատանքային խտրականության տարբեր դրսևորումներն են:

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

xxxvii. Սահմանել կանանց մասնակցության քվոտաներ՝ արհմիություններում, այդ թվում՝ Հայաստանի արհեստակցական միությունների կոնֆեդերացիայում և ճյուղային հանրապետական արհեստակցական միություններում:

### III. ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

<sup>68</sup> Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2018» վիճակագրական գրքույկ, ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 90, ներկայացված են 2017թ.-ի տվյալները, հասանելի է՝ [https://www.armstat.am/file/article/gender\\_2018.pdf](https://www.armstat.am/file/article/gender_2018.pdf)

<sup>69</sup> ՀՀ Սահմանադրություն, ընդունված՝ 1995թ. հուլիսի 5-ին, փոփոխություններ՝ 2015թ., հոդված 32, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75780>

<sup>70</sup> Տե՛ս օրինակ՝ «Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա», ԵԽ, ընդունված՝ 03.05.1996թ.-ին, Ստրասբուրգ, հոդված 1, հայերեն լեզվով հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24230>, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», ՄԱԿ, ընդունված՝ 10.12.1948թ.-ին, հոդված 23, հայերեն լեզվով հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1896>, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր», ՄԱԿ, ընդունված՝ 16.12.1966թ.-ին, Նյու Յորք, հոդված 6, հայերեն լեզվով հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=18501>, «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա», ՄԱԿ, ընդունված՝ 21.12.1965թ. հոդված 5, հայերեն լեզվով հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75843>:



# 1. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՉԻ ՎԱՐՎՈՒՄ ՊԱՏՇԱՃ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներից՝ գենդերային հավասարության, թիրախներից մեկն է:<sup>71</sup> Պեկինյան գործողությունների ծրագիրը ևս նախատեսում է համալիր միջոցառումներ՝ կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և վերացման նպատակով, ինչպես նաև կանանց նկատմամբ բռնության պատճառների, հետևանքների և կանխարգելիչ միջոցների արդյունավետության հարցերի ուսումնասիրություն:<sup>72</sup>

Ամեն երրորդ կինն աշխարհում ենթարկվում է բռնության որևէ տեսակի ներկայիս կամ նախկին գուզրնկերոջ կողմից:<sup>73</sup> Ընդ որում, համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների՝ կանանց սպանությունների 35%-ն իրագործվում է ներկայիս կամ նախկին գուզրնկերոջ կողմից: Սակայն այդ նույն աղբյուրը նշում է, որ այս վիճակագրությունն ամբողջական չէ:<sup>74</sup>

Կանանց թիվը Հայաստանում, որոնք 15 տարեկանից ի վեր առնվազն մեկ անգամ ենթարկվել են *ֆիզիկական բռնության* սեռական գուզրնկերոջ կողմից, 2005-2018թ.-ին կազմում է 8.2%՝ համաձայն ՄԱԶԾ 2017թ. Մարդկային զարգացման ինդեքսի:<sup>75</sup> Միննույն ժամանակ հարկ է ընդգծել, որ ընտանեկան բռնությանը հատուկ է լատենտայնության բարձր մակարդակը, ինչը նշանակում է, որ ընտանեկան բռնության իրական պատկերն էլ ավելի մտահոգիչ է: ՀՀ հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտությունները ցույց են տալիս, որ Հայաստանում ընտանեկան բռնությունն ավելի տարածված է. կանանց թիվը,

<sup>71</sup> «Վերափոխենք աշխարհը. կայուն զարգացման օրակարգ 2030», ՄԱԿ, ընդունված 2015թ. սեպտեմբերին՝ Նյու Յորքում, հայերեն լեզվով հասանելի է <http://un.am/hy/p/sdgs-in-general>:

<sup>72</sup> «Պեկինյան գործողությունների ծրագիր», Ընդհանուր վեհաժողովի բանաձև թիվ S-23/2, հավելված և բանաձև թիվ S-23/3, հավելված, ընդունված է 1995 թ. սեպտեմբերի 15-ին Պեկինում: Փաստաթուղթն անգլերեն լեզվով հասանելի է՝ <http://www.un.org/womenwatch/daw/beijing/pdf/BDPfA%20E.pdf>, պարբերություններ, հայերեն լեզվով ամփոփագիրը հասանելի է՝ [http://www.un.am/up/file/Beijing-Decl\\_PLAT\\_ARM.pdf](http://www.un.am/up/file/Beijing-Decl_PLAT_ARM.pdf), էջ 19-20:

<sup>73</sup> «Կանանց նկատմամբ բռնություն, հիմնական փաստեր», Աշխատանքի համաշխարհային կազմակերպություն, 2017թ., հասանելի է՝ <http://www.who.int/news-room/fact-sheets/detail/violence-against-women>:

<sup>74</sup> «Ըմբռնել ու լուծել կանանց նկատմամբ բռնության խնդիրը», Աշխատանքի համաշխարհային կազմակերպություն, 2012թ., հասանելի է՝ [http://apps.who.int/iris/bitstream/handle/10665/77421/WHO\\_RHR\\_12.38\\_eng.pdf;jsessionid=7E6EFECBD717D4371CE9D0E3EA3B05A6?sequence=1](http://apps.who.int/iris/bitstream/handle/10665/77421/WHO_RHR_12.38_eng.pdf;jsessionid=7E6EFECBD717D4371CE9D0E3EA3B05A6?sequence=1):

<sup>75</sup> Երբևիցե կանանց դեմ բռնություն կատարած սեռական գուզրնկեր (15 և բարձր տարիքի իգական սեռի բնակչության %)՝ 8,2%՝ ըստ ՄԱԶԾ Մարդկային զարգացման ինդեքսի, 2018 [http://hdr.undp.org/sites/default/files/2018\\_human\\_development\\_statistical\\_update.pdf](http://hdr.undp.org/sites/default/files/2018_human_development_statistical_update.pdf), <http://hdr.undp.org/en/countries/profiles/ARM>:

որոնք 15 տարեկանից ի վեր առնվազն մեկ անգամ ենթարկվել են ֆիզիկական բռնության սեռական զուգընկերոջ կողմից, կազմում է 22.4%: Համեմատության համար նշենք, որ աշխարհում այս ցուցանիշը կազմում է 19%, իսկ Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում՝ 6.1%:<sup>76</sup> Ավելին, որոշ այլ հարցումներ ավելի բացասական ցուցանիշներ են տալիս. կանանց 60%-ն իրենց կյանքի ընթացքում ենթարկվում են մեկ կամ մի քանի տեսակի ընտանեկան բռնության:<sup>77</sup>

Այդ խնդրին է անդրադարձել նաև Կոմիտեն իր Եզրափակիչ դիտարկումներում՝ մտահոգություն հայտնելով կանանց նկատմամբ սեռով պայմանավորված բռնության դեպքերի մասին գոհերի կողմից չհաղորդելու և դրանով պայմանավորված տվյալների պակասի, ինչպես նաև կանանց սպանությունների դեպքերի մասին չհաղորդելու և մեղավորների հետապնդման հարցում ներողամտության վերաբերյալ, ինչպես նաև հանձնարարել է ՀՀ-ին համակարգված կերպով հավաքագրել տվյալներ սեռով պայմանավորված բռնության շուրջ՝ առանձնացված ըստ սեռի, տարիքի, էթնիկական ծագման և հանցագործի ու զոհի միջև հարաբերության, և ներառի այսպիսի տվյալներ հաջորդ պարբերական զեկույցում:<sup>78</sup>

Ինչպես պարզ է դառնում Աղյուսակներ 5-7 վերլուծությունից, որտեղ պատկերված են ՀՀ իրավապահ մարմինների կողմից ներկայացված տվյալները ընտանեկան բռնության գործերի վերաբերյալ, Հայաստանում ոչ միայն չի վարվում ընտանեկան բռնության դեպքերի միասնական վիճակագրություն, այլև տվյալները ներկայացված են ամեն տարի՝ ըստ տարբեր չափորոշիչների, ինչի արդյունքում բացակայում են բռնության դեպքերի, դրանց առաջացման պատճառների ու հասկապես խոցելի խնդրի վերաբերյալ պաշտոնական տվյալներ: Բացի այդ, առկա չեն առանձնացված տվյալներ առ այն, թե մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերից քանիսն են ավարտվել մեղադրական դատավճռով, քանիսը՝ արդարացման, քանի որ ՀՀ դատական դեպարտամենտը օրենքով չունի նման վիճակագրություն հավաքագրելու պարտավորություն:

**Աղյուսակ 5. ՀՀ ոստիկանության տվյալները 2013-2018թթ. ընտանեկան բռնության գործերի վերաբերյալ<sup>79</sup>**

<sup>76</sup> Sustainable Development Goals - SDG5 - “Gender Equality and Empowering Women and Girls”, Factsheet, pages 46-48, available at: <https://un.am/up/file/SDG5-GenderEquality.pdf>

<sup>77</sup> «Պրոակտիվ հասարակություն» և ԵԱՀԿ, 2011թ.,

<sup>78</sup> «ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի Հայաստանի Հանրապետության կողմից կատարման վերաբերյալ 5-րդ և 6-րդ համատեղ պարբերական զեկույցի» Եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականությունների բոլոր ձևերի վերացման Կոմիտե, ընդունված՝ 2016 թվականի նոյեմբերի 25-ին, CEDAW/C/ARM/CO/5-6, պարբերություն 16, (b) և (d) կետեր, 17 (f), հասանելի է՝ <https://undocs.org/CEDAW/C/ARM/CO/5-6>:

<sup>79</sup> 2018թ. տվյալները՝ «Տարեկան հաղորդում 2018թ.-ի ընթացքում ՀՀ ՄԻՊ գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին», ՄԻՊ, Երևան, 2019թ., էջ 546-547, հասանելի է՝

Տարե- թիվ	Գրանցված դեպքերի թիվ	Նախազգու- շացումներ	Անհետաձգելի միջամտության որոշումներ	Մերժված գործերի թիվ	Հարուցված գործերի թիվ	Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերի թիվ
2018	707	435	132		159	29
2017	793			592	168	
2016	756					
2015	784			634		
2014	678			496	55	
2013	580					

**Աղյուսակ 6.22 քննչական կոմիտեի տվյալները 2016-2018թթ. ընտանեկան բռնության գործերի վերաբերյալ<sup>80</sup>**

<http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/0e3f463c0e6c42f12cb497d483739dec.pdf>, 2017թ. տվյալները՝ «Տարեկան հաղորդում 2017թ.-ի ընթացքում ՀՀ ՄԻՊ գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին», ՄԻՊ, Երևան, 2018թ., էջ 305-306, հասանելի է՝ <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/b5220dd0b83b420a5ab8bb037a1e02ca.pdf>, 2016թ. տվյալները՝ «Տարեկան հաղորդում 2016թ.-ի ընթացքում ՀՀ ՄԻՊ գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին», ՄԻՊ, Երևան, 2017թ., էջ 242, հասանելի է՝ <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/28731eccde752a30c70feac24a4a7de7.pdf>, 2015թ. տվյալները՝ «Տարեկան հաղորդում 2015թ.-ի ընթացքում ՀՀ ՄԻՊ գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին», ՄԻՊ, Երևան, 2016թ., էջ 72, հասանելի է՝ <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/a42b07b145e69f9193cda108ef262d7c.pdf>, 2014թ. տվյալները՝ «Տարեկան հաղորդում 2014թ.-ի ընթացքում ՀՀ ՄԻՊ գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին», ՄԻՊ, Երևան, 2015թ., էջ 77, հասանելի է՝ <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/206d2af54f5149a560ed7a616830d107.pdf>, 2013թ. տվյալները՝ «Տարեկան հաղորդում 2013թ.-ի ընթացքում ՀՀ ՄԻՊ գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին», ՄԻՊ, Երևան, 2014թ., էջ 60, հասանելի է՝ <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/afe1e423a8f465a4fba32ccc27ef913a.pdf>

<sup>80</sup> 2018թ. տվյալները՝ ՀՀ քննչական կոմիտեի պաշտոնական կայքէջ, հասանելի է՝ [http://investigative.am/news/view/yntaniquam-brnutyun\\_2018.html?fbclid=IwAR0PbtZ9WXXOQ7bfhK41XrCUMybWspluoHcIhscT7UMuDn\\_YT3br6WT7M\\_X0](http://investigative.am/news/view/yntaniquam-brnutyun_2018.html?fbclid=IwAR0PbtZ9WXXOQ7bfhK41XrCUMybWspluoHcIhscT7UMuDn_YT3br6WT7M_X0), 2017թ. տվյալները՝ ՀՀ քննչական կոմիտեի պաշտոնական կայքէջ, հասանելի է՝ [http://www.investigative.am/news/view/texekatvutyun-yntanekan-brnutyun\\_2017.html](http://www.investigative.am/news/view/texekatvutyun-yntanekan-brnutyun_2017.html), 2016թ. տվյալները՝ ՀՀ քննչական կոմիտեի պաշտոնական կայքէջ, հասանելի է՝ <http://www.investigative.am/news/view/yntanekan-brnutyunner.html>

Տարեթիվ	ՀՀ քննչական վարչությունում քննվող գործերի թիվ	կոմիտեի ընթացքում տարվա թիվ	Ոչ հիմքով գործերի թիվ	արդարացման կարճված թիվ	Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերի թիվ
2018	519		206		82
2017	458,		212		86
2016	359, 311	որից այդ տարի հարուցվածը՝ 258	166		89

**Աղյուսակ 7. ՀՀ դատախազության տվյալները 2018թ. ընտանեկան բռնության գործերի վերաբերյալ<sup>81</sup>**

Տարեթիվ	Գրանցված դեպքերի թիվ	Հարուցված քրեական գործերի թիվ	Ոչ արդարացման հիմքով կարճված գործերի թիվ	Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերի թիվ
2018	406	406	167	67

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի համաձայն. «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ որպես լիազոր մարմին իրականացնում է ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում՝ կառավարության որոշմամբ սահմանված կարգով, ինչպես նաև այդ վիճակագրության ամենամյա հրապարակում իր պաշտոնական կայքում»<sup>82</sup>: Անհրաժեշտ է ընդգծել, սակայն, որ 2018 թվականի ընթացքում կառավարության համապատասխան որոշումը չի ընդունվել, ինչի արդյունքում էլ դեռևս առկա չեն միասնական վիճակագրական տվյալներ ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, հասարակական սեկտորի կողմից կատարված վերլուծությունները այլ պատկեր են ներկայացնում ընտանեկան բռնության դեպքերի քանակի վերաբերյալ: Աղյուսակ 8-ում պատկերված է կանանց դեմ բռնության մասին հանրապետության ողջ

<sup>81</sup> Աղբյուրը՝ «Տարեկան հաղորդում 2018թ.-ի ընթացքում ՀՀ ՄԻՊ գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին», ՄԻՊ, Երևան, 2019թ., էջ 547, հասանելի է՝

<http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/0e3f463c0e6c42f12cb497d483739dec.pdf>

<sup>82</sup> «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք՝ ՀՕ-320-Ն, ընդունված՝ 13.12.2017թ., հոդված 14, մաս 1, կետ 2, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118672>

տարածքում 2016թ. անցկացված հարցման արդյունքները՝ բռնության հիմնական երեք տեսակների վերաբերյալ, որից պարզ է դառնում, որ **միջինում յուրաքանչյուր 2-րդ կինը ենթարկվում է հոգեբանական, ամեն 4-րդ կինը՝ ֆիզիկական, իսկ ամեն 5-րդ կինը՝ տնտեսական բռնության իրենց տղամարդ գուզընկերոջ կողմից**: Հետաքրքրական է այն, որ հարցազրույցի միջոցով տղամարդիկ ավելի պակաս կաշկանդված են ներկայացրել կանանց բռնության ենթարկելու դեպքերը, քան կանայք՝ տղամարդկանց կողմից բռնության ենթարկվելու մասին: Բացի այդ, անանուն հարցման դեպքում կանայք առավել անկաշկանդ են տեղեկացնել բռնության դեպքերի մասին, քան հարցազրույցի միջոցով, ինչը վկայում է այս հարցում կարծրատիպային մտածողության մասին:<sup>83</sup>

Կարծրատիպային մտածողության խնդիրն առավել վառ արտահայտված է Աղյուսակ 9-ում, որտեղ թե տղամարդ, թե կին հարցվածների խիստ բարձր տոկոսը և՛ արդարացնում է կանանց նկատմամբ բռնությունը, և՛ գտնում, որ անհրաժեշտ է հանդուրժել ընտանեկան բռնությունը՝ հանուն ընտանիքի միասնության:<sup>84</sup>

**Աղյուսակ 8. Կանանց դեմ բռնության տարածվածությունը՝ ըստ տեսակների**

Բռնության տեսակ	Հարցազրույցի միջոցով հարցված կանանց %, ովքեր հոգեբանական բռնության են ենթարկվել իրենց տղամարդ սեռական գուզընկերոջ կողմից	Հարցազրույցի միջոցով հարցված տղամարդկանց %, ովքեր հոգեբանական բռնության են ենթարկվել իրենց կին սեռական գուզընկերոջը	Անանուն հարցված կանանց %, ովքեր բռնության են ենթարկվել իրենց տղամարդ սեռական գուզընկերոջ կողմից
<i>Հոգեբանական բռնություն</i>	45.9%	53.3%	45.9%
<i>Տնտեսական չարաշահում</i>	21.3%	20.8%	19.5%
<i>Ֆիզիկական բռնություն</i>	12.5%	17.4%	22.4%

**Աղյուսակ 9. Ընտանեկան բռնության արդարացումը կամ հանդուրժումը՝ ըստ սեռի**

Պնդումներ	Պնդման հետ տղամարդ տոկոսային	հետ համաձայն հարցվածների բաշխվածություն	Պնդման հետ կին տոկոսային	համաձայն կին տոկոսային բաշխվածություն
-----------	------------------------------	---	--------------------------	---------------------------------------

<sup>83</sup> Տե՛ս Վլադիմիր Օսիպով և Ջինա Սարգիզովա, Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրները Հայաստանում, ՄԱԲՀ, 2016 թ., էջ 27, 97-98 և 137, [https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/MEN-AND-GENDER-EQUALITY\\_ARM\\_July\\_2017\\_finalized\\_0.pdf](https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/MEN-AND-GENDER-EQUALITY_ARM_July_2017_finalized_0.pdf)

<sup>84</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 137:

Կանայք պետք է հանդուրժեն բռնությունը հանուն ընտանիքի միասնության	44.6%	27.8%
Կողակցի կողմից բռնությունը կարելի է արդարացնել	78.6%	62.9%

Բացի այդ, ՔՀԿ-ների կողմից շրջանառվող տվյալների համաձայն՝ ընտանեկան բռնության արդյունքում 2010-2017թթ. գրանցվել է կանանց մահվան 42 դեպք:<sup>85</sup>

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

xxxviii. Ընդունել կառավարության որոշում՝ ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում վարելու կարգի մասին՝ պարունակելով հետևյալ տվյալները՝

- տվյալ տարվա ընթացքում ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ ստացված հաղորդումների թիվը՝ առանձնացնելով սղամարդու կողմից կանանց դեմ բռնության հաղորդումների թիվը,
- դրանցից գործի հարուցումը մերժելու մասին որոշումների թիվը,
- դրանցից հարուցված գործերի թիվը,
- դրանցից մինչդասական վարույթի շրջանակներում կարճված գործերի թիվը՝ առանձնացնելով ոչ արդարացման հիմքով կարճված գործերի թիվը,
- դրանցից մեղադրական եզրակացությամբ դատարան ներկայացված գործերի թիվը,
- դրանցից դատարանում քննության ընթացքում կարճված գործերի թիվը,
- դրանցից արդարացման դատավճռի կայացմամբ ավարտված գործերի թիվը,
- դրանցից մեղադրական դատավճռի կայացմամբ ավարտված գործերի թիվը:

#### 2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆ

- Միջոցառումների ծրագրի նախագծով նախատեսված են «Ընտանեկան բռնության դեմ պայքարի ազգային ծրագրի մշակում», «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի լրամշակում և դրա հիման վրա

<sup>85</sup> 12 դեպք՝ «Լռեցված ձայներ. կնասպանությունը Հայաստանում 2016-2017 թթ.», զեկույց, 2018թ., հասանելի է <http://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2019/04/femicide2018.pdf?x24321>, «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կռալիցիա», 30 դեպք՝ «Կանանց սպանությունը Հայաստանում՝ լուռ համաճարակ», զեկույց, Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կռալիցիա, 2016թ., հասանելի է [http://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2016/05/Femicide\\_Report\\_ARM.pdf?be05b6](http://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2016/05/Femicide_Report_ARM.pdf?be05b6)

կիրարկման մեխանիզմների լրամշակում» և «ԵՆ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիայի վավերացմանն ուղղված միջոցառումների մասնակցություն» միջոցառումները<sup>86</sup>: Վերոնշյալ կոնվենցիայի վավերացման վերաբերյալ իր հանձնարարականն է ներկայացրել նաև Կոմիտեն:<sup>87</sup> ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով ևս նախատեսվում է «ՀՀ օրենսդրական դաշտի կատարելագործում և «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիայով ստանձնած հանձնառություններին համապատասխանեցում» միջոցառումը, իսկ վերջնաժամկետ է նախատեսված մինչև սույն թվականի սեպտեմբերի 2-րդ տասնօրյակը<sup>88</sup>: Սակայն, մյուս կողմից, այդ հարցի վերաբերյալ հանրության մեջ չկա կոնսենսուս:<sup>89</sup> Խնդիրը հիմնականում կայանում է նրանում, որ հանրության լայն շերտերում առկա է իրազեկվածության խնդիր կոնվենցիայի վերաբերյալ, քանի որ վերջինիս Բացատրական գեկույցը<sup>90</sup>, որոնցով տրվում է կոնվենցիայում առկա սահմանումների հասկացությունները, հասանելի չէ հայերեն լեզվով:

- **Նախազգուշացում** կիրառելու մասին որոշումը ենթակա է բողոքարկման դրա մասին իրազեկելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում<sup>91</sup>: Քանի որ ոստիկանության որոշումները

<sup>86</sup> «ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ որոշման նախագիծ, Հավելված 2, մշակող մարմին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հանրային քննարկման ժամանակաշրջան՝ 22.05.2019թ.-06.06.2019թ., N5 գերակայություն, N15, N14 և N13 միջոցառումներ, հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/1712/about>:

<sup>87</sup> «ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի Հայաստանի Հանրապետության կողմից կատարման վերաբերյալ 5-րդ և 6-րդ համատեղ պարբերական գեկույցի» Եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականությունների բոլոր ձևերի վերացման Կոմիտե, ընդունված՝ 2016 թվականի նոյեմբերի 25-ին, CEDAW/C/ARM/CO/5-6, պարբերություն 17 (b), հասանելի է՝ <https://undocs.org/CEDAW/C/ARM/CO/5-6>:

<sup>88</sup> «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 650-Լ որոշում, ընդունված՝ 16.05.2019թ.-ին, Հավելված 1, կետ 11, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131287>

<sup>89</sup> Տե՛ս օրինակ «Հայտնիներից ովքեր են միացել «Ո՛չ Ստամբուլյան կոնվենցիային» ստորագրահավաքին», <https://www.iravunk.com/news/90121>

<sup>90</sup> “Explanatory Report to the Council of Europe Convention on preventing and combating violence against women and domestic violence”, Council of Europe, Treaty Series - No. 210 Istanbul, 11.V.2011. available at: <https://rm.coe.int/16800d383a?fbclid=IwAR2oc-R4CnkBnAyzNv0cTLCQjnTBcn3viGJjanAL96EW149tpMxhsR-PddA>

<sup>91</sup> «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք՝ ՀՕ-320-Ն, ընդունված՝ 13.12.2017թ., հոդված 6, մաս 3, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118672>



վարչական ակտեր են, ապա բողոքարկումները կարգավորվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով, որով նախատեսվում է **կասեցնող ազդեցություն**<sup>92</sup>, որի արդյունքում էլ կասեցման ժամանակաշրջանում այն չի ծառայում իր նպատակին:<sup>93</sup> Թեև նշյալ հոդվածով սահմանված է բացառություն այն դեպքերի համար, երբ անհապաղ կատարումն անհրաժեշտ է հանրային շահերից ելնելով, և հանրային շահի ներքո օրենսդիրը հասկանում է անմիջականորեն անձանց կյանքը, առողջությունը կամ սեփականությունը վտանգվելը, այնուամենայնիվ, պրակտիկայում այս հիմքը չի կիրառվում:

- Ի հակադրություն «Կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիայի, որով նախատեսվում է **անհետաձգելի արգելող որոշման** կայացում միակողմանի կարգով՝ անմիջապես ուժի մեջ մտնելով,<sup>94</sup> Հայաստանում այս որոշման **ուժի մեջ մտնելու ժամկետն անորոշ է, այլ ոչ թե անմիջապես**, քանի որ դրանք ուժի մեջ են մտնում բռնություն գործադրած անձին հեռախոսով ծանուցելուց, նրա հաշվառման վայր էլեկտրոնային փոստի կամ պատվիրված փոստի միջոցով հանձնելուց և հանձնման մասին վերջինիս ստորագրություն ստանալուց հետո<sup>95</sup>: Ավելին, գրանցման հասցեն կարող է լինել այն տունը, որտեղ գտնվելը բռնություն գործադրող անձին պետք է արգելվի: Արդյունքում՝ բռնություն գործադրած անձի՝ այնտեղ պահանջվող ներկայությունը (ծանուցում ստանալու համար) կարող է վտանգել տուժողի անվտանգությունը:
- ՀՀ ոստիկանության պետի հրամանով հաստատված **«Ընտանիքում բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատման չափորոշիչները**»<sup>96</sup>, որոնք հիմք են հանդիսանում անհետաձգելի միջամտության որոշում

<sup>92</sup> «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենք»՝ ՀՕ-41-Ն, ընդունված՝ 18.02.2004թ., հոդված 74, մաս 1, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75264>:

<sup>93</sup> «Տարեկան հաղորդում 2018թ.-ի ընթացքում ՀՀ ՄԻՊ գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին», ՄԻՊ, Երևան, 2019թ., էջ 548, հասանելի է՝ <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/0e3f463c0e6c42f12cb497d483739dec.pdf>

<sup>94</sup> «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիա, ԵԽ, Treaty Series N 210, ընդունված 11.05.2011թ.-ին, Ստամբուլ, հոդված 53, մաս 2, հայերեն լեզվով հասանելի է՝ <https://rm.coe.int/168046246d>:

<sup>95</sup> «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք՝ ՀՕ-320-Ն, ընդունված՝ 13.12.2017թ., հոդված 7, մաս 7, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118672>

<sup>96</sup> «Ընտանիքում բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատման չափորոշիչները», ՀՀ ոստիկանության պետի թիվ 1090-Ս հրամանի N1 հավելված, հաստատված՝ 2019թ.-ի հուլիսի 17-ին, հասանելի է՝ <http://www.police.am/images/18-L-17.07.2019.pdf>



կայացնելու համար, **չեն դրվել հանրային քննարկման և չեն ենթարկվել պետական-իրավական փորձաքննության:** Պատճառն այն է, որ ՀՀ ոստիկանության պետի՝ ընտանիքում բռնության կանխարգելման և բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում ՀՀ ոստիկանության՝ օրենքով վերապահված լիազորությունների կատարումը կարգավորելուն ուղղված գործող հրամանը սահմանվել է որպես ներքին իրավական ակտեր, հետևաբար «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմատիվ իրավական ակտերին վերաբերող ոչ բոլոր պարտադիր պահանջներն են տարածվում վերջինիս վրա:<sup>97</sup>

- **Հարկ է նաև հավելել, որ անհետաձգելի միջամտության որոշման գործողության ժամկետը չի կարող գերազանցել 20 օրը,**<sup>98</sup> սակայն թե վերոնշյալ օրենքով, թե հրամանով **սահմանված չեն չափանիշներ, թե որ դեպքերում քանի օրով է անհրաժեշտ այն կիրառել:** Արդյունքում, ոստիկանները հիմնականում կամայական որոշումներ են կայացնում՝ 3 կամ 5 օր հաղորդակցվելու արգելք սահմանելով:
- Դատարանի կողմից **պաշտպանական որոշման կիրառման վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետ է սահմանված 10 օր**<sup>99</sup>, մինչդեռ գործնականում այս ժամկետները **խախտվում են:**<sup>100</sup>
- Օրենքն ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության գործառույթներ իրականացնող **մարմինների և հատուկ կառույցների շարքին չի դատում ընտանեկան բռնության և ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցությանն հարցերով զբաղվող ՔՀԿ-ներին**<sup>101</sup>, որի արդյունքում վերջիններս **չեն կարող ներկայացնել զոհերի իրավունքները և օրինական շահերը դատարանում:**

<sup>97</sup> «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք՝ ՀՕ-180-Ն, ընդունված՝ 21.03.2018թ., հոդված 3, մաս 2, հոդված 3, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=123348>

<sup>98</sup> «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք՝ ՀՕ-320-Ն, ընդունված՝ 13.12.2017թ., հոդված 7, մաս 2, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118672>

<sup>99</sup> ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ՀՕ-110-Ն, 09.02.2018թ., հոդված 243.3, մաս 3, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132714>

<sup>100</sup> Նոնա Գալստյան, «Կանանց իրավունքների պաշտպանության մեխանիզմների ամրապնդման հեռանկարները Հայաստանում» թեմայով կլոր սեղան-քննարկում, 2019թ. հուլիսի 12, Երևան

<sup>101</sup> «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք՝ ՀՕ-320-Ն, ընդունված՝ 13.12.2017թ., հոդված 13, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118672>

- Օրենքի իմաստով՝ երեխաները կարող են համարվել ընտանիքում բռնության ենթարկված անձ միայն այն պարագայում, եթե անձամբ տուժել են ընտանեկան բռնությունից:<sup>102</sup> Մինչդեռ, ականատես լինելով այլ անդամների նկատմամբ ընտանեկան բռնության դրսևորումների, երեխաների համար ևս մի շարք բացասական հետևանքներ են առաջանում:<sup>103</sup>
- Գործնականում սեռով պայմանավորված բռնության դեպքերի հետ գործ ունենալու և զոհերին աջակցություն տրամադրելու առումով ոստիկանության, իրավապահ և դատական համակարգի ծառայողները հաճախ ցուցաբերում են հանդուրժողականություն և չեն ցուցաբերում զենդերային զգայուն մոտեցում: Այս խնդրին անդրադարձել է նաև Կոմիտեն իր Եզրափակիչ դիտարկումներում՝ մտահոգություն հայտնելով ոստիկանության ծառայողների շրջանում կանանց նկատմամբ սեռով պայմանավորված բռնության ընդունման և արդարացման մնայուն պահվածքի, ինչպես նաև ընկալումների վերաբերյալ, որ այս տեսակի բռնությունը, մասնավորապես ընտանեկան ոլորտում, մասնավոր հարց է:<sup>104</sup> Այս կապակցությամբ հարկ է նաև նշել, որ սահմանված չեն խիստ պատասխանատվության միջոցներ նշյալ օրենքով սահմանված պաշտպանական միջոցները գործարկելու պարտավորություն ունեցող պաշտոնատար անձանց կողմից պատշաճ չգործարկելու համար: Մասնավորապես, միայն սահմանված է. *«ապաստարանում տեղավորված՝ ընտանիքում բռնության ենթարկված անձի գտնվելու վայրը հրապարակելն (...) այն անձի կողմից, որն այդ մասին տեղեկացել է իր ծառայողական կամ աշխատանքային պարտականությունները կատարելու կապակցությամբ, առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով»:*<sup>105</sup>
- Խնդրահարույց է ՀՀ բոլոր մարզերում ընտանեկան բռնությունից տուժած անձանց աջակցության կենտրոնների և ապաստարանների բացակայության հարցը: Կոմիտեն իր Եզրափակիչ դիտարկումներում հանձնարարել է ՀՀ-ին ապահովել բավարար քանակի համապատասխան ապաստարանների և զոհերի կողմից խորհրդատվական,

<sup>102</sup> Տ՛ես նույն տեղում, հոդված 4, մաս 1, կետ 5:

<sup>103</sup> Նվարդ Փիլիպոսյան, «Կանանց իրավունքների պաշտպանության մեխանիզմների ամրապնդման հեռանկարները Հայաստանում» թեմայով կլոր սեղան-քննարկում, 2019թ. հուլիսի 12, Երևան

<sup>104</sup> «ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի Հայաստանի Հանրապետության կողմից կատարման վերաբերյալ 5-րդ և 6-րդ համատեղ պարբերական զեկույցի» Եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականությունների բոլոր ձևերի վերացման Կոմիտե, ընդունված՝ 2016 թվականի նոյեմբերի 25-ին, CEDAW/C/ARM/CO/5-6, պարբերություն 16, (c) կետ, հասանելի է <https://undocs.org/CEDAW/C/ARM/CO/5-6>:

<sup>105</sup> «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, ընդունված՝ 06.12.1985թ., հոդված 47.14, հասանելի է <https://www.arlis.am/documentview.aspx?docid=73129>:

ռեաբիլիտացիոն և աջակցության ծառայությունների հասանելիությունը նրանց՝ հասարակության մեջ կրկին ինտեգրվելու նպատակով:<sup>106</sup> ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսվում է «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ստեղծում, ընտանիքում բռնության դեպքերի հաշվառման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց ուղղորդման համակարգի և աջակցության տրամադրման մեխանիզմների ներդրում ինչպես նաև խնդրով զբաղվող տարբեր մարմինների և կառույցների միջև գործընկերային հարաբերությունների ամրապնդում» միջոցառումը, իսկ վերջնաժամկետ է նախատեսված մինչև 2020 թվականի նոյեմբերի 3-րդ տասնօրյակը:<sup>107</sup> Միջոցառումների ծրագրի նախագծով նախատեսված է «Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և բռնության ենթարկված անձանց պետական աջակցության մեխանիզմների ստեղծում» միջոցառումը<sup>108</sup>: Սակայն, արդյունքային ցուցանիշներում սահմանված չեն հստակ չափելի չափանիշներ, օրինակ թե քանի ապաստարան է պատրաստվում ստեղծել: Հարկ է նշել, որ ԵԽ գործող ՄԻՀ-ի զեկույցում նշված են մի շարք միջազգային չափանիշներ ապաստարանների և գոհերի կողմից խորհրդատվական, ռեաբիլիտացիոն և աջակցության ծառայությունների հասանելիության վերաբերյալ:<sup>109</sup>

- Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի՝ **որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է նախատեսված տուժողի վարքագծի հակաօրինականությունը կամ հակաբարոյականությունը**, որով պայմանավորվել է հանցագործությունը<sup>110</sup>: Ընտանեկան բռնության դեպքում նման մեղմացնող հանգամանք նախատեսելը համահունչ չէ

<sup>106</sup> «ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի Հայաստանի Հանրապետության կողմից կատարման վերաբերյալ 5-րդ և 6-րդ համատեղ պարբերական զեկույցի» Եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականությունների բոլոր ձևերի վերացման Կոմիտե, ընդունված՝ 2016 թվականի նոյեմբերի 25-ին, CEDAW/C/ARM/CO/5-6, պարբերություն 17, (c) կետ, հասանելի է՝ <https://undocs.org/CEDAW/C/ARM/CO/5-6>:

<sup>107</sup> «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 650-Լ որոշում, ընդունված՝ 16.05.2019թ.-ին, Հավելված 1, կետ 10, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131287>

<sup>108</sup> «ՀՀ-ում զենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ որոշման նախագիծ, Հավելված 2, մշակող մարմին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հանրային քննարկման ժամանակաշրջան՝ 22.05.2019թ.-06.06.2019թ., N5 գերակայություն, N12 միջոցառում, հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/1712/about>:

<sup>109</sup> «ԵԽ ՄԻՀ Դունյա Միյատովիչի 2018թ. սեպտեմբերի 16-20 Հայաստան կատարած այցին հաջորդիվ» զեկույց, ԵԽ, Ստրասբուրգ, 29-ը հունվարի 2019թ., CommDH(2019) 1, էջեր 16-17, հասանելի է հայերեն լեզվով <https://rm.coe.int/-2018-16-20-/1680920149>

<sup>110</sup> ՀՀ քրեական օրենսգրք, ՀՕ-528-Ն, ընդունված՝ 18.04.2003թ., հոդված 62, մաս 1, կետ 7, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132721>

միջազգային չափանիշներին: Մասնավորապես, ԵԽ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիայով<sup>111</sup> սահմանված է. *հանցագործությունների անընդունելի արդարացումներ են համարվում՝ այսպես կոչված, «հանուն պատվի» կատարվող հանցագործությունները*: Սա վերաբերում է, մասնավորապես, այն պնդումներին, որ տուժողի կողմից խախտվել են պատշաճ վարքագծի մշակութային, կրոնական, սոցիալական կամ ավանդույթային նորմերը կամ սովորույթները, որոնք արդարացումներ են հանդիսանում բռնության գործադրման համար:

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- xxxix. Հայերեն լեզվով թարգմանել ԵԽ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիայի Բացատրական զեկույցը :
- xl. «Ընտանեկան բռնության դեմ պայքարի ազգային ծրագիր» մշակելիս, ինչպես նաև վերոնշյալ օրենքում փոփոխություններ կատարելիս հաշվի առնել սույն բաժնում առանձնացված խնդիրները:
- xli. Սահմանել, որ ընտանեկան բռնության գործերով նախազգուշացում կիրառելու մասին որոշման բողոքարկումը չի կասեցնում վերջինիս գործողությունը:
- xlii. Նախատեսել, որ անհետաձգելի արգելող որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:
- xliii. Վերանայել ՀՀ ոստիկանության պետի 2019թ.-ի հուլիսի 17-ի թիվ 1090-Ա հրամանի հավելվածով հաստատված «Ընտանիքում բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատման չափորոշիչները» և սահմանել չափորոշիչներ, թե որ դեպքերում քանի օրով է անհրաժեշտ այն կիրառել:
- xliv. Նախատեսել ՀՀ ոստիկանության պետի՝ ընտանիքում բռնության կանխարգելման և բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում ՀՀ ոստիկանության՝ օրենքով վերապահված լիազորությունների կատարումը կարգավորելուն ուղղված գործող հրամանների համար պարտադիր հանրային քննարկման անցկացման պահանջ՝ հաշվի առնելով հանրային կարևորությունը:
- xlv. Միջոցներ ձեռնարկել դատարանի կողմից գործնականում պաշտպանական որոշման կայացման տասնօրյա առավելագույն ժամկետի պահպանման ուղղությամբ:

<sup>111</sup> «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիա, ԵԽ, Treaty Series N 210, ընդունված 11.05.2011թ.-ին, Ստամբուլ, հոդված 42, հայերեն լեզվով հասանելի է՝ <https://rm.coe.int/168046246d>:

- xlvi. Հնարավորություն ընձեռել ընտանեկան բռնության և ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության հարցերով զբաղվող ՔՀԿ-ներին ներկայացնել իրենց շահառուների իրավունքները և օրինական շահերը դատարանում:
- xlvii. Օրենսդրությամբ երեխաներին ընտանեկան բռնությունից անուղղակի տուժած անձի կարգավիճակ տալ այն դեպքերում, երբ վերջիններս ականատես են լինում ընտանեկան բռնության դրսևորումների այլ անդամների նկատմամբ:
- xlviii. Վերանայել Միջոցառումների ծրագրի նախագծի N 5 գերակայության N12 միջոցառումը և սահմանել չափելի արդյունքային ցուցանիշներ, այդ թվում՝ աջակցման կենտրոնների և ապաստարանների հստակ թիվ:
- xl ix. Ապաստարանների և գոհերի կողմից խորհրդատվական, ռեաբիլիտացիոն և աջակցության ծառայությունների հասանելիության ապահովման շրջանակներում առաջնորդվել ԵԽ գործող ՄԻՀ-ի «2018թ. սեպտեմբերի 16-20 Հայաստան կատարած այցին հաջորդիվ» զեկույցում նշված մի շարք միջազգային չափանիշներով:
  - 1. Սահմանել խիստ պատասխանատվության միջոցներ նշյալ օրենքով սահմանված պաշտպանական միջոցները գործարկելու պարտավորություն ունեցող պաշտոնատար անձանց կողմից պատշաճ չգործարկելու համար:
  - li. Փոփոխություններ կատարել ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում և որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների շարքից հանել տուժողի վարքագծի հակաօրինականությունը կամ հակաբարոյականությունը:

### 3. ՀԱՐԿԱԴԻՐ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ

Հարկադիր ամուսնության արգելքը տրվում է «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիայով, որով նախատեսված է հետևյալ 2 տեսակի վարքագծի քրեականացում՝ «*Երեխային կամ չափահասին ամուսնության հարկադրելը*» և «*Չափահասի կամ երեխայի՝ երրորդ պետության տարածք մուտք գործելը դիտավորությամբ շահագրգռելը՝ ամուսնության հարկադրելու նպատակով (նույնիսկ, եթե ամուսնությունը չի կայացել)*»:<sup>112</sup>

Հանցագործության կենտրոնական տարրն է հանդիսանում **գոհի մոտ ամուսնանալու համաձայնության բացակայությունը ֆիզիկական և հոգեբանական ուժի կիրառման**

<sup>112</sup> «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիա, ԵԽ, Treaty Series N 210, ընդունված 11.05.2011թ.-ին, Ստամբուլ, հոդված 37, հայերեն լեզվով հասանելի է՝ <https://rm.coe.int/168046246d>:

**հետևանքով:** Համաձայնությունը բացակայում է, երբ ընտանիքի անդամները կամ այլ անձինք օգտագործում են հարկադրանքի մեթոդներ, ինչպիսիք են տարբեր բնույթի ճնշումները, զգացմունքային շանտաժը, ֆիզիկական հարկադրանքը, բռնությունը, առևանգումը, մեկուսացումը կամ պաշտոնական փաստաթղթերի բռնագրավումը: Բացատրական գեկույցից պարզ է դառնում, որ «հարկադրել» բառը պետք է լայն մեկնաբանության ենթարկել՝ հաշվի առնելով նաև գործի վերաբերելի հանգամանքները<sup>113</sup>:

Բացի արարքը քրեականացնելուց, անհրաժեշտ է նաև համապատասխան միջոցներ կիրառել նաև ամուսնությունը կարգավորող այլ իրավական ակտերում, մասնավորապես՝ ամուսնության գրանցման, ամուսնալուծության, երեխաների խնամակալության, գույքային, միգրացիոն և այլ հարաբերություններում: Կոնվենցիան երաշխավորում է տուժողի համար նմանատիպ ամուսնության դադարեցումը՝ առանց անհարկի ֆինանսական և վարչական բեռի:<sup>114</sup>

Միջազգային փորձում առկա են տարբեր մոտեցումներ առ այն, թե ինչպես քրեականացնել հարկադիր ամուսնությունները: **Որոշ երկրներ, ինչպիսին Նորվեգիան է, նախատեսում է հարկադիր ամուսնության քրեականացում առանձին հանցակազմի ներքո՝** վերջինս դիտարկելով որպես անձի ազատության դեմ ուղղված հատկապես ծանր հանցագործություն. *«ցանկացած անձ, որը ուժով, ազատությունից զրկմամբ, ճնշմամբ կամ սպորինի որևէ այլ գործողությամբ կամ նման գործողությունների սպառնալիքով հարկադրում է մեկ այլ անձի ամուսնանալ, մեղավոր է հարկադիր ամուսնության պարտադրելու համար»*:<sup>115</sup> Այլ երկրներ, որոնց թվին է պատկանում Գերմանիան, այն քրեականացնում են այլ՝ **«Հարկադրելը» հանցակազմի ներքո**, որտեղ քրեական օրենսդրության դրույթներով պատասխանատվության են ենթարկվում այն անձինք, որոնք սպորինաբար, ուժի գործադրմամբ կամ վնաս հասցնելու սպառնալիքով մեկ այլ անձի ստիպում են կատարել կամ չկատարել որևէ արարք կամ պատճառում են հոգեկան տառապանք:<sup>116</sup>

<sup>113</sup> “Explanatory Report to the Council of Europe Convention on preventing and combating violence against women and domestic violence”, Council of Europe, Treaty Series - No. 210 Istanbul, 11.V.2011, paras 195-197, available at: <https://rm.coe.int/16800d383a?fbclid=IwAR2oc-R4CnkBnAyzNv0cTLCQjnTBcn3viGJjanAL96EW149tpMxhsR-PddA>

<sup>114</sup> «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիա, ԵԽ, Treaty Series N 210, ընդունված 11.05.2011թ.-ին, Ստամբուլ, հոդված 32, հայերեն լեզվով հասանելի է՝ <https://rm.coe.int/168046246d>:

<sup>115</sup> Penal Code of Norway, section 222(2), available at <http://app.uio.no/ub/ujur/oversatte-lover/data/lov-19020522-010-eng.pdf>

<sup>116</sup> German Criminal Code, section 237, available at [www.gesetze-im-internet.de/englisch\\_stgb/englisch\\_stgb.html](http://www.gesetze-im-internet.de/englisch_stgb/englisch_stgb.html)

Ամուսնական տարիքի հասած կնոջ և տղամարդու ամուսնանալու իրավունքը սահմանված է որպես սահմանադրական իրավունք<sup>117</sup>: Թեև հարկադիր ամուսնության որոշ խիստ ծանր հետևանքներ, ինչպիսիք են սեռական շահագործման և հարկադիր ծառայությունների մեջ ներգրավելը, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը կարող են քրեորեն հետապնդվել ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված «Ազատությունից ապօրինի զրկել» հանցագործության շրջանակներում,<sup>118</sup> իսկ անձին առևանգելը՝ համանուն վերտառությամբ հողվածի ներքո, սակայն **ՀՀ քրեական օրենսգիրքը չի նախատեսում հարկադիր ամուսնության արգելքը՝ ոչ որպես առանձին հանցակազմ, ոչ էլ՝ այլ հանցակազմերի ներքո:**

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

- lii. Քրեականացնել հարկադիր ամուսնությունը՝ կամ որպես առանձին հանցակազմ, կամ՝ այլ հանցակազմերի ներքո:
- liii. Սահմանել հարկադիր ամուսնությունից տուժողի համար նմանատիպ ամուսնության դադարեցման պարզեցված ընթացակարգ՝ առանց անհարկի ֆինանսական և վարչական բեռի:

#### 4. ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԲՈՒՆԱԲԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ

Պատմականորեն շատ երկրների օրենքներ ուղղակի կամ անուղղակի կերպով ներել են ամուսնական բռնաբարությունը: Մինչդեռ ԵԽ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիայի<sup>119</sup> համաձայն՝ **սեքսուալ բնույթի հանցագործությունները քրեականացվում են՝ անկախ կատարողի և տուժողի միջև հարաբերությունից: Մ.Ս.-ն ընդդեմ Բուլղարիայի գործում** դատարանը եզրակացրել է՝ ՄԻԵԿ-ի համաձայն պետությունների դրական պարտավորությունը անհրաժեշտ է մեկնաբանել որպես *«առանց անձի կամարտահայտության սեքսուալ բնույթի ցանկացած գործողություն»*

<sup>117</sup> ՀՀ Սահմանադրություն, ընդունված՝ 1995թ. հուլիսի 5-ին, փոփոխություններ՝ 2015թ., հոդված 34, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75780>

<sup>118</sup> ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, ընդունված՝ 18.04.2003թ., հոդվածներ 131 և 133, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132721>

<sup>119</sup> «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիա, ԵԽ, Treaty Series N 210, ընդունված 11.05.2011թ.-ին, Ստամբուլ, հոդված 43, հայերեն լեզվով հասանելի է՝ <https://rm.coe.int/168046246d>:



քրեականացնելու և արդյունավետ հետապնդելու պահանջ՝ ներառյալ, այն դեպքերի, երբ տուժողը ֆիզիկական դիմադրություն ցույց չի տվել»:<sup>120</sup>

Այս կապակցությամբ հանձնարարական է ներկայացրել նաև **Կոմիտեն Եզրափակիչ դիտարկումներում՝** քրեականացնել ամուսնական բռնաբարությունները՝ համաձայն Կոմիտեի 19 Ընդհանուր հանձնարարականի և նախորդ հանձնարարականների:<sup>121</sup>

**ՀՀ քրեական օրենսդրությունն առանձին հանցակազմով չի նախատեսում ամուսնական բռնաբարությունը կամ սեռական բռնության որևէ այլ ձև՝ մտերիմ կամ ընտանեկան հարաբերությունների համատեքստում:** Միևնույն ժամանակ, տուժողի և կատարողի միջև հարաբերությունը չի համարվում արդարացնող կամ մեղմացնող հանգամանք, ուստի՝ ընտանեկան սեռական բռնությունը հետապնդվում է սեռական բռնության ընդհանուր նորմերի համաձայն<sup>122</sup>:

Արդյունքում, թեև տեսականորեն առկա չէ խոչընդոտ բռնության այդ դեպքերը քննելու համար, այնուամենայնիվ, պրակտիկայում նման դեպքերը սակավաթիվ են, ինչը կապված է նաև նման հանցագործությունների լատենտության, ինչպես նաև կարծրատիպերի հետ: Մասնավորապես, դեռևս **ԵՄ նախորդ ՄԻՀ-ը** Հայաստանի վերաբերյալ **զեկույցում** նշել է՝ *«Այն կանայք, ովքեր բողոքում կամ փորձում են ազատվել բռնի իրավիճակից, սովորաբար ընկալվում են որպես ընտանեկան միավորը և կայունությունը վտանգող անձինք»:*<sup>123</sup> **ԵՄ գործող ՄԻՀ-ի** վերջին **զեկույցի** համաձայն պատկերը շարունակում է մնալ նույնը. *«Բազմաթիվ*

<sup>120</sup> *M.C. v. BULGARIA*, ՄԻԵԴ, 2003թ.-ի դեկտեմբերի 4-ի վճիռ, զանգատ թիվ 39272/98, պարբ. 166, հասանելի է՝

[https://www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/resources/M.C.v.BULGARIA\\_en.asp](https://www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/resources/M.C.v.BULGARIA_en.asp):

<sup>121</sup> «ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի Հայաստանի Հանրապետության կողմից կատարման վերաբերյալ 5-րդ և 6-րդ համատեղ պարբերական զեկույցի» Եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականությունների բոլոր ձևերի վերացման Կոմիտե, ընդունված՝ 2016 թվականի նոյեմբերի 25-ին, CEDAW/C/ARM/CO/5-6, պարբերություն 17, (a) կետ, հասանելի է՝ <https://undocs.org/CEDAW/C/ARM/CO/5-6>, նախորդ հանձնարարականը՝ «ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի Հայաստանի Հանրապետության կողմից կատարման վերաբերյալ 4-րդ պարբերական զեկույցի» Եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականությունների բոլոր ձևերի վերացման Կոմիտե, ընդունված՝ 02.02.2019թ.-ին, CEDAW/C/ARM/CO/4/Rev.1, պարբերություն 23, հասանելի է՝ <https://www.refworld.org/docid/52dd05054.html> :

<sup>122</sup> ՀՀ քրեական օրենսգրք, ՀՕ-528-Ն, ընդունված՝ 18.04.2003թ., «Անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությամբ գլուխ 18, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132721>

<sup>123</sup> «ԵՄ ՄԻՀ Նիլս Մուժնիեկսի 2014թ.հոկտեմբերի 5-9 Հայաստան կատարած այցին հաջորդիվ» զեկույց, 2015թ., պար 124, հասանելի է՝ <https://rm.coe.int/16806db6db>



հայերի համար տանը տեղի ունեցող բռնությունը դեռ մասնավոր հարց է, և այն ընտանիքի սահմաններից դուրս բերելը հաճախ համարվում է ամոթալի և խայտառակիչ»:<sup>124</sup>

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

liv. Նախատեսել քրեական պատասխանատվություն ընտանեկան միջավայրում կատարված սեռական բռնության, մասնավորապես՝ ամուսնական բռնաբարության համար:

#### 5. ՀԵՏԱՍՏՈՒՄԸ (STALKING) ՔՐԵԱԿԱՆ ԱՅՎԱԾ ՉԷ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիան միջազգային տեսանկյունից առաջին կոնվենցիան է, որը նկարագրում է հետամտման **հասկացությունը**, այն է՝ **«դիտավորյալ և շարունակական սպառնալից վարքագիծ՝ ուղղված այլ անձի դեմ, որը վերջինիս մոտ առաջացնում է իր անվտանգության վերաբերյալ վախ»**:<sup>125</sup> Բացատրական զեկույցը հետապնդման սահմանման մեջ ներառում է. *«պարբերաբար մեկ այլ անձի հետապնդելը, մեկ այլ անձի հետ անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավվելը կամ անձին հետևելու մասին իմաց տալը: Սա ներառում է ֆիզիկապես տուժողին հետևելը, այցելելը տուժողի աշխատավայր կամ սպորտային կամ կրթական հաստատություն, ինչպես նաև տուժողին հետևելը վիրտուալ տիրույթում (...), տուժողի գույքը վնասելը, տուժողի անձնական իրերի վրա աննշան հետքեր թողնելը, տուժողի ընտանի կենդանուն հետապնդելը կամ անձի տվյալներով առցանց կեղծ անուններով հաշիվներ բացելը կամ սուտ տեղեկություններ տարածելը»*:<sup>126</sup> Կոնվենցիան նախատեսում է սույն հանցակազմի քրեականացում ներպետական օրենսդրությամբ, իսկ վերջինիս դրսևորումներից մեկի՝ հոգեբանական բռնության դեպքում, պետություններն ազատ են նախատեսել ոչ քրեական սանկցիաներ:

Հետապնդման հանցակազմի **պարտադիր տարրերն** են՝ հանցագործության կատարողի **դիտավորությունը և** տուժողի **մոտ վախի զգացողության առաջացումը՝ որպես հետևանք**: Թեև առկա են բազմաթիվ ահաբեկող վարքագծի դրսևորումներ, սակայն այս պարագայում նշյալ

<sup>124</sup> «ԵԽ ՄԻՉ Դունյա Միյատովիչի 2018թ. սեպտեմբերի 16-20 Հայաստան կատարած այցին հաջորդիվ» զեկույց, ԵԽ, Ստրասբուրգ, 29-ը հունվարի 2019թ., CommDH(2019) 1, էջեր 14-15, հասանելի է հայերեն լեզվով՝ <https://rm.coe.int/-2018-16-20-/1680920149>

<sup>125</sup> «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիա, ԵԽ, Treaty Series N 210, ընդունված 11.05.2011թ.-ին, Ստամբուլ, հոդված 34, հայերեն լեզվով հասանելի է՝ <https://rm.coe.int/168046246d>:

<sup>126</sup> “Explanatory Report to the Council of Europe Convention on preventing and combating violence against women and domestic violence”, Council of Europe, Treaty Series - No. 210 Istanbul, 11.V.2011, paras. 182 and 183, available at: <https://rm.coe.int/16800d383a?fbclid=IwAR2oc-R4CnkBnAyzNv0cTLcQjnTBcn3viGfjanAL96EW149tpMxhsR-PddA>

բաղադրիչը վերաբերվում է տուժողի մոտ վախի զգացում առաջացնելու դիտավորությանը և այդպիսի հետևանքին: Հանցանք կատարած անձը պետք է կանխամտածված նպատակ ունենա հասնելու որոշակի արդյունքի կամ առնվազն պետք է իմանա կամ իմացած լինի, որ տուժողը կարող է ենթարկվել որոշակի բացասական ազդեցությունների: Ավելին, հետամտումը ենթադրում է պարբերական և նշանակալի միջադեպեր ընդգրկող արարքների շարք, այսինքն՝ առանձին կատարված մեկ արարք ինքնին չի կարող որակվել որպես հետամտում:

**ՄԻԵԴ**-ն իր նախադեպային որոշումներով սահմանում է. *«պետությունների կողմից հետամտման-նմանվող վարքագծին պատշաճ չարձագանքելը ՄԻԵԿ խախտում է հանդիսանում»*: Օրինակ, *Hajduová v. Slovakia* գործով դիմումատուն տևական ժամանակաշրջան սպառնալիքների գոհ էր դարձել, և պետությունը անհրաժեշտ քննություն չէր իրականացրել ապահովելու համար անձի արժանապատվությունը: ՄԻԵԴ-ը գտավ, որ այս գործողությունները հանդիսանում են ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածի խախտում:<sup>127</sup>

**ԵՆՍ առնվազն 35 անդամ երկրներ քրեականացրել են հետամտումը**: Իրավական համակարգերը տարբերվում են այն վարքագծերի մասով, որոնք ենթադրում են վնասի պատճառում: Շատ երկրներ կիրառում են ավելի լայն եզրույթներ, ինչպիսիք են ոտնձգությունները (harassment): Մնացած երկրները մանրամասն թվարկում են հետամտումների բոլոր հնարավոր վարքագծերը՝ ցանկը սպառնիչ չսահմանելով:<sup>128</sup> Միջազգային փորձի լավագույն ձևակերպումները տրված են Գերմանիայի, Բելգիայի, Դանիայի քրեական օրենսգրքերով:

Այսպես, **հետամտման մանրամասն սահմանման լավ օրինակ** կարելի է գտնել **Գերմանիայի քրեական օրենսգրքում**<sup>129</sup>, որտեղ բավականին մանրամասն նշվում են հետամտում համարվող վարքագծի տեսակները. *«1) ֆիզիկական մտերմություն պահանջելը, 2) անձի հետ շփում ունենալու համար հեռահաղորդակցության կամ կապի այլ միջոցներ օգտագործելը կամ երրորդ անձի ներգրավելը, 3) անձնական տվյալները ոչ պատշաճ օգտագործելը՝ անձի անունից ապրանքներ կամ ծառայություններ պատվիրելու համար, կամ երրորդ կողմերին դրդելը՝ շփման մեջ մտնելու նրա հետ, 4) կյանքի, ֆիզիկական*

<sup>127</sup> *Hajduová v. Slovakia*, ՄԻԵԴ, 2010թ.-ի նոյեմբերի 30-ի վճիռ, գանգառ թիվ 2660/03, պարբերություն՝ 45, հասանելի է <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016805a32b0>

<sup>128</sup> “Raising awareness of violence against women: article 13 of the Istanbul Convention”, Analytical Study on the implementation of Recommendation Rec (2002) 5, Council of Europe, Hagemann-White 2014, <https://rm.coe.int/168046e1f1>

<sup>129</sup> Գերմանիայի քրեական օրենսգրք, 238-րդ բաժին, հասանելի է հետևյալ հղումով՝ [www.gesetzeim-internet.de/englisch\\_stgb/](http://www.gesetzeim-internet.de/englisch_stgb/)

անձեռնմխելիության, ֆիզիկական առողջության դեմ ուղղված, կամ անձին կամ նրա մտերիմ անձանց ազատությունից զրկելու սպառնալիքը, 5) համանման այլ վարքագիծ դրսևորելը և մարդու անձնական ազատության վրա լրջորեն ներգործելը»։ Հարկ է նշել, որ վերջին կետը հասկացության մեջ շեշտադրումը վարքագծից տեղափոխում է արդյունքի վրա՝ դրանով մեծապես ընդլայնելով դրույթի գործողության տիրույթը։

Այլ քրեական օրենքներում **հետամտման հասկացության սահմանումը կապվում է կատարողի մտադրության հետ։ Բելգիան**, օրինակ, առաջին ԵՄ անդամ պետությունն էր, որը նախատեսեց պատիժ հետամտման հանցագործության համար և տվեց դրան լայն սահմանում՝ դրա հիմքում դնելով հանցանք կատարած անձի մտադրությունը։ Բելգիայի քրեական օրենսգրքի ներկայիս ձևակերպման համաձայն<sup>130</sup> անձը, «որը հետապնդել է մեկ այլ անձի, այն դեպքում, երբ իմացել կամ պետք է իմանար, որ իր վարքագծի պատճառով նա խորապես խաթարում է այդ անձի հանգիստը», համարվում է մեղավոր հետամտման համար։

Ի վերջո, **Դանիան** հետաքրքիր կարգավորում է նախատեսել հետամտման վերաբերյալ, որի համաձայն՝ **ուստիկանությունը կարող է նախազգուշացնել կամ պաշտպանության միջոց կիրառել նախքան անձի մեղավորությունը հաստատելը**։ Դանիայի քրեական օրենսգրքի<sup>131</sup> նշվում է. «Ցանկացած անձ, որը խաթարում է մեկ այլ անձի հանգիստը ներխուժելով նրա կյանք, հետապնդելով նրան նամակներով կամ որևէ այլ նման կերպ անհարմարություն պատճառելով նրան, անտեսելով ուստիկանության նախազգուշացումները, պարտավոր է մուծել տուգանք կամ կարող է ազատազրկվել 2 տարին չգերազանցող ժամկետով։ Սույն դրույթի համաձայն տրված նախազգուշացումը վավեր է 5 տարի ժամկետով»։

**ՀՀ քրեական օրենսդրությամբ հետամտման վերաբերյալ հատուկ կարգավորումներ նախատեսված չեն**։ Թեև մի շարք հանցագործություններ պարունակում են հետամտման հանցակազմի որոշակի հատկանիշներ,<sup>132</sup> սակայն, հետամտման վերաբերվող մի շարք հանցակազմեր ներկայումս ընդգրկված չեն ՀՀ քրեական օրենսգրքում, օրինակ՝ տուժողին անընդհատ հետևելը կամ տուժողի հետ անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավվելը։ Իրականում, օրենսգրքում բացակայող կարևոր տարրը կարողությունն է՝ թիրախավորել ամբողջական վարքագիծը, ոչ թե՛ առանձին գործողությունները։

<sup>130</sup> Բելգիայի քրեական օրենսգիրք, 442.bis հոդված, հասանելի է հետևյալ հղումով՝ [www.legislationline.org/documents/section/criminal-codes](http://www.legislationline.org/documents/section/criminal-codes)

<sup>131</sup> Դանիայի քրեական օրենսգիրք, 265-րդ հոդված, հասանելի է հետևյալ հղումով՝ [www.legislationline.org/documents/section/criminal-codes](http://www.legislationline.org/documents/section/criminal-codes)

<sup>132</sup> ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, ընդունված՝ 18.04.2003թ., հոդվածներ 119՝ «Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը», 137՝ «Սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը և 182՝ «Շոթթումը», հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132721>

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

- iv. Քրեականացնել հետամտումը՝ ցանկալի է որպես առանձին հանցագործություն, իսկ հնարավորության բացակայության դեպքում՝ որպես այլընտրանք փոփոխությունների ենթարկել գործող հանցագործությունների հանցակազմերը՝ ներառելով հետապնդման բոլոր հնարավոր դրսևորումները:

### 6. ՀՀ-ՈՒՄ ՆԵՐԴՐՎԱԾ ՉԷ ՓԱՍՏԱՑԻ ԿԱՍ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԻՍԱԿԱՐԳՈՎ ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

Ընտանեկան օրենսգրքի համաձայն. *«ամուսնությունը կնքվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումն իրականացնող մարմիններում, որից հետո ամուսինների միջև ծագում են իրավունքներ ու պարտականություններ»*:<sup>133</sup> Այս նորմը ենթադրում է, որ ՀՀ-ում որպես օրինական ամուսնություն ճանաչվում է բացառապես քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող մարմիններում գրանցված ամուսնությունը, ուստի և հայ ընտանիքներում որպես ավանդույթ տեղ գտած եկեղեցական ծիսակարգերով կատարված ամուսնությունը չի կարող ամուսինների համար իրավական հիմք հանդիսանալ իրավունքների և պարտականությունների ձեռք բերման համար: Կարող ենք նշել, որ այս լրջագույն խնդիրների առաջ կանայք կանգնում են նաև ՀՀ օրենսդրական դաշտում փաստացի ամուսնության ինստիտուտի բացակայության պատճառով: Ցավոք, այսօր Հայաստանում, և մասնավորապես՝ հեռավոր գյուղերում, միշտ չէ, որ կանայք իրազեկված են գործող նորմերի և օրենսդրական պահանջների վերաբերյալ, ուստի կնքելով ամուսնություն միայն եկեղեցական ծիսակարգով, ամուսնալուծությունից հետո, իրավունք չեն ստանում հավակնել ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելուն:

Այս կապակցությամբ իր մտահոգությունն է հայտնել նաև **Կոմիտեն Եզրափակիչ դիտարկումներում**. *«փաստացի միություններում գտնվող կանայք (...) թողնվում են առանց որևէ տեսակի իրավաբանական պաշտպանության՝ կապված այսպիսի միության դադարեցումից հետո ծագող տնտեսական հարցերի հետ»*: Կոմիտեի հանձնարարականն է՝ *«(գ) ապահովել փաստացի միություններում կանանց տնտեսական իրավունքների իրավական պաշտպանությունը, ինչպես նաև այն երեխաների, որոնք ծնվել են նման միություններում՝*

<sup>133</sup> ՀՀ ընտանեկան օրենսգրք, ՀՕ-123-Ն, ընդունված՝ 09.11.2004թ., հոդված 9, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=66138>

համաձայն Կոմիտեի N 29 Ընդհանուր հանձնարարականի<sup>134</sup>՝ ամուսնության, ընտանեկան հարաբերությունների և դրանց պառակտման տնտեսական հետևանքների<sup>135</sup>

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ivi. Դիտարկել ՀՀ օրենսդրությամբ փաստացի ամուսնության ինստիտուտի ներդրման հնարավորությունը:

#### 7. ԱԼԻՄԵՆՏ ՎՃԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ՀԱՃԱԽ ՉԻ ՊԱՀՊԱՆՎՈՒՄ

ՀՀ ընտանեկան օրենսգիրքը պարտավորեցնում է ծնողներին պահել իրենց երեխաներին<sup>136</sup>, իսկ ՀՀ քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվություն է նախատեսում ծնողի կողմից՝ երեխային պահելուց չարամտորեն խուսափելու համար:<sup>137</sup> Սակայն, դատական պրակտիկայում համատարած են այն դեպքերը, երբ ծնողը հրաժարվում է վճարել ալիմենտ երեխայի ապրուստի համար և այդ նպատակով դիտավորյալ թաքցնում է իր՝ արտագնա կամ այլ՝ չգրանցված աշխատանքներից ստացված եկամուտները, իսկ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը չունի համապատասխան լծակներ՝ փնտրելու և բացահայտելու ալիմենտ վճարելու պարտավորություն ունեցող ծնողի փաստացի եկամուտները և ունեցվածքը:

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ivii. Փոփոխություններ կատարել ՀՀ քրեական օրենսգրքի 173-րդ հոդվածում և հոդվածի գործողությունը տարածել նաև ՀՀ ընտանեկան օրենսդրությամբ ալիմենտ վճարելու պարտավորություն ունեցող անձի կողմից իր եկամուտներն ու գույքը դիտավորյալ թաքցնելու վրա:

Iviii. Օրենսդրությամբ նախատեսել հայցային վաղեմության չկիրառման հնարավորություն նշյալ իրավահարաբերության նկատմամբ եկամուտների և ունեցվածքի թաքցնելու

<sup>134</sup> «Ամուսնության, ընտանեկան հարաբերությունների և դրանց պառակտման տնտեսական հետևանքները» վերտառությամբ N 29 Ընդհանուր հանձնարարական, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականությունների բոլոր ձևերի վերացման Կոմիտե, ընդունված՝ 2013թ-ին, հասանելի է՝ [https://www2.ohchr.org/english/bodies/cedaw/docs/comments/CEDAW-C-52-WP-1\\_en.pdf](https://www2.ohchr.org/english/bodies/cedaw/docs/comments/CEDAW-C-52-WP-1_en.pdf)

<sup>135</sup> ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի Հայաստանի Հանրապետության կողմից կատարման վերաբերյալ 5-րդ և 6-րդ համատեղ պարբերական զեկույցի» Եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականությունների բոլոր ձևերի վերացման Կոմիտե, ընդունված՝ 2016 թվականի նոյեմբերի 25-ին, CEDAW/C/ARM/CO/5-6, պարբերություն 46, 47(c) կետ, հասանելի է՝ <https://undocs.org/CEDAW/C/ARM/CO/5-6>:

<sup>136</sup> ՀՀ ընտանեկան օրենսգիրք, ՀՕ-123-Ն, ընդունված՝ 09.11.2004թ., հոդված 68, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=66138>

<sup>137</sup> ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, ընդունված՝ 18.04.2003թ., հոդված 173, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132721>

փաստը հաստատվելու դեպքում, իսկ ալիմենտ բռնագանձել՝ ալիմենտ ստանալու իրավունքի ծագման պահից, եթե առկա է դրա անհրաժեշտությունը:

- lix. Տրամադրել համապատասխան լծակներ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը՝ փնտրելու և բացահայտելու ալիմենտ վճարելու պարտավորություն ունեցող ծնողի փաստացի եկամուտները և ունեցվածքը:

## 8. ԿԱՆԱՆՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԲԱՎԱՐԱՐ ՉՍՓՈՎ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ՉԷ

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է. «Ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է (...)» և «Բաժնային կամ համատեղ սեփականության մասնակցի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում նրա պարտատերն իրավունք ունի ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնել՝ դրա վրա բռնագանձում տարածելու համար»:<sup>138</sup>

Սակայն, պրակտիկային հայտնի են դեպքեր, երբ ամուսնու սեփականության իրավունքը խախտվում է մյուս ամուսնու կողմից՝ ամուսնության ընթացքում ձեռք բերված և համատեղ սեփականություն հանդիսացող գույքի օտարման գործարքներ կնքելու դեպքում: Տվյալ դեպքերում գույքն օտարող ամուսինը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում և նոտարական գրասենյակում ստորագրում է մի փաստաթուղթ, որով հայտնում է օտարվող գույքի նկատմամբ երրորդ անձանց իրավունքների բացակայության մասին, այնինչ վերջինիս ամուսինն ունենում է գույքի նկատմամբ սեփականության իրավունք: Արդյունքում, ամուսինը զրկվում է իր սեփականության իրավունքից և ստիպված է լինում դատական կարգով գույքը հետ պահանջել, մինչդեռ մյուս կողմը կարող է դիտավորյալ իր սեփականության ներքո չունենալ գույք կամ այլ եկամուտներ, սնանկ ճանաչվել, որի արդյունքում վերջինս չի կարողանում հետ ստանալ իր գույքը:

Նոտարական գրասենյակները և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն հասանելիություն ունեն ԲԿԱԳ մարմիններում գրանցված ամուսնությունների միայն մի փոքր մասին:

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

- lx. Նոտարական գրասենյակներում և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում գույքի օտարման գործարքներ կնքելիս պարտադիր

<sup>138</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-239, ընդունված՝ 05.05.1998թ., հոդվածներ 200 և 201, մաս 1, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=74658>

կերպով պահանջել ներկայացնելու ամուսնության վկայականի պատճենը, իսկ ամուսնացած չլինելու դեպքում՝ այդ մասին վկայող տեղեկանք՝ ՀՀ իրավասու մարմնից:

lxi. ՀՀ ՔԿԱԳ մարմիններում գրանցված բոլոր ամուսնությունների մասին տեղեկատվությունը դարձնել էլեկտրոնային՝ ապահովելով Նոտարական գրասենյակներին և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին դրա հասանելիությունը:

lxii. Ամուսնությունների գրանցման վերաբերյալ տեղեկատվության փոխանակման քայլեր ձեռնարկել ՀՀ և այլ երկրների ՔԿԱԳ մարմինների միջև, հատկապես՝ այն երկրների, որտեղ ձևավորված է հայկական սփյուռք, մասնավորապես այն դեպքերում, երբ ամուսիններից առնվազն մեկն ունի ՀՀ քաղաքացիություն:

#### 9. ԱՌԿԱ ՉԷ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ ԱՌ ԱՅՆ, ԹԵ ՈՒՄ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ՄՍՏԱՆԻՆ

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ *«Մինչև ամուսնությունն ամուսիններից յուրաքանչյուրի գույքը, ինչպես նաև ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը նրա սեփականությունն է»*, իսկ *«անհատական օգտագործման գույքը (հագուստը, կոշիկը և այլն), բացառությամբ թանկարժեք իրերի և պերճանքի առարկաների, եթե նույնիսկ այն ձեռք է բերվել ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր միջոցների հաշվին, համարվում է այն ամուսնու սեփականությունը, որն այդ գույքն օգտագործել է»*.<sup>139</sup> «Թանկարժեք մետաղների մասին» ՀՀ օրենքի համաձայն ոսկին, արծաթը, պլատինը և պալատիումը թանկարժեք մետաղներ են:<sup>140</sup>

Փաստաբաններն այս նորմերը մեկնաբանում են տարբեր կերպ. ոմանք պնդում են, որ ամուսնական մատանին պատկանում է միայն կնոջը, քանի որ այն հանդիսանում է նվեր, սակայն ոմանք էլ այն կարծիքն են կիսում, որ ամուսնական մատանին հանդիսանում է համատեղ սեփականություն, քանի որ այն թանկարժեք իր և պերճանքի առարկա է:<sup>141</sup>

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

lxiii. Օրենսդրությամբ հստակ կարգավորել նշանադրության և ամուսնության ժամանակ տրված մատանիների սեփականության հարցերը:

<sup>139</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգրք, ՀՕ-239, ընդունված՝ 05.05.1998թ., հոդված 201, մասեր 2 և 3 հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=74658>

<sup>140</sup> «Թանկարժեք մետաղների մասին» ՀՀ օրենք, ՀՕ-83-Ն, ընդունված՝ 23.05.2006թ, հոդված 2, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=64637>

<sup>141</sup> *«Կնոջ ամուսնական մատանին ու՝ մ սեփականությունն է»*, <https://iravaban.net/19959.html>



## 10. ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆ

ՀՀ ընտանեկան օրենսգիրքը սահմանում է. «1. Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական՝ տասնութ տարեկան տարիքի հասնելը, բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի: 2. Անձը կարող է ամուսնանալ նաև 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաև 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է»:<sup>142</sup>

Այս կապակցությամբ Կոմիտեն իր Եզրափակիչ դիտարկումներում արտահայտել է իր մտահոգությունը և ներկայացրել ՀՀ-ին հետևյալ հանձնարարականը. «որպես ամուսնանալու նվազագույն շեմ սահմանել 18 տարեկանը՝ առանց բացառությունների՝ համաձայն Կոնվենցիայի 16-րդ հոդվածի և Կոմիտեի N 21 Ընդհանուր հանձնարարականի»<sup>143</sup> և «ներառել հաջորդ պարբերական զեկույցում վիճակագրական տվյալներ՝ առանձնացված ըստ սեռի և ազգային պատկանելության, այն բացառությունների վերաբերյալ, որոնք գրանցել են ամուսնությունը 18 տարեկանից փոքր տարիքում»<sup>144</sup>:

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- lxiv. Փոփոխություններ կատարել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 10-րդ հոդվածում և որպես ամուսնանալու նվազագույն շեմ սահմանել 18 տարեկանը՝ առանց բացառությունների:
- lxv. Վարել վիճակագրություն մինչև 18 տարեկան հասակում գրանցված ամուսնությունների վերաբերյալ:

<sup>142</sup> ՀՀ ընտանեկան օրենսգիրք, ՀՕ-123-Ն, ընդունված՝ 09.11.2004թ., հոդված 10, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=66138>

<sup>143</sup> «Մշակութային կյանքում մասնակցելու բոլորի իրավունքի մասին» վերտառությամբ Ընդհանուր հանձնարարական N 21, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականությունների բոլոր ձևերի վերացման Կոմիտե, ընդունված՝ 2009թ.-ին, հասանելի է՝ <https://www.refworld.org/docid/4ed35bae2.html>

<sup>144</sup> ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի Հայաստանի Հանրապետության կողմից կատարման վերաբերյալ 5-րդ և 6-րդ համատեղ պարբերական զեկույցի» Եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականությունների բոլոր ձևերի վերացման Կոմիտե, ընդունված՝ 2016 թվականի նոյեմբերի 25-ին, CEDAW/C/ARM/CO/5-6, պարբերություն 47 (a) և (b) կետեր, հասանելի է՝ <https://undocs.org/CEDAW/C/ARM/CO/5-6>:



IV. ԿԱՆԱՆՑ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ (ԿԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ) ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Գենդերային ճեղքվածքի մասին 2018թ.-ի հաշվետվության» համաձայն՝ Հայաստանը 149 երկրների շրջանում զբաղեցրել է 148-րդ հորիզոնական՝ ըստ «Առողջապահական» ցուցանիշի:<sup>145</sup>

Պեկինյան գործողությունների ծրագրի «Կանայք և առողջապահությունը» ենթաբաժնի ռազմավարական նպատակներն են՝

- *«Առողջապահության ոլորտի և տեղեկատվության ու հարակից ոլորտների համապատասխան մատչելի ու բարձրորակ ծառայությունների մատչելիության ընդլայնում կանանց համար նրանց կյանքի ողջ ընթացքում,*
- *Կանխարգելիչ ծրագրերի ամրապնդում՝ ուղղված կանանց առողջության ամրապնդմանը:*
- *Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններին, ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ին և սեռական ու վերարտադրողական առողջության հարցերին առնչվող ձեռնարկումների իրականացում՝ գենդերային գործոնների հաշվառումով:*
- *Կանանց առողջության պահպանման հետազոտությունների օժանդակություն և տեղեկատվության տարածում:*
- *Կանանց առողջության պահպանմանը հատկացվող ռեսուրսների ծավալի մեծացում և այդ ոլորտում գործունեության վերահսկողությունը»:<sup>146</sup>*

Ըստ Կոմիտեի Եզրափակիչ դիտարկումների՝ «Համաձայն Կոմիտեի N 24 Ընդհանուր հանձնարարականի»<sup>147</sup> Կոմիտեն առաջարկում է՝

- a) *շարունակել գործադրել ջանքեր ապահովելու կանանց և աղջիկներին մատչելի և հասանելի հակաբեղմնավորիչներով, մասնավորապես՝ նրանց համար, ովքեր համարվում են աղքատ և բնակվում են գյուղական կամ հեռավոր շրջաններում,*
- b) *բարելավել առողջապահական, սեռական և վերարտադրողական առողջության շրջանակներում մատուցվող հիմնական ծառայությունների հասանելիությունը/մատչելիությունը կանանց համար, մասնավորապես՝*

<sup>145</sup> The Global Gender Gap Report 2018, World Economic Forum, page 9-10, available at: [http://www3.weforum.org/docs/WEF\\_GGGR\\_2018.pdf](http://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2018.pdf)

<sup>146</sup> «Պեկինյան գործողությունների ծրագիր», Ընդհանուր վեհաժողովի բանաձև թիվ S-23/2, հավելված, և բանաձև թիվ S-23/3, հավելված, ընդունված՝ 1995 թ. սեպտեմբերի 15-ին Պեկինում: Փաստաթուղթն անգլերեն լեզվով հասանելի է՝ <http://www.un.org/womenwatch/daw/beijing/pdf/BDPfA%20E.pdf>, հայերեն լեզվով ամփոփագիրն հասանելի է՝ [http://www.un.am/up/file/Beijing-Decl\\_PLAT\\_ARM.pdf](http://www.un.am/up/file/Beijing-Decl_PLAT_ARM.pdf), էջ 19:

<sup>147</sup> «Կանայք և առողջությունը» վերտառությամբ Ընդհանուր հանձնարարական N 24, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականությունների բոլոր ձևերի վերացման Կոմիտե, ընդունված՝ 1999թ.-ին, հասանելի է՝ <https://www.refworld.org/docid/453882a73.html>

հաշմանդամություն ունեցող, ազգային փոքրամասնություն հանդիսացող և գյուղական համայնքներում բնակվող կանանց համար՝ ավելացնելով բյուջեից հատկացվող միջոցները առողջապահության ոլորտի և պարտադիր առողջապահական ապահովագրության համակարգի ներդրման համար,

- c) ապահովել կանանց բոլոր խմբերի համար ժամանակակից հակաբեղմնավորիչների և ընտանեկան պլանավորմանը, ինչպես նաև անվտանգ հղիության արհեստական ընդհատումներին առնչվող ծառայությունների մատչելիությունը,
- d) մշակել և իրականացնել իրազեկման արշավներ և առողջապահական ոլորտի անձնակազմի կարողությունների զարգացում՝ վերացնելու առողջապահական ծառայությունների մատուցման ժամանակ խտրականությունը հաշմանդամություն ունեցող և ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ով ապրող կանանց համար,
- e) մշակել և անցկացնել հատուկ իրազեկման արշավներ ՄԻԱՎ-ի և պատասխանատու սեռական վարքագծի վերաբերյալ՝ ներառյալ սահմանամերձ շրջաններում և միգրացիոն համայնքներում»<sup>148</sup>

Սույն աշխատության շրջանակներում անդրադարձ ենք կատարելու կանանց վերարտադրողական առողջության դրսևորումներից սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների և ՄԻԱՎ/ՉԻԱՀ վարակ ունեցող կանանց թեմաներին:

## 1. ՀԱՐԿԱՂԻՐ ԱԲՈՐՏ ԿԱՏԱՐԵԼԸ, ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ, ԹԵՐԻ Է ԿԱՐԳԱՎՈՐՎԱԾ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ

**ՀՀ-ում հարկադիր արորտներից առավել տարածված են արորտները՝ պայմանավորված սեռով:** Այդ մասին է վկայում ԵՄ փաստահավաք առաքելության հավաքագրված տեղեկատվությունը. «ՀՀ-ում սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները հիմնականում իրականացվում են գույքնկերների կամ ընտանիքի անդամների կողմից հարկադրելու արդյունքում»<sup>149</sup>

<sup>148</sup> ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի Հայաստանի Հանրապետության կողմից կատարման վերաբերյալ 5-րդ և 6-րդ համատեղ պարբերական զեկուլյի» Եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականությունների բոլոր ձևերի վերացման Կոմիտե, ընդունված՝ 2016 թվականի նոյեմբերի 25-ին, CEDAW/C/ARM/CO/5-6, պարբերություն 27, հասանելի է՝ <https://undocs.org/CEDAW/C/ARM/CO/5-6>:

<sup>149</sup> ԵՄ փաստահավաք առաքելության այցը ՀՀ տեղի է ունեցել 2016 թվականի հոկտեմբերի 17-21, Տե՛ս «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով սահմանված չափանիշների տեսանկյունից ՀՀ քրեական օրենսդրության վերլուծություն, Եվրոպայի խորհուրդ, հոկտեմբեր 2017, էջ 32, հայերեն լեզվով հասանելի է <https://rm.coe.int/gap-analysis-armenian-law-arm/168075bae2>:

Այսպես, Ադրուսակ 10-ի վերլուծությունից կարող ենք տեսնել, որ Հայաստանում 1995թ.-ից սկսած արձանագրվել են նորածինների սեռերի կենսաբանական նորմերով ընդունված հարաբերակցությունից զգալիորեն բարձր ցուցանիշներ՝ 110-114 տղա՝ 100 ծնված աղջկա համեմատ: Վիճակը որոշակիորեն բարելավվել է, և 2018թ.-ի տվյալների համաձայն Հայաստանում թվով 100 աղջկան համապատասխանում է թվով 110 տղա:

**Ադրուսակ 10. Ծնվածներն ըստ սեռի, 1990-2018թթ.<sup>150</sup>**

Տարի	Սեռերի հարաբերակցությունը ծննդյան պահից
1990	1.06 (100 աղջիկ նորածնին՝ 106 տղա նորածին)
1995	1.10 (100 աղջիկ նորածնին՝ 110 տղա նորածին)
2000	1.20 (100 աղջիկ նորածնին՝ 120 տղա նորածին)
2005	1.16 (100 աղջիկ նորածնին՝ 116 տղա նորածին)
2010	1.15 (100 աղջիկ նորածնին՝ 115 տղա նորածին)
2011	1.14 (100 աղջիկ նորածնին՝ 114 տղա նորածին)
2012	1.15 (100 աղջիկ նորածնին՝ 115 տղա նորածին)
2013	1.13 (100 աղջիկ նորածնին՝ 113 տղա նորածին)
2014	1.13 (100 աղջիկ նորածնին՝ 113 տղա նորածին)
2015	1.13 (100 աղջիկ նորածնին՝ 113 տղա նորածին)
2016	1.12 (100 աղջիկ նորածնին՝ 112 տղա նորածին)
2017	1.10 (100 աղջիկ նորածնին՝ 110 տղա նորածին)
2018	1.11 (100 աղջիկ նորածնին՝ 111 տղա նորածին)

Համեմատության համար նշենք, որ ծննդյան պահից սեռերի հարաբերակցության կենսաբանորեն ձևավորված նորմալ միջակայքը՝ ծնված յուրաքանչյուր աղջկա հաշվով սովորաբար մոտ է 105 տղա/100 աղջիկ նորածին ցուցանիշին՝ 104-ից 106-ի սահմաններում հնարավոր շեղումներով:<sup>151</sup> Նախածննդաբերության շրջանում սեռի ընտրությունը հանգեցնում է նորածինների սեռերի հարաբերակցության խախտմանը՝ հասնելով 110 և 120 տղա յուրանքայուր 100 աղջիկ նորածինների հաշվով, որը վկայում է Հարավային, Արևելյան և

<sup>150</sup> Սեռերի հարաբերակցությունը հաշվարկվում է ծնված տղաների և աղջիկների թվաքանակների հարաբերությամբ: 1990-2017թթ. Տվյալները վերցված են ՀՀ վիճակագրական կոմիտեից, իսկ 2018թ. տվյալները՝ ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության (Central Intelligence Agency) կողմից վարվող Համաշխարհային փաստերի գրքից (World Factbook), հասանելի է՝ <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/am.html>:

<sup>151</sup> «Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում. Ժողովրդագրական տվյալներ և վերլուծություն» հետազոտություն, Քրիստոֆ Զ. Գիլմոտո, Երևան, 2013թ., էջ՝ 16, հասանելի է [https://www.un.am/up/library/Sex%20Imbalance%20report\\_arm.pdf](https://www.un.am/up/library/Sex%20Imbalance%20report_arm.pdf)

Կենտրոնական Ասիայի մի շարք երկրներում գենդերային խտրականության դրսևորման և որդի ունենալու նախապատվության մասին:<sup>152</sup>

**Հայաստանը, 2018թ.-ի տվյալների համաձայն, համարվում է աշխարհում արական սեռի նորածինների գերակշռության ամենաբարձր մակարդակներից մեկը** և իր վատ դիրքերով՝ Հնդկաստանի հետ համատեղ, զիջում է միայն Չինաստանին Հյուսիսային Մարիանյան կղզիներին և Լիխտենշտեյնին, որը պատկերված է Աղյուսակ 11-ում:<sup>153</sup>

**Աղյուսակ 11. Արական սեռի նորածինների գերակշռության ամենաբարձր հորիզոնականները աշխարհում**

Դիրք	Երկիր	Սեռերի հարաբերակցությունը ծննդյան պահից
1	Լիխտենշտեյն	1.26 (100 աղջիկ նորածին՝ 126 տղա նորածին)
2	Հյուսիսային Մարիանյան կղզիներ	1.17 (100 աղջիկ նորածին՝ 117 տղա նորածին)
3	Չինաստան	1.13 (100 աղջիկ նորածին՝ 113 տղա նորածին)
3	Հայաստան	1.11 (100 աղջիկ նորածին՝ 111 տղա նորածին)
4	Հնդկաստան	1.11 (100 աղջիկ նորածին՝ 111 տղա նորածին)
4	Ալբանիա	1.09 (100 աղջիկ նորածին՝ 109 տղա նորածին)
5	Սան Մարինո	1.09 (100 աղջիկ նորածին՝ 109 տղա նորածին)
6	Ադրբեջան	1.08 (100 աղջիկ նորածին՝ 108 տղա նորածին)
6	Կոսովո	1.08 (100 աղջիկ նորածին՝ 108 տղա նորածին)
6	Սան Մարինո	1.08 (100 աղջիկ նորածին՝ 108 տղա նորածին)

Հաջորդ՝ Աղյուսակ 12-ի վերլուծությունում նկարագրված է սեռերի հարաբերակցությունը ծննդյան պահից ՀՀ մարզային մակարդակով, որից պարզ է դառնում, որ այս պահի դրությամբ նորման գերազանցում են Տավուշը (թվով 100 աղջկան՝ 121 տղա), Արագածոտնը (թվով 100 աղջկան՝ 116 տղա), Լոռին (թվով 100 աղջկան՝ 114 տղա), Երևանը

<sup>152</sup> Ժամանակի ընթացքում այս միտումը տեղափոխվել է աշխարհագրորեն՝ սկսելով 1980-ականներից մի շարք ասիական երկրներում (Չինաստան, Հնդկաստան և Հարավային Կորեա), որին 1990-ականներին հաջորդում են Կովկասյան որոշ երկրներ (Ադրբեջան, Հայաստան և Վրաստան), և վերջին տարիներին այս միտումը նկատվում էր արդեն Մոնտենեգրոյում, Ալբանիայում և Վիետնամում: Sex «Ծննդյան անհամամասնությունները կախված սեռից. Ընթացիկ միտումները, հետևանքները և քաղաքական ենթադրությունները» (“Sex Imbalances at Birth. Current trends, consequences and policy implications”), ՄԱԲՀ, Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի գրասենյակ, Բանգկոկ, 2012թ., էջ՝ 2, հասանելի է <https://www.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Sex%20Imbalances%20at%20Birth.%20PDF%20UNFPA%20APRO%20publication%202012.pdf>

<sup>153</sup> Աղբյուրը՝ ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության (Central Intelligence Agency) կողմից վարվող Համաշխարհային փաստերի գրքից (World Factbook), հասանելի է <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/fields/351.html#AM>


(թվով 100 աղջկան՝ 111 տղա), Գեղարքունիքը և Արարատը (թվով 100 աղջկան՝ 109 տղա) և Արմավիրը (թվով 100 աղջկան՝ 107 տղա): Հարկ է նշել, որ Գեղարքունիքը բավականին բարելավել է իր դիրքերը:

**Աղյուսակ 12. ՀՀ մարզերի և ք. Երևանի սեռերի հարաբերակցության գործակիցը ծննդից, 2010-2017թթ.**

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
<b>Ընդամենը</b>								
<b>Total</b>	1.15	1.14	1.15	1.13	1.13	1.13	1.12	1.10
Ք.Երևան								
<i>C. Yerevan</i>	1.12	1.14	1.13	1.11	1.12	1.11	1.06	1.11
Արագածոտն								
<i>Aragatsotn</i>	1.26	1.21	1.18	1.13	1.20	1.13	1.20	1.16
Արարատ								
<i>Ararat</i>	1.09	1.21	1.17	1.13	1.15	1.16	1.18	1.09
Արմավիր								
<i>Armavir</i>	1.21	1.13	1.19	1.13	1.17	1.13	1.21	1.07
Գեղարքունիք								
<i>Gegharkunik</i>	1.31	1.26	1.23	1.18	1.14	1.23	1.22	1.09
Լոռի								
<i>Lory</i>	1.11	1.09	1.19	1.12	1.04	1.10	1.08	1.14
Կոտայք								
<i>Kotayk</i>	1.10	1.15	1.16	1.11	1.14	1.15	1.09	1.05
Շիրակ								
<i>Shirak</i>	1.16	1.12	1.09	1.17	1.20	1.10	1.21	1.03
Սյունիք								
<i>Syunik</i>	1.19	0.98	1.16	1.15	1.13	1.08	1.08	1.05
Վայոցձոր								
<i>Vayots Dzor</i>	1.06	1.17	1.21	1.17	1.14	0.93	1.13	1.05
Տավուշ								
<i>Tavush</i>	1.19	1.05	1.09	1.17	1.14	1.19	1.10	1.21

Հաջորդ՝ Աղյուսակ 13–ում Սեռերի հարաբերակցության գործակիցն աճում է ըստ կնոջ ծնած երեխաների թվաքանակի՝ ծննդի առաջին և երկրորդ որոշակիորեն բնականոն մակարդակից՝ 1.07-ից երրորդ կարգի ծնունդների շրջանում հասնելով 1.30-ի:

**Աղյուսակ 13. Սեռերի հարաբերակցության գործակիցն ըստ ծննդի կարգի, 2002-2017թթ.**



Հարկ է նշել, որ սելեկտիվ աբորտների վերաբերյալ պաշտոնական վիճակագրություն բացակայում է: Սակայն, առկա իրավիճակը ներկայացնող սեռի ծնունդների հարաբերակցությունի հիման վրա կատարված հաշվարկներով շրջանառված թվերի

համաձայն՝ տարեկան Հայաստանում ընդհատվում են սեռով պայմանավորված շուրջ 800-1400 հղիություն:<sup>154</sup> Այս խնդրին անդրադարձել են նաև մի շարք միջազգային կառույցներ:

Այսպես՝ **ՄԱԲՀ-ի** համաձայն՝ *«Կանայք ընտանիքում ենթարկվում են սեռով պայմանավորված հոգեբանական և ֆիզիկական բռնության՝ կապված միայն արական սեռի երեխաներ ունենալու հետ և հարկադրված են լինում սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումներ իրականացնել, որը բացասաբար է անդրադառնում նրանց հոգեկան և ֆիզիկական առողջության վրա:<sup>155</sup> «Մինչև 2060 թվականը Հայաստանը կորցնում է 93 հազար աղջիկ կամ ապագա մայր»:<sup>156</sup> Թեև մի շարք գործոնների արդյունքում գրանցվել է նշյալ պրակտիկայի զգալի չափով մեղմացում, այնուամենայնիվ այդ ձեռքբերումները դեռևս խիստ փխրուն են և չեն կարող պահպանվել ներկայիս քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և անվտանգության մարտահրավերների լույսի ներքո<sup>157</sup>: Այսինքն, նշյալից*

---

<sup>154</sup> «Հայաստանը տարեկան կորցնում է շուրջ 1400 աղջիկ»: Տես՝ «Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում. ժողովրդագրական տվյալներ և վերլուծություն» հետազոտություն, Քրիստոֆ Զ. Գիլմոտ, ՄԱԲՀ, Երևան, 2013թ., էջ՝ 7, հասանելի է [https://www.un.am/up/library/Sex%20Imbalance%20report\\_arm.pdf](https://www.un.am/up/library/Sex%20Imbalance%20report_arm.pdf), որտեղ հղում է կատարվում «Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները Հայաստանում» զեկույցին, ՄԱԲՀ, Երևան, 2011, հասանելի է՝ [https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Sex-selective abortions report Arm.pdf](https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Sex-selective%20abortions%20report%20Arm.pdf), Տես նաև՝ «Հայաստանում ընդհատվում են սեռով պայմանավորված շուրջ 800-1000 հղիություն: Ներկայացված թիվը հաշվարկային է և բխում է առկա իրավիճակը ներկայացնող սեռի ծնունդների հարաբերակցությունից»: Տես՝ հարցազրույց 2015թ. օգոստոսի 26-ին՝ ՄԱԲՀ-ի հայաստանյան գրասենյակի տվյալ պահին գործադիր ներկայացուցիչ Գարիկ Հայրապետյանի հետ «Սելեկտիվ աբորտների հիմնախնդիրները Հայաստանում» թեմայով ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի» (CEDAW) Հայաստանում կիրառման, այդ թվում՝ ՄԱԿ-ի կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեին 2014թ.-ին ներկայացված ՀՀ վերջին (համակցված 5-րդ և 6-րդ) զեկույցի իրավական մոնիթորինգ՝ այլընտրանքային զեկույցում, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ներկայիս Իրավաբանների հայկական ասոցիացիա), Երևան, 2005թ. հոկտեմբեր, էջ 62, հասանելի է՝ [https://armla.am/wp-content/uploads/2016/05/Monitoring-report CEDAW\\_arm.pdf](https://armla.am/wp-content/uploads/2016/05/Monitoring-report CEDAW_arm.pdf)

<sup>155</sup> «Հանրային հետազոտություն հայաստանում սեռական և վերարտադրողական առողջության իրավունքների վերաբերյալ զեկույց», ՄԱԲՀ, Համլետ Գասոյան և այլոք, պատրաստված՝ «Սեռական և վերարտադրողական առողջության ծառայությունների հզորացում» ծրագրի շրջանակներում՝ ՀՀ օմբուդսմենի աշխատակազմի հետ համագործակցությամբ, Երևան, 2016թ., պարթ82, հասանելի է՝ <https://www.un.am/up/library/Report Sexual Reproductive Rights ARM.pdf>

<sup>156</sup> «Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում. ժողովրդագրական տվյալներ և վերլուծություն» հետազոտություն, Քրիստոֆ Զ. Գիլմոտ, Երևան, 2013թ., էջ՝ 86, հասանելի է [https://www.un.am/up/library/Sex%20Imbalance%20report\\_arm.pdf](https://www.un.am/up/library/Sex%20Imbalance%20report_arm.pdf)

<sup>157</sup> «Քաղաքականության առաջարկություններ՝ ուղղված Հայաստանում սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների նվազման արդյունավետ ռազմավարություններ ունենալուն» համառոտագիր, Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ և ՄԱԲՀ-ի կողմից իրականացվող «Տղաների նախապատվության և աղջիկների թերաբժևորման կանխարգելմանն ուղղված գլոբալ ծրագրի» շրջանակներում, հասանելի է՝ <https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Policy%20Brief%20Monitoring%20English%20final.pdf>

ակնհայտ է, որ ծնունդների բնականոն համարվող սեռային հարաբերակցության խախտումները Հայաստանի համար ներկայացնում են լուրջ ժողովրդագրական սպառնալիք:

**ՄԱԿ-ի ՏՄԻԿ-ը** ևս մտահոգություն է հայտնել՝ «Հայաստանն ունի արական ծնելիության ամենաբարձր մակարդակներից մեկն ամբողջ աշխարհի մակարդակով՝ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների հետևանքով»:<sup>158</sup>

**Կոմիտեն Եզրափակիչ դիտարկումներում** նշել է. «Կոմիտեն մտահոգված է սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածված պրակտիկայով»: Կոմիտեի հանձնարարականները մասնակից պետություններին հետյալն են. «կիրարկել նոր ընդունված օրենքը՝ միտված սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների և ապահովել, որ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների պրակտիկան, Առողջապահության նախարարության նախաձեռնությամբ, անմիջապես դադարեցվի այնպիսի միջոցներով, ինչպիսիք են ավելի ընգրկուն գենդերային հավասարության քաղաքականությունների ներդրումը և աղջիկներ ունեցող ընտանիքներին աջակցությունը (...):»<sup>159</sup>

**ԵՆ նախորդ ՄԻՉ-ն** իր զեկույցում նշել է, որ այդ պրակտիկան կապված է հետևյալ գործոնների հետ. «տղա երեխա ունենալու արմատացած հակում, որը նպատակ է հետապնդում կրճատել ընտանիքի անդամների թվաքանակը և ժամանակակից վերարտադրողական տեխնոլոգիաների հասանելիություն: Սեռով պայմանավորված ընդհատումները ցույց են տալիս Հայաստանյան հասարակության մեջ կանանց համար առկա անբարենպաստ իրավիճակը և գենդերային անհավասարությունը»:<sup>160</sup>

**ԵՆԽՎ-ը** դատապարտում է սեռով պայմանավորված աբորտները. «մինչև ծնունդը սեռի ընտրությունը որպես երևույթ, որի արմատները գալիս են գենդերային անհավասարության մշակույթից և էլ ավելի են խորացնում կանանց նկատմամբ բռնության մթնոլորտը»: Բացի այդ, բանաձևը «կոչ է անում Հայաստանի իշխանություններին ուսումնասիրել սեռով պայմանավորված ընտրության պատճառները, հավաքել վստահելի տվյալներ, ջանքեր

<sup>158</sup> “Concluding observations on the combined second and third periodic reports of Armenia”, UN Committee on Economic, Social and Cultural Rights, CESCR, E/C.12/ARM/CO/2-3, 16 July 2014, para 22, available at: <https://resourcingrights.org/en/document/srobworx1j0h7463r0ey7gb9?page=6>

<sup>159</sup> ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի Հայաստանի Հանրապետության կողմից կատարման վերաբերյալ 5-րդ և 6-րդ համատեղ պարբերական զեկույցի» Եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականությունների բոլոր ձևերի վերացման Կոմիտե, ընդունված՝ 2016 թվականի նոյեմբերի 25-ին, CEDAW/C/ARM/CO/5-6, պարբերություն 28-29, հասանելի է՝ <https://undocs.org/CEDAW/C/ARM/CO/5-6>:

<sup>160</sup> «ԵՆ ՄԻՉ Նիլս Մուժնիեկսի 2014թ.հոկտեմբերի 5-9 Հայաստան կատարած այցի հաջորդիվ» զեկույց, 2015թ., պար 156, հասանելի է՝ <https://rm.coe.int/16806db6db>



գործադրել հասարակության մեջ կանանց կարգավիճակը բարձրացնելու ուղղությամբ, և այլն»<sup>161</sup>:

**«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքն** օրենսդրական տեսանկյունից միակն է, որը սահմանում է աբորտ իրականացնելու ժամկետները. *«աբորտ կարող է իրականացվել մոր պահանջով մինչև հղիության 12-րդ շաբաթը, իսկ բժշկի թույլտվությամբ, բժշկական կամ սոցիալական պատճառներից էլնելով՝ մինչև հղիության 22-րդ շաբաթն ընկած ժամանակահատվածում»*:<sup>162</sup> ՀՀ կառավարության որոշմամբ<sup>163</sup> հաստատվել է համապատասխան կարգ, սակայն ապացույցներ չկան առ այն, որ բժիշկները հետևում են այդ որոշմանը:

ՀՀ քրեական օրենսգիրքը տարբեր պատասխանատվություններ է նախատեսում ապօրինի աբորտ կատարելու համար՝ բժշկական մասնագիտացում ունեցող անձանց կողմից և բժշկական մասնագիտացում չունեցող անձանց կողմից:<sup>164</sup>

2016թ.-ին «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ՝ միտված այս արատավոր պրակտիկայի դեմ պայքարելուն, որոնք նախատեսում են սեռով պայմանավորված աբորտների կատարման արգելք, ինչպես նաև եռօրյա ժամանակաշրջան՝ հղի կնոջ կողմից ընդհատման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու համար՝ որպես կանխարգելիչ միջոցառում<sup>165</sup>, իսկ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում նախատեսվեցին հոդվածներ, որոնցով՝ *համապատասխանաբար պատասխանատվություն է նախատեսվում բժշկի կողմից հղիության արհեստական ընդհատում (աբորտ) կատարելուց առաջ և հետո օրենքով նախատեսված անհրաժեշտ միջոցառումներ չիրականացնելու (վերաբերվում է հղիության արհեստական ընդհատման և կանխման վերաբերյալ անվճար խորհրդատվություն և վերջնական որոշում կայացնելու*

<sup>161</sup> “Prenatal sex selection” Resolution N 1829, PACE, adopted on 3 October 2011, 29th Sitting, Strasbourg, available at: <https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-EN.asp?fileid=18020&lang=en>

<sup>162</sup> «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենք, ՀՕ-474-Ն, ընդունված՝ 11.12.2002թ., հոդված 10, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=75284>

<sup>163</sup> «Հղիության արհեստական ընդհատման կարգն ու պայմանները հաստատելու և ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի N 1116-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության N 180-Ն որոշում, ընդունված՝ 23.02.2017թ., հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=111980>:

<sup>164</sup> ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, ընդունված՝ 18.04.2003թ., հոդված 122, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132721>

<sup>165</sup> «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք՝ ՀՕ-134-Ն, ընդունված՝ 29.06.2016թ., հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=107500>



համար ժամանակահատված չտրամադրելուն) և օրենքով թույլատրված դեպքերում հղիության արհեստական ընդհատում (աբորտ) իրականացնելիս օրենքով նախատեսված պարտադիր փաստաթղթերը չստանալու համար:<sup>166</sup> ՀՀ վարչապետի համապատասխան որոշմամբ<sup>167</sup> հղիության արհեստական ընդհատման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը:

Միջոցառումների ծրագրի նախագծով նախատեսված է. «Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման 2018-2022թթ. ծրագրի իրականացում» միջոցառումը,<sup>168</sup> իսկ ակնկալվող արդյունք՝ «Հանրապետությունում նորածինների սեռերի անհամամասնության կրճատում, պտղի սեռով պայմանավորված՝ հղիության արհեստական ընդհատումների թվի իջեցումը և աղջիկ երեխաների արժևորումը»:<sup>169</sup> Այն խիստ ընդհանուր է, և հասկանալի չէ, թե կոնկրետ ինչ գործողություններ են իրականացվելու դրա շրջանակում, ինչպես նաև՝ ինչ կոնկրետ արդյունք է սպասվում, և որոնք են դրա քանակական և որակական ցուցանիշները:

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիան կնոջ վերարտադրողական իրավունքների պաշտպանության նպատակով պահանջում է քրեականացնել հարկադիր աբորտ կատարելը՝ առանց կնոջ նախնական համաձայնության ցանկացած եղանակով վերջինիս հղիությունը ընդհատելը, ինչպես նաև պատասխանատվություն է նախատեսում նաև հարկադիր աբորտ կատարելուն աջակցելու կամ դրդելու համար:<sup>170</sup> Հարկադիր աբորտը սահմանվում է. «տարաբնույթ գործողություններ, որոնց արդյունքում սաղմնավորման արդյունքը հեռացվում է»:<sup>171</sup> Ինչպես

<sup>166</sup> «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, ընդունված՝ 06.12.1985թ., հոդվածներ 47.12 և 47.13, հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=73129>:

<sup>167</sup> «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի N 755-Լ որոշում, ընդունված՝ 11 հունիսի, 2018թ., հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=124384>

<sup>168</sup> Նշենք, որ իրականացվել է նաև «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների 2015-2017 թվականների կանխարգելման ծրագիրը» հաստատված՝ ՀՀ առողջապահության նախարարի 2015թ. մայիսի 08-ի N 1129-Ս և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015թ. մայիսի 13-ի N 75-Ս/1 համատեղ հրամանով:

<sup>169</sup> «ՀՀ-ում գեղեցիկ քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ որոշման նախագիծ, Հավելված 2, մշակող մարմին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հանրային քննարկման ժամանակաշրջան՝ 22.05.2019թ.-06.06.2019թ., N5 գերակայություն, N1 միջոցառում, հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/1712/about>:

<sup>170</sup> «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիա, ԵԽ, Treaty Series N 210, ընդունված 11.05.2011թ.-ին, Ստամբուլ, հոդվածներ 39 և 41, հայերեն լեզվով հասանելի է՝ <https://rm.coe.int/168046246d>:

<sup>171</sup> “Explanatory Report to the Council of Europe Convention on preventing and combating violence against women and domestic violence”, Council of Europe, Treaty Series - No. 210 Istanbul, 11.V.2011, para. 204,

տեսնում ենք, կնոջ կողմից նախապես և տեղեկացված կերպով տրված համաձայնությունը պարտադիր պայման է հանդիսանում:

**Իսպանիայի** քրեական օրենսգիրքը նախատեսում է հարկադիր աբորտ կատարելու իրավախախտումը՝ հետևյալ տեսքով. «*Առանց կնոջ համաձայնության հարկադիր աբորտ կատարող անձը պատժվում է չորսից ութ տարի ժամկետով ազատազրկմամբ և որևէ բժշկական գործունեության կամ պետական կամ մասնավոր գինեկոլոգիական կլինիկաներում, հաստատություններում և վիրահատարաններում որևէ ծառայություն մատուցելու արգելքով երեքից տասը տարի ժամկետով*:<sup>172</sup>

Ինչ վերաբերվում է **սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումներին**, միջազգային պրակտիկում կարելի է առանձնացնել այդ երևույթի դեմ պայքարի երկու հիմնական ուղղություն՝

1. **Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների օրենսդրական արգելքների սահմանում**: Օրինակ, 2002 թվականին **Չինաստանի** կառավարությունը հանդես եկավ «Ընտանիքի պլանավորման մասին» նոր օրենքով, համաձայն որի՝ արգելվում է ուլտրաձայնային տեխնոլոգիաների կիրառումը երեխայի կամ պտղի սեռը պարզելու նպատակով: Ըստ այդ օրենքի՝ «*սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատում իրականացնող բժիշկը տուգանվում է, իսկ ծնողները զրկվում են հետագայում երեխա ունենալու իրավունքից*»: <sup>173</sup> 2006 թվականին օրենքի խախտման արդյունքում կառավարության կողմից փակվեցին մի շարք բժշկական հաստատություններ: <sup>174</sup> Մակայն, օրենսդրական փոփոխված մեխանիզմը թույլ էր և, ըստ էության, թույլ էր տալիս գտնել այն շրջանցելու տարբերակներ: <sup>175</sup> **Հնդկաստանում** պտղի սեռի որոշման հետ կապված բժշկական հետազոտություններն արգելվել են 1994 թվականից, իսկ պատասխանատվության միջոցները ներառում են սարքերի ազդրավում, տուգանքներ, ազատազրկում՝ տարբեր ժամկետներով և բժշկական գործունեությամբ զբաղվելու լիցենզիայի դադարեցում: Հնդկաստանում ևս պրակտիկայում չի պահպանվում այս արգելքը. իրավական հետևանքներից խուսափելու

available at: <https://rm.coe.int/16800d383a?fbclid=IwAR2oc-R4CnkBnAyzNv0cTLCQjnTBcn3viGJjanAL96EW149tpMxhsR-PddA>

<sup>172</sup> Իսպանիայի քրեական օրենսգիրք, հոդված 144, հասանելի է հետևյալ կայքէջում՝ [www.mjusticia.gob.es](http://www.mjusticia.gob.es):

<sup>173</sup> Hemminki E., Zhuochun W., Guiying C. and Kirsi V. (2005), “Illegal Births and Legal Abortions - The Case of China.” *Reproductive Health* 2(5). doi: 10.1186/1742-4755-2-5. Ebenstein A. Y. and Sharygin E. J., The Consequences of the “Missing Girls” of China, *THE WORLD BANK ECONOMIC REVIEW*, VOL. 23, NO. 3, pp. 399–425 doi:10.1093/wber/lhp012, Advance Access Publication - November 5, 2009.

<sup>174</sup> Joseph K., “China: crackdown on abortion of girls,” *New York Times*, June 1, 2006. Retrieved from [www.nytimes.com/2006/06/01/world/asia/01briefs-brief-003.ready.html?\\_r=5](http://www.nytimes.com/2006/06/01/world/asia/01briefs-brief-003.ready.html?_r=5)

<sup>175</sup> Ebenstein A. Y. and Sharygin E. J., The Consequences of the “Missing Girls” of China, *The World Bank Economic Review*, VOL. 23, NO. 3, pp. 399–425, Advance Access Publication - November 5, 2009.

համար բժիշկները ծնողներին պտղի սեռը հաղորդելու համար կարող են ասել, օրինակ՝ «*դուք լավ ֆուտբոլիստ եք ունենալու*»՝ տղայի դեպքում, կամ «*ցավում եմ, ամպամած օր է ձեզ համար*», եթե պտուղն իգական է, ուստի իրավախախտումները բացահայտելու պահանջի ճնշման ներքո իշխանությունները դիմում են ազդարարներին խրախուսելու դրամական միջոցների օգնությամբ:<sup>176</sup> ԱՄՆ-ում 2009-2013թթ. դաշնային և նահանգային մակարդակներում առաջադրվել է ավելի քան 60 օրինագիծ, որից մինչ այժմ նահանգների օրենսդիրներն ընդունել են 8 նման օրենք, որոնց համաձայն՝ հղիության արհեստական ընդհատում կատարող բժիշկները ենթակա են տարբեր չափերի պատասխանատվության՝ ազատագրվումից և տուգանքներից մինչև մասնագիտական գործունեությամբ զբաղվելու սահմանափակումներ և վնասի փոխհատուցում (հղի կնոջ ու նրա ընտանիքի կողմից հայցի առկայությամբ): Դեռևս թղթի վրա մնացող մի շարք օրինագծեր պատասխանատվություն են սահմանում անգամ այն անձանց համար, որոնք պարզապես աջակցել են սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատում իրականացնելու հնարավորություն փնտրած հղի կնոջը: Դաշնային մակարդակում սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման արգելք սահմանող մի շարք օրինագծեր Ներկայացուցիչների պալատ են ներկայացվել 4 անգամ:<sup>177</sup>

**2. Աղջիկների նկատմամբ հոգածության բարձրացում, ինչն իր մեջ ներառում է աղջիկների արժևորման գիտակցության բարձրացում, աղջիկ երեխաների համար հավելյալ սոցիալական երաշխիքների սահմանում և սեռի ընտրության տեխնոլոգիաների հասանելիության նվազեցում:** «Հոգածություն աղջիկների նկատմամբ» քարոզարշավն իրագործվել է աշխարհի 24 երկրներում, որտեղ երեխաների, այդ թվում նաև նորածինների սեռերի համամասնությունը չափազանց մեծ է, և ներառում է տվյալ երկրում աղջիկների թվաքանակի պակասը լրացնելուն ուղղված մի շարք ծրագրեր, ընդհուպ մինչև աղջիկների համար անվճար հանրակրթության ապահովումը:<sup>178</sup>

**ՀՀ օրենսդրության և միջազգային լավագույն փորձի համադիր վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ՀՀ քրեական օրենսգիրքը չի պատասխանում այն հարցին,**

---

<sup>176</sup> «Առողջապահության ոլորտում սեռի հատկանիշով պտղի խտրական ընտրության կանխարգելման քաղաքականության և գործող պրակտիկայի վերլուծություն», Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2016, պար՝ 7, 23, 24, <https://ichd.org/?laid=2&com=module&module=static&id=1104>

<sup>177</sup> Նույն տեղում, պար՝ 57:

<sup>178</sup> «Քաղաքականության առաջարկություններ Հայաստանում սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների նվազեցմանն ուղղված արդյունավետ միջամտության ռազմավարությունների վերաբերյալ», World Vision Հայաստան, Գոհար Շահնազարյան, Սիրան Հովհաննիսյան, Երևան, Ստոդիկ 2017, հասանելի է՝ [http://www.yso.am/files/Policy%20Recommendations%20%20Report\\_ARM.pdf](http://www.yso.am/files/Policy%20Recommendations%20%20Report_ARM.pdf)

արդյո՞ք հարկադիր աբորտի վերաբերյալ նորմերը կարգավորվում են ապօրինի աբորտներին, թե՛ մարմնական վնասվածքներ պատճառելու վերաբերյալ իրավանորմերով: Սակայն, երկու հոդվածներն էլ չեն համապատասխանում «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիայի պահանջներին, քանի որ՝ ՀՀ քրեական օրենսգիրքը տարբեր պատասխանատվություններ է նախատեսում ապօրինի աբորտ կատարելու համար՝ բժշկական մասնագիտացում ունեցող անձանց կողմից և բժշկական մասնագիտացում չունեցող անձանց կողմից, մինչդեռ **հարկադիր աբորտի հանցակազմում հաճախ սուբյեկտը ոչ թե փաստացի աբորտ կատարող անձն է, այլ՝ կնոջը հարկադրելուն դրող անձինք**, որի մասին առավել մանրամասն նկարագրված է սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների ենթաբաժնում, **ապօրինի աբորտի հոդվածի դրույթները չեն տարբերակում տուժողի համաձայնությամբ և դրա բացակայությամբ իրականացված աբորտների միջև, ապօրինի աբորտ կատարելու համար նախատեսված սանկցիան չի համապատասխանում հարկադիր աբորտների համար նախատեսված սանկցիային, քանի որ այն պետք է համապատասխան լինի ծանր մարմնական վնասվածքներ պատճառելու համար նախատեսված սանկցիային:**

Ինչ վերաբերվում է սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումներին, ապա հարկ է նշել, որ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն պատասխանատվության միջոցներ բժիշկների համար, ովքեր հայտնում են պտղի սեռի մասին ծնողներին և նախատեսված չեն աղջիկ երեխաների համար խրախուսման միջոցներ, օրինակ՝ «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ<sup>179</sup> աղջիկ երեխա ունենալու համար: Բացի այդ, գրասենյակային ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ առկա չէ ցուցանիշների վրա հիմնված որևէ մեթոդաբանություն, որով ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը կիրականացնի վերահսկողություն հղիության ընդհատումների նկատմամբ, մասնավորապես՝ սեռով պայմանավորված:

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

lxvi. ՀՀ քրեական օրենսգրքում որպես առանձին հանցակազմ նախատեսել հարկադիր աբորտների կատարումը և սահմանել ավելի խիստ պատասխանատվություն, քան՝ ապօրինի աբորտ իրականացնելու համար, հստակեցնել սուբյեկտների շրջանակը՝

<sup>179</sup> «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 275-Ն որոշում, ընդունված՝ 2014 թ. մարտի 6-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=89331>

ներառելով ընտանիքի անդամներին, ովքեր կնոջը հարկադրում են արքրտ կատարել, այդ թվում՝ սեռով պայմանավորված,

**lxvii.** նախատեսել խիստ պատասխանատվության միջոցներ բժիշկների համար, ովքեր հայտնում են պտղի սեռի մասին ծնողներին, ինչպես նաև իրականացնում են սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատում,

**lxviii.** նախատեսել խիստ պատասխանատվության միջոցներ ծնողների համար, ովքեր իրականացնում են սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատում,

**lxix.** նախատեսել աղջիկ երեխաների համար խրախուսման միջոցներ՝ փոփոխություններ կատարելով «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ և սահմանել՝ 1) երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը՝ ըստ նոր ծնված երեխայի հերթական կարգաթվի՝ ա. առաջին աղջիկ երեխայի ծնվելու դեպքում՝ հարյուր հազար դրամ, բ. երկրորդ աղջիկ երեխայի ծնվելու դեպքում՝ երեք հարյուր հազար դրամ, գ. երրորդ աղջիկ երեխայի ծնվելու դեպքում՝ մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ, դ. չորրորդ աղջիկ երեխայի ծնվելու դեպքում՝ երկու միլիոն դրամ, ե. հինգերորդ և յուրաքանչյուր հաջորդ աղջիկ երեխայի ծնվելու դեպքում՝ երեք միլիոն դրամ: 2) միաժամանակ մեկից ավելի աղջիկ երեխա ծնվելու դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը յուրաքանչյուր երեխայի համար՝ նոր ծնված երեխաներից ամենաբարձր կարգաթիվ ունեցող երեխայի համար սահմանված չափով. 3) երրորդ և յուրաքանչյուր հաջորդ աղջիկ երեխայի ծնվելու դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի՝ պետական աջակցության հաշվին մուտքագրվող չափը՝ ա. երրորդ աղջիկ երեխայի ծնվելու դեպքում՝ մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ, բ. չորրորդ աղջիկ երեխայի ծնվելու դեպքում՝ երկու միլիոն դրամ, գ. հինգերորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու դեպքում՝ երեք միլիոն դրամ:

**lxx.** պրակտիկայում սեռով պայմանավորված հղիության ընդհատումները բացահայտելու նպատակով

- նախատեսել ազդարարման մեխանիզմ, այդ թվում՝ խրախուսական միջոցների օգտագործմամբ,
- մշակել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից հղիության արհեստական ընդհատումների, մասնավորապես՝ սեռով պայմանավորված, նկատմամբ պետական վերահսկությունն իրականացնելու

ցուցանիշների վրա հիմնված մեթոդաբանություն՝ այդ ոլորտում փորձառնություն ունեցող ՔՀԿ-ների հետ համագործակցությամբ:<sup>180</sup>

- lxxi.** Միջոցառումների ծրագրի նախագծի N5 գերակայություն N1 միջոցառմամբ սահմանել, թե կոնկրետ ի՞նչ գործողություններ են իրականացվելու դրա շրջանակում, ինչպես նաև՝ ի՞նչ կոնկրետ արդյունք է սպասվում, և որո՞նք են դրա քանակական և որակական ցուցանիշները:
- lxxii.** Վերանայել Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման 2018-2022թթ. ծրագրի միջոցառումների ցանկի նախագիծը՝
- Ավելացնել կոնկրետ գործողություններ, արդյունքներ և քանակական ու որակական արդյունքային ցուցանիշներ,
  - Բացառել միջոցառումների կրկնությունը Միջոցառումների ծրագրի նախագծի հետ, օրինակ՝ «Մինչև երեք տարեկան երեխա խնամող անձանց աշխատանքի վերադառնալու հնարավորությունների ընդլայնում, այդ թվում՝ երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց՝ խնամքն աշխատանքի հետ համադրելու աջակցության ծրագրի մշակում» միջոցառումը:

## 2. ՀԱՐԿԱԴԻՐ ԱՍԼԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼԸ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՉԷ ՀՀ ՕՐԵՆՍԴԻՈՒԹՅԱՄԲ

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիան կնոջ վերաբարտադրողական իրավունքների պաշտպանության նպատակով պահանջում է քրեականացնել *«առանց կնոջ նախնական համաձայնության գործողություններ կատարելը, որոնց հետևանքով վերջինս կամլանա»*:<sup>181</sup> Ամլացումը բացատրվում է որպեսՍ «*ցանկացած գործընթաց կատարելը, որի արդյունքում կինը զրկվում է բնականորեն վերաբարտադրելու ունակությունից*»:<sup>182</sup> Ինչպես տեսնում ենք, կնոջ

<sup>180</sup> «Կարելի է դիմել նեղ մասնագիտական ՔՀԿ-ներին և պատվիրակել լիազորություն, որպեսզի վերջիններս իրականացնեն սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների մշտադիտարկում՝ ըստ ցուցումների, որի արդյունքում ՔՀԿ-ների էթիկական կոմիտեները կարող են բժշկի նկատմամբ կիրառել խրախուսական միջոցներ կամ հակառակը», գեկուցող Գևորգ Գրիգորյան, «Կանանց իրավունքների պաշտպանության մեխանիզմների ամրապնդման հեռանկարները Հայաստանում» թեմայով կլոր սեղան-քննարկում, 2019թ. հուլիսի 12, Երևան

<sup>181</sup> «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիա, ԵԽ, Treaty Series N 210, ընդունված 11.05.2011թ. -ին, Ստամբուլ, հոդված 39, հայերեն լեզվով հասանելի է՝ <https://rm.coe.int/168046246d>:

<sup>182</sup> “Explanatory Report to the Council of Europe Convention on preventing and combating violence against women and domestic violence”, Council of Europe, Treaty Series - No. 210 Istanbul, 11.V.2011, para. 205, available at: <https://rm.coe.int/16800d383a?fbclid=IwAR2oc-R4CnkBnAyzNv0cTLcQjnTBcn3viGfjanAL96EW149tpMxhsR-PddA>

կողմից նախապես և տեղեկացված կարգով տրված համաձայնությունը պարտադիր պայման է հանդիսանում:

Օրինակ, **Իսպանիայի քրեական օրենսգիրքը** «*ծանր մարմնական վնասվածք պատճառելը*» քրեականացնող հոդվածով որպես ծանր մարմնական վնասվածք պատճառել է համարվում նաև ամլացումը: Քրեական պատասխանատվություն է սահմանվում այն անձի նկատմամբ. «*որը մեկ այլ անձի որևէ ձևով կամ գործողությամբ ենթարկում է որևէ հիմնական օրգանի կամ վերջույթի, կամ զգայարանի զրկման կամ կորստի, սեռական անկարության, ամլացման, լուրջ ձևախեղման կամ որը տվյալ անձի լուրջ ֆիզիկական կամ հոգեկան հիվանդության պատճառ է*»:<sup>183</sup>

**ՀՀ քրեական օրենսգրքում** բացակայում են հարկադիր ամլացումը քրեականացնող դրույթները: Հետևաբար, այս արարքը կքննվի մարմնական վնասվածք հասցնելու մասին ընդհանուր կարգավորումների համատեքստում:<sup>184</sup>

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**lxxiii. Ներառել հարկադիր ամլացումը «դիտավորյալ առողջությանը ծանր վնաս պատճառելու» հանցակազմում:**

### 3. ԱՌԿԱ Է ՄԻԱՎ-ՁԻԱՀ ՎԱՐԱԿ ՌԻՆԵՑՈՂ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ ՀԱՎԵԼՅԱԼ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՆԱԽԱՏԵՍՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ-ում ՄԻԱՎ վարակ ունեցող անձանց բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքն ամրագրված է Սահմանադրությամբ<sup>185</sup>, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին»<sup>186</sup> և «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքներով<sup>187</sup>: ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված է «ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագիրը (2017-2021)»:<sup>188</sup>

<sup>183</sup> Իսպանիայի քրեական օրենսգիրք, հոդված 149, հասանելի է հետևյալ կայքէջում՝ [www.mjusticia.gob.es](http://www.mjusticia.gob.es):

<sup>184</sup> ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, ընդունված՝ 18.04.2003թ., գլուխ 16՝ «Կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ», հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132721>

<sup>185</sup> ՀՀ Սահմանադրություն, ընդունված՝ 1995թ. հուլիսի 5-ին, փոփոխություններ՝ 2015թ., հոդված 85, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75780>

<sup>186</sup> «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք՝ ՀՕ-42, ընդունված՝ 04.03.1996թ., հոդված 4, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=104958>

<sup>187</sup> «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենք՝ ՀՕ-103, ընդունված՝ 03.02.1997թ., հոդված 14, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=78616>

<sup>188</sup> «ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագիր (2017-2021)», հաստատված՝ ՀՀ կառավարության 2017թ. հունիսի-15-ի նիստի N 25 որոշմամբ, հասանելի է՝ <http://www.armads.am/images/NatPr.pdf>

Վիճակագրությունը հետևյալն է. 1988թ. մինչև 2019թ հունիսի 30-ը ՀՀ-ում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 3555 դեպք ՀՀ քաղաքացիների շրջանում, որոնցից 429-ը՝ 2018թ. ընթացքում: ՄԻԱՎ վարակի արձանագրված դեպքերի ընդհանուր կառուցվածքում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 2463 մարդ (69%), իգական սեռի ներկայացուցիչների մոտ արձանագրվել է վարակի 1092 դեպք (31%): ՄԻԱՎ վարակով պացիենտներից 1781-ի մոտ (կին՝ 452, երեխա՝ 34) ախտորոշվել է ՁԻԱՀ: ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի հաշվարկը 100 000 բնակչի հաշվով ցույց է տալիս, որ ամենաբարձր ցուցանիշը Շիրակում է՝ 165,7 որին հաջորդում են Լոռու, Գեղարքունիքի և Արարատի մարզերը համապատասխանաբար՝ 153,3; 121,2; 113,9:<sup>189</sup>

Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ կանայք ՄԻԱՎ-ի նկատմամբ ավելի խոցելի են, ինչը պայմանավորված է կանանց և տղամարդկանց ոչ հավասար իրավունքներով և նրանց ունեցած դերով մեր հասարակությունում և ընտանիքում:

1. Կանանց խոցելիությունը նաև և առաջ արտահայտվում է **ՄԻԱՎ-ով վարակվելու ավելի մեծ հավանականությամբ**. կինը զրկված է իր սեռական կյանքում որոշում կայացնելու հնարավորությունից՝ ամուսնու հետ սեռական հարաբերություններ ունենալու և սեռական հարաբերության ժամանակ պաշտպանվելու հարցում: Արդյունքում, համաճարաբանական տվյալների համաձայն 1000-ից ավելի ՄԻԱՎ վարակ ունեցող կանանց 98 տոկոսը փաստում է, որ վարակվել են ամուսիններից<sup>190</sup>: Ընդ որում, 2013-2017թթ. արձանագրված ՄԻԱՎ վարակի դեպքերի 70% կազմել են աշխատանքային միգրանտները և նրանց զուգընկերները,<sup>191</sup> քանի որ Հայաստանից միգրացիոն հոսքերն ուղղված են հիմնականում ՄԻԱՎ վարակի տարածվածության ավելի բարձր ցուցանիշ ունեցող երկրներ և հատկապես Ռուսաստան: Ավելին, ՁԻԱՀ-ի հարցերով Եվրասիայի կանանց ցանցի համաձայն՝ Հայաստանում հանդիպող դեպքերից է, երբ ՄԻԱՎ դրական ամուսինը նույնիսկ ստանում է հակառետրովիրուսային բուժում, սակայն զուգընկերոջը կամ կնոջը չի տեղեկացնում ՄԻԱՎ ունենալու մասին և փոխանցում է վարակը:<sup>192</sup>

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Ռազմավարության նախագիծը չի պարունակում որևէ դրույթ ՄԻԱՎ դրական կանանց վերաբերյալ, սակայն Միջոցառումների ծրագրի

<sup>189</sup> ՀՀ առողջապահության նախարարության ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի պաշտոնական կայքէջ, [http://www.arm aids.am/statistics/stat\\_2019/stat\\_july\\_2019.html](http://www.arm aids.am/statistics/stat_2019/stat_july_2019.html)

<sup>190</sup> Հովհաննես Մադոյան, «Կանանց իրավունքների պաշտպանության մեխանիզմների ամրապնդման հեռանկարները Հայաստանում» թեմայով կլոր սեղան-քննարկում, 2019թ. հուլիսի 12, Երևան

<sup>191</sup> ՄԻԱՎ/ՁԻԱՀ և միգրացիա (ինֆոգրաֆիկա), 2018, [http://www.arm aids.am/images/OIM\\_infographics\\_AM\\_IDFARMAIDS.pdf](http://www.arm aids.am/images/OIM_infographics_AM_IDFARMAIDS.pdf)

<sup>192</sup> Լիլիթ Ավետիսյան, Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա, [http://amaranths69.rssing.com/chan-67219586/all\\_p1.html](http://amaranths69.rssing.com/chan-67219586/all_p1.html)



նախագծով նախատեսված երկու միջոցառումներից՝ «Միգրանտների համայնքներում (ներառյալ սահմանամերձ շրջանները) ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի հարցերով իրազեկվածության բարձրացմանը, անվտանգ սեռական վարքագծի ձևավորմանը, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններին ուղղված ծրագրերի մշակում և իրագործում» միջոցառումն՝ իր «Ծրագրերում ընդգրկված շուրջ 15 հազար շահառու» արդյունքային ցուցանիշով, որոշակի անդրադարձ կատարում է նշյալ խնդրին:<sup>193</sup>

2. Կանանց խոցելիությունն արտահայտվում է նաև **առկա սեռական ու վերարտադրողական առողջության ծառայություններին կանանց հասանելիության և մատչելիության սահմանափակմամբ, որը ևս փոխկապակցված է ընտանեկան բռնության խնդրին:** Այսպես, որպես հոգեբանական բռնության դրսևորում կարող է հանդիսանալ կնոջ և/կամ երեխաներին արգելելը անցնել ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն, ՄԻԱՎ դրական լինելու դեպքում թույլ չտալ կնոջը և/կամ երեխաներին ստանալ հակառետրովիրուսային բուժում կամ ամուսնու և/կամ ընտանիքի անդամների վիրավորանքները կամ մեղադրանքները ՄԻԱՎ դրական լինելու համար:<sup>194</sup> Որպես ֆինանսական բռնության դրսևորում կարող է լինել, երբ կանանց ֆինանսական միջոցները սահմանափակվում են ամուսնու և/կամ ընտանիքի այլ անդամների կողմից: Ընտանեկան բռնության դեմ պայքարին անդրադարձ է կատարվել համապատասխան գլխում:

Բացի այդ, բժշկական հաստատություններում երեխա ունեցող կանանց համար անհրաժեշտ հարմարությունների բացակայությունը ևս հանդիսանում է մատչելիության սահմանափակում:

3. ՄԻԱՎ-ի նկատմամբ կանանց խոցելիությունն արտահայտվում է նաև նրանով, որ կանայք բախվում են կրկնակի **խտրականության բժշկական հաստատություններում: ՄԻՊ-ի** կողմից բարձրաձայնվել է հետևյալ արատավոր պրակտիկայի մասին. «Առողջապահության ոլորտում կանանց նկատմամբ խտրականությունը մեծ մարտահրավեր է և դեռ առկա է Հայաստանում: Թեև բոլորն ունեն օրենքով հավասար իրավունք՝ ստանալու բժշկական օգնություն և ծառայություններ, այնուամենայնիվ որոշ դեպքերում բժշկական հաստատություններում կանայք ենթարկվում են խտրականության բժիշկների կողմից, օրինակ՝ արձանագրվել է դեպք, երբ բժիշկները խորհուրդ չեն տվել ՄԻԱՎ վարակ ունեցող հղի

<sup>193</sup> «ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ որոշման նախագիծ, Հավելված 2, մշակող մարմին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հանրային քննարկման ժամանակաշրջան՝ 22.05.2019թ.-06.06.2019թ., N4 գերակայություն, N5 միջոցառում, հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/1712/about>:

<sup>194</sup> Լիլիթ Ավետիսյան, Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա, <http://coalitionagainstviolence.org/hy/5400/>

կնոջն ունենալ երեխա: Սա հանգեցնում է նրան, որ կանայք տրամադրված չեն բողոքել իրենց խնդիրների մասին: Այս մոտեցումները պայմանավորված են հասարակության մեջ դեռևս առկա ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին բացասական կարծրատիպային ընկալումներով: Արդյունքում, խախտվում է գաղտնի առողջապահական ծառայություն ստանալու իրավունքը»:<sup>195</sup> Մեկ այլ հարցմամբ ևս փաստվում է, որ խոցելի խմբերից ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող մարդիկ ամենաշատն են ենթարկվում խտրականության առողջապահության ոլորտում: Այսպես, հարցմանը մասնակցած ՄԻԱՎ ունեցող 74 անձից 76.2%-ը պատասխանել է, որ խտրականության է ենթարկվել բժշկական հաստատություններում և չի կարողացել ստանալ պատշաճ բժշկական ծառայություն:<sup>196</sup> Խնդիրը հատկապես սուր արտահայտված է սեռական բռնության գոհերին առողջապահական ծառայություններ մատուցելու ժամանակ, երբ վերջիններս ենթարկվում են քննադատության և վիկտիմիզացիայի<sup>197</sup>:

Միջոցառումների ծրագրի նախագծով նախատեսված՝ «Բուժաշխատողների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով «ՄԻԱՎ վարակ» դասընթացի անցկացում՝ ուղղված նրանց կարողությունների զարգացմանը, ՄԻԱՎ-ով ապրող կանանց նկատմամբ հնարավոր խարանի և խտրականության նվազեցմանը» միջոցառումն՝ իր «ՄԻԱՎ վարակ» դասընթացն անցած շուրջ 1000 բուժաշխատող» արդյունքային ցուցանիշով<sup>198</sup>, ևս որոշակի անդրադարձ կատարում է նշյալ խնդրին: Սակայն, նշյալը բավարար չէ, և առկա է ավելի գործուն քայլեր անցկացնելու անհրաժեշտություն:

**Այսպես, միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա սեռական ու վերարտադրողական առողջության ծառայություններին կանանց հասանելիությունը կարող է բարելավվել, եթե սահմանված լինի բուժաշխատողների կողմից համապատասխան միջամտության մեխանիզմ այն դեպքերի համար, երբ վերջիններս իրենց մասնագիտական գործունեությունը ծավալելու ընթացքում բացահայտում են ընտանեկան որևէ տեսակի**

<sup>195</sup> «ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի Հայաստանի Հանրապետության կողմից կատարման վերաբերյալ 5-րդ և 6-րդ համատեղ պարբերական զեկույցի» վերաբերյալ այլընտրանքային զեկույց, ՀՀ ՄԻՊ գրասենյակ, հասանելի է [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CEDAW/C/ARM/CO/5-6&Lang=En](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CEDAW/C/ARM/CO/5-6&Lang=En)

<sup>196</sup> «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող մարդկանց, ԼԳԲՏ անձանց և թմրանյութեր ներերակային օգտագործողների նկատմամբ խտրականության դրսևորումների ուսումնասիրություն, 2018թ., Տես՝ <https://jam-news.net/միավ-ով-և-ձիահ-ով-ապրող-մարդիկ-խտրական/?lang=hy>

<sup>197</sup> Հովհաննես Մադոյան, «Կանանց իրավունքների պաշտպանության մեխանիզմների ամրապնդման հեռանկարները Հայաստանում» թեմայով կլոր սեղան-քննարկում, 2019թ. հուլիսի 12, Երևան

<sup>198</sup> «ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ որոշման նախագիծ, Հավելված 2, մշակող մարմին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հանրային քննարկման ժամանակաշրջան՝ 22.05.2019թ.-06.06.2019թ., N4 գերակայություն, N6 միջոցառում, հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/1712/about>:

բռնության դրսևորում: Նման մեխանիզմ առկա է **ԱՄՆ-ում**: Բացի այդ, **խտրականությունից պաշտպանվածությունը** ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համար բավականին բարձր է **ԱՄՆ-ում**, **Մեծ Բրիտանիայում**, **Գերմանիայում**, **Ֆրանսիայում**, քանի որ այս երկրներում գործում են ոչ միայն դատական, այլև՝ **արտադատական** արդյունավետ **պաշտպանական միջոցներ**, ինչպես նաև **սահմանված են** պացիենտի առողջության իրավունքը խախտելու համար **պատասխանատվության խիստ միջոցներ** բուժաշխատողների համար և/կամ **պացիենտների բարոյական փոխհատուցումներ ստանալու** իրավունք:<sup>199</sup>

Այսինքն, **պատճառը** կայանում է նաև նրանով, որ **ՀՀ-ում հակախտրական օրենսդրությունը թերի է** «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերը, որոնցով սահմանվում են խտրականության հասկացությունը և տեսակները, կանոնակարգվում են խտրականության վերացմանն ուղղված և խտրականությունից պաշտպանվելու իրավական մեխանիզմները, ինչպես նաև Իրավահավասարության խորհրդի կարգավիճակը, խնդիրները և գործունեությունը, արդեն տևական ժամանակաշրջան է մնում են հանրային քննարկման փուլում:<sup>200</sup> Բացի այդ, նշյալ նախագծով իրավահավասարության խորհուրդը չունի բավարար կարգավիճակ և լիազորություններ, որպեսզի համարվի արտադատական արդյունավետ մեխանիզմ: Ավելին, նշյալ նախագծի՝ շրջանառված երկրորդ տարբերակում ևս բարոյական վնասի ինստիտուտի թերի կարգավորումը շարունակում է արդիական մնալ, քանի որ բարոյական վնասի փոխհատուցման իրավունքը նախատեսված է միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց որոշման, գործողության կամ անգործության հետևանքով խախտված իրավունքների համար:<sup>201</sup>

Բացի այդ, **գործող օրենսդրությամբ սահմանված չեն պացիենտի առողջության իրավունքը խախտելու համար պատասխանատվության խիստ միջոցներ բուժաշխատողների համար**, իսկ հանրային քննարկման դրված «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը լուծումներ էր առաջարկում այս հարցին, մասնավորապես՝ հստակեցնում էր բժշկական կազմակերպությունների կողմից

<sup>199</sup>        Նովհաննես        Մադոյան,        <https://jam-news.net/միավ-ով-և-ձիահ-ով-ապրող-մարդիկ-խտրական/?lang=hy>

<sup>200</sup> «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծեր, մշակող մարմին՝ ՀՀ արդարադատության նախարարություն, հանրային քննարկման ժամանաշրջան՝ 15.07.2019-31.07.2019թթ., հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/1801>

<sup>201</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-239, ընդունված՝ 05.05.1998թ., հոդված 162.1, մաս 2, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=74658>

ՄԻԱՎ կարգավիճակ ունեցող անձանց նկատմամբ խտրականության բացառման արգելքը և համապատասխան բխող պատասխանատվության շրջանակները, ինչպես նաև բուժանձնակազմի կողմից ՄԻԱՎ վարակակիր և ՁԻԱՀ-ով հիվանդ անձանց բժշկական տեղեկությունների գաղտնիության պահպանման և բժշկական գաղտնիք համարվող տեղեկությունների փոխանցմանը ներկայացվող պահանջների շրջանակները,<sup>202</sup> մինչ օրս չի ընդունվել:

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- lxxiv. Ընդունել «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով կսահմանվեն պացիենտի առողջության իրավունքը խախտելու համար պատասխանատվության խիստ միջոցներ:
- lxxv. Ընդունել «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերը՝ կատարելով հետևյալ փոփոխությունները.
- վերանայել Իրավահավասարության խորհրդի կարգավիճակը և գործառույթների ու լիազորությունների շրջանակը՝ դարձնելով այն իրավամբ գործուն մեխանիզմ՝ միտված խտրականության դեմ պայքարին,
  - բարոյական վնասի փոխհատուցման իրավունքը նախատեսել նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց որոշման, գործողության կամ անգործության հետևանքով խախտված իրավունքների համար:
- lxxvi. Նախատեսել բուժաշխատողների կողմից համապատասխան միջամտության մեխանիզմ այն դեպքերի համար, երբ վերջիններս իրենց մասնագիտական գործունեությունը ծավալելու ընթացքում բացահայտում են ընտանեկան որևէ տեսակի բռնության դրսևորում:
- lxxvii. Ռազմավարության նախագծում առողջապահությանը վերաբերող գերակայության մասում անդրադարձ կատարել նաև ՄԻԱՎ դրական կանանց:
- lxxviii. Բժշկական հաստատությունները հարմարեցնել երեխա ունեցող կանանց այցելությունների համար:

#### V. ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

<sup>202</sup> «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, մշակող մարմին՝ ՀՀ առողջապահության նախարարություն, հանրային քննարկման ժամանակաշրջան՝ 04.03.2019-19.03.2019թթ., հասանելի է <https://www.e-draft.am/projects/1545/about>

«Գենդերային ճեղքվածքի մասին 2018թ.-ի հաշվետվության» համաձայն՝ Հայաստանը 149 երկրների շրջանում զբաղեցրել է 115-րդ հորիզոնականը՝ ըստ Քաղաքական մասնակցության ցուցանիշի:<sup>203</sup>

**Պեկինյան Գործողությունների ծրագրով** որպես ռազմավարական նպատակ է սահմանված «Միջոցների ձեռնարկում ապահովելու կանանց համար դիրեկտիվ կառույցների և որոշումների կայացման գործընթացների հավասար մատչելիությունը և նրանց լիակատար մասնակցությունը դրանցում և Կանանց՝ որոշումների կայացման գործընթացներին և կառավարման համակարգի աշխատանքին մասնակցելու հնարավորությունների ընդլայնում»:<sup>204</sup> Այստեղ խոսքը գնում է կանանց մասնակցության խթանմանն ուղղված քվոտաների նախատեսման մասին, որոնք ՀՀ-ում ներդրվել են, տարիների ընթացքում փոփոխվել են, սակայն երբեք բավարար չեն եղել կանանց մասնակցության ապահովման համար:

**Կոմիտեն** իր Եզրափակիչ դիտարկումներում ՀՀ –ին հանձնարարել է՞

*«(a) Միջոցներ ձեռնարկել, ներառյալ՝ ժամանակավոր հատուկ միջոցներ, Կոնվենցիայի 4 (1) հոդվածի, Կոմիտեի N25 <sup>205</sup> և N23 Ընդհանուր հանձնարարականների<sup>206</sup> համաձայն, ուղղված ընտրովի և նշանակովի մարմիններում կանանց լիարժեք և հավասար մասնակցության ապահովման արագացմանը, այդ թվում՝ Ազգային ժողով, նախարարական պաշտոններում, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում՝ համայնքներում, դատական համակարգում և արտաքին ծառայությունում:*

*(b) ներկայացնել պետական և մասնավոր հատվածներում դեկավար պաշտոններում կանանց նշանակումների և շարքերի արագ համալրման գենդերային հավասարության համակարգ,*

*(c) իրականացնել ազգային քարոզարշավներ՝ բարձրացնելու հասարակական և քաղաքական կյանքում կանանց մասնակցության կարևորության մասին իրազեկվածությունը,*

<sup>203</sup> The Global Gender Gap Report 2018, World Economic Forum, page 9-10, available at: [http://www3.weforum.org/docs/WEF\\_GGGR\\_2018.pdf](http://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2018.pdf)

<sup>204</sup> «Պեկինյան գործողությունների ծրագիր», Ընդհանուր վեհաժողովի բանաձև թիվ S-23/2, հավելված, և բանաձև թիվ S-23/3, հավելված, ընդունված՝ 1995 թ. սեպտեմբերի 15-ին Պեկինում: Փաստաթուղթն անգլերեն լեզվով հասանելի է՝ <http://www.un.org/womenwatch/daw/beijing/pdf/BDPfA%20E.pdf>, հայերեն լեզվով ամփոփագիրն հասանելի է՝ [http://www.un.am/up/file/Beijing-Decl\\_PLAT\\_ARM.pdf](http://www.un.am/up/file/Beijing-Decl_PLAT_ARM.pdf), էջ 20-21:

<sup>205</sup> «Ժամանակավոր հատուկ միջոցների վերաբերյալ» N25 Ընդհանուր հանձնարարական, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականությունների բոլոր ձևերի վերացման Կոմիտե, ընդունված՝ 2004թ.-ին, հասանելի է՝ <https://www.refworld.org/docid/453882a7e0.html>

<sup>206</sup> «Հասարակական կյանքում կանանց վերաբերյալ» N23 Ընդհանուր հանձնարարական, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականությունների բոլոր ձևերի վերացման Կոմիտե, ընդունված՝ 1997թ.-ին, հասանելի է՝ <https://www.refworld.org/docid/453882a622.html>

մասնավորապես՝ գյուղական վայրերում՝ Կոմիտեի նախորդ հանձնարարականին համապատասխան<sup>207</sup>,

(d) ավելացնել վերապատրաստումների և կարողությունների զարգացման ծրագրերի ատկայությունը կանանց համար, ովքեր ցանկանում են մտնել քաղաքական կյանք կամ զբաղեցնում են պետական պաշտոն և շարունակել խրախուսել լրատվամիջոցներին՝ ապահովելու կին և տղամարդ թեկնածուների ընտրված ներկայացուցիչների հավասար տեսանկյունությունը լրատվամիջոցներում, հատկապես՝ ընտրությունների ժամանակ:

(e) ապահովել կանանց անվտանգությունը քաղաքական կյանքում՝ Կոմիտեի նախորդ հանձնարարականին համապատասխան:<sup>208</sup>

Միջոցառման ծրագրի նախագծով խնդրի վերաբերյալ նախատեսված է երկու միջոցառում՝ «Օրենսդիր և գործադիր և այլ իշխանությունների կողմից որոշումների ընդունման մակարդակում կանանց թերի ներկայացվածության հաղթահարում» և «Ներկայացուցչական մարմիններում տղամարդկանց և կանանց համամասնորեն ներկայացվածություն միջազգային չափորոշիչներին համապատասխանեցում»: Առաջին միջոցառմամբ որպես ակնկալվող արդյունք նախատեսված է՝ «1. Պետական կառավարման համակարգում գենդերային հավասարության ապահովման համար քվոտաների ներդրում և օրենսդիր, գործադիր և այլ իշխանությունների որոշումների ընդունման մակարդակում կանանց ընդլայնված մասնակցություն: 2. Մարզպետարաններին կից գենդերային հանձնաժողովների ակտիվացումը և աշխատանքների որակի բարելավում», իսկ երկրորդով՝ «Քաղաքացիական հասարակության կայացման և երկրի քաղաքական կյանքին կանանց լիարժեք մասնակցության ապահովում»: Առաջին միջոցառմամբ որպես արդյունքային ցուցանիշ նախատեսված է՝ «1. Ներկայացուցչական, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմիններում ամեն հաջորդող ընտրությունից հետո կանանց ներկայացվածության ավելի մեծ մակարդակ՝ նախորդող ընտրությունների համեմատ (%): 2. Բարձրաստիճան պետական պաշտոններում կանանց տեսակարար կշիռի ամեն տարի աճի գրանցում/%: 3. Պետական պատվիրակություններում, էքսպերտային խմբերում, որոշում կայացնողների

<sup>207</sup> ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի Հայաստանի Հանրապետության կողմից կատարման վերաբերյալ 4-րդ պարբերական զեկույցի» Եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականությունների բոլոր ձևերի վերացման Կոմիտե, ընդունված՝ 02.02.2019թ.-ին, CEDAW/C/ARM/CO/4/Rev.1, պարբերություն 24, հասանելի է՝ <https://www.refworld.org/docid/52dd05054.html> :

<sup>208</sup> ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի Հայաստանի Հանրապետության կողմից կատարման վերաբերյալ 5-րդ և 6-րդ համատեղ պարբերական զեկույցի» Եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականությունների բոլոր ձևերի վերացման Կոմիտե, ընդունված՝ 2016 թվականի նոյեմբերի 25-ին, CEDAW/C/ARM/CO/5-6, պարբերություն 21, հասանելի է՝ <https://undocs.org/CEDAW/C/ARM/CO/5-6>:

շրջանում, կառավարության, մարզպետարանների համայնքապետարանների աշխատակազմի շրջանում միևնույն սեռի ոչ ավել քան 60%-ի ներկայացուցչության ապահովում», իսկ երկրորդով՝ «Կանանց 30% ներկայացվածություն ներկայացուցչական մարմիններում, կանանց տեսակարար կշիռն ամեն տարի աճի գրանցում (%), յուրաքանչյուր տարի շահագրգիռ մարմինների հաշվետվություններ»:<sup>209</sup> Ինչպես պարզ է դառնում վերոնշյալ նորմերի վերլուծությունից, անհասկանալի է առանձին՝ N6 միջոցառման նախատեսումը, քանի որ ներկայացուցչական մարմիններում կանանց մասնակցությանն արդեն իսկ անդրադառնում է N2 միջոցառումը:

## 1. ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԵՆՄԴԻՐ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Միջխորհրդարանական միության «Կանայք ազգային խորհրդարաններում» ցուցիչի համաձայն՝ ՀՀ-ն, ըստ ՀՀ ԱԺ 7-րդ գումարման արդյունքների, 190 երկրների շարքում զբաղեցնում է 75-րդ հորիզոնականը:<sup>210</sup> Աղյուսակ 14-ում ներկայացված է կանանց մասնակցությունը խորհրդարանում Հայաստանի 1-ին և 3-րդ Հանրապետություններում, որից պարզ է դառնում որ ներկայումս այժմ կանայք զբաղեցնում են ԱԺ պատգամավորների ընդամենը 23.48%-ը: Հավելենք, որ ՀՀ ԱԺ նախագահը տղամարդ է, 3 փոխնախագահներից 1-ն է կին, 11 մշտական հանձնաժողովներից 2-ի ղեկավարներն են կին:

### Աղյուսակ 14. Կանայք օրենսդիրում

Հայաստանի 1-ին և 3-րդ հանրապետությունների խորհրդարանները	Պատգամավորների ընդհանուր քանակը	Կին պատգամավորների ընդհանուր քանակը	Օրենքով նախատեսված քվոտա
1918թ.-ի Հայաստանի 1-ին հանրապետության խորհրդարան	82	3	3.66%
1990թ.-ի Հայաստանի 1-ին գումարման Գերագույն խորհուրդ	260	9	3.46%
1995թ.-ի Հայաստանի 3-րդ հանրապետության 1-ին գումարման Ազգային ժողով	190	12	6.32%
1999թ.-ի Հայաստանի 3-րդ հանրապետության 2-րդ գումարման Ազգային ժողով	131	4	3.05%
			5%

<sup>209</sup> «ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ որոշման նախագիծ, Հավելված 2, մշակող մարմին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հանրային քննարկման ժամանակաշրջան՝ 22.05.2019թ.-06.06.2019թ., N4 գերակայություն, N2 և N6 միջոցառումներ, հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/1712/about>:

<sup>210</sup> «Կանայք ազգային խորհրդարաններում» ցուցիչ, Միջխորհրդարանական միություն, հասանելի է՝ <http://archive.ipu.org/wmn-e/classif.htm>



2003թ.-ի Հայաստանի 3-րդ հանրապետության 3-րդ գումարման Ազգային ժողով	131	7	5.34%	
2007թ.-ի Հայաստանի 3-րդ հանրապետության 4-րդ գումարման Ազգային ժողով	131	12	9.16%	15%
2011թ.-ի Հայաստանի 3-րդ հանրապետության 5-րդ գումարման Ազգային ժողով	131	13	9.92%	20%
2017թ.-ի Հայաստանի 3-րդ հանրապետության 6-րդ գումարման Ազգային ժողով	105	19	18.1%	25%
2018թ.-ի Հայաստանի 3-րդ հանրապետության 7-րդ գումարման Ազգային ժողով	132	31	23.48%	25% (20%) <sup>211</sup>

Ինչպես պարզ է դառնում Աղյուսակ 14-ի վերլուծությունից, ՀՀ-ում քվոտաների ներդրումն ապահովել է կանանց մասնակցության աստիճանի որոշակի դրական տեղաշարժ, այսինքն՝ ինքնանպատակ չի եղել, սակայն, մյուս կողմից էլ, կանանց ներկայացվածությունը ԱԺ-ում չի ապահովվել յուրաքանչյուր ընտրափուլի համար սահմանված թիրախներին համապատասխան: Դրա պատճառներից առաջինն այն է, որ **ՀՀ-ում մշտապես կիրառվել է սխալ տեսակի քվոտա, քանի որ ՀՀ-ում նախատեսված էր միայն պատգամավորների ցուցակի քվոտայի, այլ ոչ թե՝ խորհրդարանում փաստացի մանդատների ապահովման քվոտա**, որի արդյունքում ինքնաբացարկների կամ այլ պաշտոնների նշանակվելու դեպքում կին թեկնածուներին փոխարինում էին տղամարդ թեկնածուներ: Հաջորդ պատճառը կայանում է նրանում, որ կանանց մասնակցությունը, հատկապես՝ վերակառուցման ժամանակաշրջանի սկզբին, փորձել է բարձրացվել միայն քվոտաների նախատեսմամբ՝ առանց կիրառելու այլ միջոցառումներ: Նման արհեստական քվոտաների կիրառման վառ օրինակ է վերակառուցման ժամանակաշրջանը, երբ կանայք կազմում էին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի (1984թ.-ի ընտրություններ) պատգամավորների 32.8%-ը, Միութենական հանրապետությունների գերագույն խորհուրդների (1985թ.-ի ընտրություններ) պատգամավորների 36%-ը, Շրջանային, գյուղական խորհուրդների (1985թ.-ի ընտրություններ) պատգամավորների 50%-ը, սակայն առաջին այլընտրանքային և անկախ ընտրությունները կտրուկ նվազեցրին կանանց ներկայացվածությունը ԽՍՀՄ-ում և Հայաստանի Գերագույն խորհուրդներում՝ կազմելով պատգամավորների 15.6% (1988թ.-ի ընտրություններ): Վերոնշյալն ապացուցում է, որ արհեստականորեն մտցված կանանց քվոտաները չէին արտացոլում քաղաքական

<sup>211</sup> Մանդատից հրաժարվելու կամ պատգամավորի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում:



որոշումների ընդունման գործընթացում նրանց իրական քաղաքական մասնակցությունը և դերը, և առկա էր քվոտաներն այլ միջոցներով զուգակցելու անհրաժեշտություն: Բացի այդ, **ցուցակում կին թեկնածուների տեղաբաշխման իրավակարգավորումները թերի էին**, քանի որ քվոտաների կիրառման համար հաշվարկը սկսվում էր 2-րդ տեղից, ոչ թե 1-ին՝ հնարավորություն ընձեռելով առաջին միավորում չունենալ կին թեկնածու:<sup>212</sup>

**Միջազգային փորձի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ առկա են քվոտաների հետևյալ տեսակները.**

**1. Պատգամավորների ցուցակի քվոտա (Legislated Candidate Quota):** Այն նախատեսում է կանանց մասնակցության նվազագույն քանակի օրենսդրական պահանջ կուսակցությունների ցուցակների համար, սակայն չի ապահովում խորհրդարանում կանանց համար նախատեսված մանդատների նվազագույն քանակ: Նման քվոտա նախատեսված է աշխարհի 34 երկրներում:<sup>213</sup> **Բոլիվիայում** նախատեսված է կանանց և տղամարդկանց հավասար՝ 50% մասնակցություն, իսկ եթե ցուցակում նախատեսված են կենտ թվով թեկնածուներ, ապա նախապատվությունը պետք է տալ կին թեկնածուին:<sup>214</sup>

**2. Խորհրդարանում փաստացի մանդատների ապահովման քվոտա,** հայտնի է նաև որպես Արդյունքի հավասարության քվոտա (Reserved Seats): Այն նախատեսում է կանանց մասնակցության նվազագույն քանակի օրենսդրական պահանջ ոչ թե կուսակցությունների ցուցակների համար, այլ ապահովում է խորհրդարանում կանանց համար նախատեսված մանդատների նվազագույն քանակ: Նման քվոտա նախատեսված է աշխարհի 24 երկրներում:<sup>215</sup> **Ռուանդայում** 2003թ.-ին կառավարությունը հավանություն տվեց նոր Սահմանադրությանը, որն իր մեջ ներառում էր կառավարության բոլոր մակարդակներում կանանց համար քվոտաների համակարգ: Օրենսդրությունը պարտադրում էր, որ բոլոր ներկայացուցիչների 30 տոկոսը, ներառյալ օրենսդիր մարմինը, լինեն կանայք: Ռուանդայում նախատեսված քվոտան ապահովում էր կանանց համար նախատեսված մանդատների նվազագույն քանակ:

<sup>212</sup> Վերոնջյալ պնդումները շարունակաբար բարձրաձայնվել են Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից, որոնց մի մասն ընդունվել և ներառվել են նոր Ընտրական օրենսգրքում:

<sup>213</sup> Ժողովրդավարության և ընտրական աջակցության միջազգային ինստիտուտ (International institute for democracy and electoral assistance (IDEA)), հասանելի է՝ <https://www.idea.int/data-tools/data/gender-quotas/legislative-overview>

<sup>214</sup> Միջխորհրդարանական միության «Կանայք ազգային խորհրդարաններում» ցուցիչի համաձայն՝ 190 երկրների շարքում Բոլիվիան գտնվում է 3-րդ հորիզոնականում՝ 53.1% կանանց մասնակցության ցուցանիշով, հասանելի է՝ <http://archive.ipu.org/wmn-e/classif.htm>: Քվոտաների վերաբերյալ Բոլիվիայի ընտրական օրենսգրքը, ընդունված՝ 2010թ.-ին, հողվածներ 1 և 58 (2), հասանելի է՝ <https://www.idea.int/data-tools/data/gender-quotas/country-view/129/35>

<sup>215</sup> Ժողովրդավարության և ընտրական աջակցության միջազգային ինստիտուտ, հասանելի է՝ <https://www.idea.int/data-tools/data/gender-quotas/reserved-overview>

Ռուանդայի քվոտայի համակարգը տարբերվում էր նրանով, որ **միայն կանայք են իրավասու քվեարկել միայն կանանց համար նախատեսված մանդատների համար**: Արդյունքում, 2003թ.-ի ընտրություններին կանանց մասնակցության աստիճանը պատվամենտի ստորին պալատում դարձավ 23%-ից 49%: Հաջորդ՝ 2008թ.-ի ընտրություններին, Կանանց կուսակցական ժողովը հոյակապ ռազմավարական քայլ կատարեց. կանայք, ովքեր նախորդ ընտրություններին դարձել էին պատգամավոր կանանց համար ապահովված մանդատների միջոցով և արդեն իսկ ունեին ճանաչում, մասնակցեցին ընտրություններին սովորական ընթացակարգով՝ հնարավորություն ընձեռելով նոր կանանց օգտվել միայն կանանց համար նախատեսված մանդատներից, որի արդյունքում կանանց մասնակցությունը դարձավ 56%:<sup>216</sup>

**3. Կամավոր քաղաքական կուսակցությունների քվոտա (Political Party Quota):** Նշյալի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ քաղաքական կուսակցությունները կամավոր կերպով իրենց ցուցակներում նախատեսում են քվոտաներ կանանց համար, նույնիսկ այն դեպքերում, երբ բացակայում է այդ մասին օրենսդրական պարտադիր պահանջ: Այս տեսակի քվոտան կիրառվում է աշխարհի 55 երկրում:<sup>217</sup> **Շվեդիայում** կանանց մասնակցության այսպիսի բարձր ցուցանիշ է գրանցվել նույնիսկ այն դեպքում, երբ կիրառվում է միայն այս քվոտան, և նախատեսված չէ կանանց մասնակցությանն ուղղված օրենսդրական որևէ այլ քվոտա<sup>218</sup>:

**4. Վերոնշյալ քվոտաների զուգակցում:** Կանանց մասնակցությունն օրենսդիր իշխանությունում մի շարք երկրներում ապահովվում է վերոնշյալ 2 քվոտաների համադրությամբ, որոնց թվին են պատկանում **Մեքսիկան, Արգենտինան, Թանզանիան**:<sup>219</sup>

<sup>216</sup> Միջխորհրդարանական միության «Կանայք ազգային խորհրդարաններում» ցուցիչի համաձայն՝ Ռուանդան 190 երկրների շարքում գտնվում է 1-ին հորիզոնականում՝ ապահովելով կանանց 61.3% մասնակցություն, հասանելի է՝ <http://archive.ipu.org/wmn-e/classif.htm>: Քվոտաների վերաբերյալ՝ “Rwanda Strides Towards Gender Equality in Government”, ELIZABETH BENNETT, <http://harvardkennedyschoolreview.com/rwanda-strides-towards-gender-equality-in-government>, տես նաև՝ <https://www.idea.int/data-tools/data/gender-quotas/country-view/255/35>

<sup>217</sup> Ժողովրդավարության և ընտրական աջակցության միջազգային ինստիտուտ, <https://www.idea.int/data-tools/data/gender-quotas/voluntary-overview>

<sup>218</sup> Միջխորհրդարանական միության «Կանայք ազգային խորհրդարաններում» ցուցիչի համաձայն՝ Շվեդիան 190 երկրների շարքում գտնվում է 5-րդ հորիզոնականում՝ ապահովելով կանանց 47.3% մասնակցություն, հասանելի է՝ <http://archive.ipu.org/wmn-e/classif.htm>: Քվոտաների վերաբերյալ՝ Ժողովրդավարության և ընտրական աջակցության միջազգային ինստիտուտ, հասանելի է՝ <https://www.idea.int/data-tools/data/gender-quotas/country-view/261/35>

<sup>219</sup> Միջխորհրդարանական միության «Կանայք ազգային խորհրդարաններում» ցուցիչի համաձայն՝ 190 երկրների շարքում Մեքսիկան, Արգենտինան և Թանզանիան զբաղեցնում են համապատասխանաբար 4-րդ, 19-րդ և 28-րդ հորիզոնականները՝ ապահովելով կանանց 48.2%, 38.8% և 36.9% մասնակցություն, հասանելի է՝ <http://archive.ipu.org/wmn-e/classif.htm>: Քվոտաների վերաբերյալ՝ Ժողովրդավարության և ընտրական աջակցության միջազգային ինստիտուտ, հասանելի է՝ <https://www.idea.int/data-tools/data/gender-quotas/country-view/220/35>, <https://www.idea.int/data-tools/data/gender-quotas/country-view/51/35>, <https://www.idea.int/data-tools/data/gender-quotas/country-view/291/35>:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քվոտաների վերաբերյալ օրենսդրությունը չպահպանելու դեպքում նախատեսվում են տարաբնույթ սանկցիաներ, ներառյալ՝ գրանցման մերժումից ընդհուպ մինչև ֆինանսական տույժերի կիրառում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից, օրինակ՝ Ալբանիայում 7.120 եվրոյի չափով:<sup>220</sup>

Կուսակցությունների պետական ֆինանսավորման և զենդերային հավասարության միջև ուղիղ կապի նախատեսումը ևս համարվում է հարցի լուծման եղանակ: Նման կարգավորումներ նախատեսված են աշխարհի շուրջ 25 երկրներում, այդ թվում՝ **Ֆրանսիա**, որտեղ նախատեսված է, որ եթե թեկնածուների նախընտրական ցուցակում կանանց և տղամարդկանց տարբերությունը մեծ է 2%-ից, ապա պետական աջակցությունը նվազում է այդ տարբերության 150%-ի չափով<sup>221</sup>, **Պորտուգալիա**, որտեղ նախատեսված է, որ, եթե թեկնածուների նախընտրական ցուցակում որևէ սեռի ներկայացվածությունը պակաս է 20%-ից, ապա պետական աջակցությունը նվազում է 50%-ով<sup>222</sup>, **Եթովպիա**<sup>223</sup> և այլն: Արևելյան Գործընկերության տարածաշրջանից **Վրաստանում** նախատեսված չէ որևէ քվոտա, սակայն կանանց 30% մասնակցության ապահովման դեպքում՝ 30%-ի չափով հավելյալ աջակցություն պետական բյուջեից <sup>224</sup> և **Մոլդովայում**, բացի պատգամավորների ցուցակի քվոտայից, կանանց 40% մասնակցության ապահովման դեպքում նախատեսված է նաև 10%-ի չափով հավելյալ

---

<sup>220</sup> Միջխորհրդարանական միության «Կանայք ազգային խորհրդարաններում» ցուցիչի համաձայն՝ 190 երկրների շարքում Ալբանիան զբաղեցնում է 41-րդ հորիզոնականը՝ ապահովելով կանանց 29% մասնակցություն, հասանելի է՝ <http://archive.ipu.org/wmn-e/classif.htm>: Սանկցիաների վերաբերյալ Ալբանիայի ընտրական օրենսգիրք, ընդունված՝ 2015թ.-ին, հոդված 175, հասանելի է՝ <https://www.idea.int/data-tools/data/gender-quotas/country-view/47/35>:

<sup>221</sup> Միջխորհրդարանական միության «Կանայք ազգային խորհրդարաններում» ցուցիչի համաձայն՝ 190 երկրների շարքում Ֆրանսիան զբաղեցնում է 17-րդ հորիզոնականը՝ ապահովելով կանանց 39.7% մասնակցություն, հասանելի է՝ <http://archive.ipu.org/wmn-e/classif.htm>: Ֆինանսավորման վերաբերյալ Ժողովրդավարության և ընտրական աջակցության միջազգային ինստիտուտ, հասանելի է՝ <https://www.idea.int/data-tools/data/gender-quotas/country-view/86/35>:

<sup>222</sup> Միջխորհրդարանական միության «Կանայք ազգային խորհրդարաններում» ցուցիչի համաձայն՝ 190 երկրների շարքում Պորտուգալիան զբաղեցնում է 31-րդ հորիզոնականը՝ ապահովելով կանանց 38.8% մասնակցություն, հասանելի է՝ <http://archive.ipu.org/wmn-e/classif.htm>: Ֆինանսավորման վերաբերյալ “Lei da Paridade” of Portugal, adopted in 2006, article 7.1, հասանելի է՝ <https://www.idea.int/data-tools/country-view/247/55>

<sup>223</sup> Միջխորհրդարանական միության «Կանայք ազգային խորհրդարաններում» ցուցիչի համաձայն՝ 190 երկրների շարքում Եթովպիան զբաղեցնում է 19-րդ հորիզոնականը՝ ապահովելով կանանց 35.7% մասնակցություն, հասանելի է՝ <http://archive.ipu.org/wmn-e/classif.htm>: Ֆինանսավորման վերաբերյալ Revised Political Parties Registration No. 573/2008, adopted in September 24, 2008, article 45 (2), հասանելի է՝ <https://www.idea.int/node/299570>

<sup>224</sup> Միջխորհրդարանական միության «Կանայք ազգային խորհրդարաններում» ցուցիչի համաձայն՝ 190 երկրների շարքում Վրաստանը զբաղեցնում է 138-րդ հորիզոնականը՝ ապահովելով կանանց 14.8% մասնակցություն, հասանելի է՝ <http://archive.ipu.org/wmn-e/classif.htm>: Ֆինանսավորման վերաբերյալ <https://www.idea.int/data-tools/data/gender-quotas/country-view/109/35>

աջակցություն պետական բյուջեից<sup>225</sup>, սակայն այս երկրներում կանանց մասնակցության աստիճանն ավելի նվազ է, քան Հայաստանում:

Միջազգային պրակտիկային հայտնի են նաև **գենդերային հավասարության խթանման ուղղված այլ ֆինանսական առավելությունների տրամադրումը կուսակցություններին**: Նման կարգավորումներ նախատեսված են աշխարհի շուրջ 18 երկրներում: Հարկ է նշել, որ դրանք տարաբնույթ են և ներառում են հետևյալը՝ **ֆոնդերի տրամադրում՝ նախատեսված գենդերային հավասարությանը միտված գործունեությանը**, այդ թվում՝ կանանց, երիտասարդության, հաշմանդամություն ունեցող անձանց, էթնիկ և այլ փոքրամասնությունների և մարզինալացված համայնքների քաղաքական մասնակցությանն ու ներառմանն ուղղված **ծրագրերի իրականացում՝ Չիլի, Իռլանդիա, Քենյա, Կորեա, Մեքսիկա, Սլովենիա**<sup>226</sup>, կանանց, երիտասարդությանը և էթնիկ փոքրամասնությունների՝ քաղաքական գործընթացներին արդյունավետ ներառմանն ուղղված մտածողության, քաղաքական և ընտրական **վերապատրաստումների իրականացում՝ Կոլումբիա, Հոնդուրաս**<sup>227</sup>, կանանց քաղաքական մասնակցության խթանմանն ուղղված գործունեության **հարկերի նվազեցում՝ Իտալիա**՝ տրամադրված աջակցության 10 տոկոսի չափով<sup>228</sup>, **կուսակցության պետական գրանցման**

---

<sup>225</sup> Միջխորհրդարանական միության «Կանայք ազգային խորհրդարաններում» ցուցիչի համաձայն՝ 190 երկրների շարքում Մոլդովան զբաղեցնում է 81-րդ հորիզոնականը՝ ապահովելով կանանց 22.8% մասնակցություն, հասանելի է՝ <http://archive.ipu.org/wmn-e/classif.htm>: Ֆինանսավորման վերաբերյալ՝ Ժողովրդավարության և ընտրական աջակցության միջազգային ինստիտուտ, հասանելի է՝ <https://www.idea.int/data-tools/data/gender-quotas/country-view/202/35>

<sup>226</sup> Միջխորհրդարանական միության «Կանայք ազգային խորհրդարաններում» ցուցիչի համաձայն՝ 190 երկրների շարքում Մեքսիկան, Սլովենիան, Իռլանդիան, Քենյան և Կորեան զբաղեցնում են համապատասխանաբար 4-րդ, 73-րդ, 86-րդ, 90-րդ, և 120-րդ հորիզոնականները՝ ապահովելով կանանց 48.2%, 24.4%, 22.2%, 21.8% և 17.1% մասնակցություն, հասանելի է՝ <http://archive.ipu.org/wmn-e/classif.htm>: Այլ ֆինանսական առավելությունների վերաբերյալ՝ “General Political Parties Law” of Mexico, adopted in 2014, article 51, available at: <https://www.idea.int/node/298066>, “Political Parties Act” of Slovenia, adopted in 1994, amended 2014, Article 21, available at: <https://www.idea.int/node/296949>, “Third Evaluation Report on Ireland”, GRECO, March 2009, Strasbourg, “Transparency on party funding” (theme II), available at: <https://www.idea.int/node/285009>, “Political Parties Act” of Kenya, adopted in 2011, Section 26, available at: <https://www.idea.int/node/298578>, “Political Funds Act” of Republic of Korea, adopted in 2016, available at: <https://www.idea.int/node/294691>

<sup>227</sup> Միջխորհրդարանական միության «Կանայք ազգային խորհրդարաններում» ցուցիչի համաձայն՝ 190 երկրների շարքում Կոլումբիան և Հոնդուրասը զբաղեցնում են 94-րդ և 111-րդ հորիզոնականները՝ ապահովելով կանանց 21.1% և 18.7% մասնակցություն, հասանելի է՝ <http://archive.ipu.org/wmn-e/classif.htm>: Այլ ֆինանսական առավելությունների վերաբերյալ՝ “Ley 1475” of Columbia, adopted in 2011, artículo 18, available at: <https://www.idea.int/node/299734> և “Electoral and Political Organizations Law”, adopted in 2004, article 105-A, available at: <https://www.idea.int/node/297937>

<sup>228</sup> Միջխորհրդարանական միության «Կանայք ազգային խորհրդարաններում» ցուցիչի համաձայն՝ 190 երկրների շարքում Իտալիան զբաղեցնում է 31-րդ հորիզոնականը՝ ապահովելով կանանց 35.7% մասնակցություն, հասանելի է՝ <http://archive.ipu.org/wmn-e/classif.htm>: Այլ ֆինանսական առավելությունների վերաբերյալ՝ Law n°13, adopted in 21 February 2014, article 10,3, available at: <https://www.idea.int/node/284892>

տուրքի արտոնություն, օրինակ՝ Հաիթի, որտեղ կուսակցությունը, որը գրանցում է 30 տոկոս կանանց, կվճարի կուսակցության պետական գրանցման տուրքի 60 տոկոսի չափով<sup>229</sup>, կին թեկնածուների կողմից կատարված նախընտրական ծախսերի որոշակի փոխհատուցում, օրինակ՝ Չիլի<sup>230</sup>, հավելյալ պետական աջակցության տրամադրում, օրինակ՝ Սոդոմոնյան կղզիներ, որտեղ նախատեսված է, որ ժամանակավորապես 10.000 դոլարին համարժեք գրանտ է տրամադրվում պետական բյուջեից ցանկացած կին թեկնածուի համար, ով ընտրվում է խորհրդարանում<sup>231</sup> և ֆինանսավորման տրամադրում կուսակցությունների կանանց թևերին, օրինակ՝ Ֆինլանդիա՝ պետական աջակցության 12 տոկոսի չափով<sup>232</sup>:

Ներկայումս, ՀՀ ընտրական օրենսգրքում բարձրացվել է գենդերային քվոտայի շեմը՝ մինչև 2021թ.-ը սահմանվելով 25%, իսկ դրանից հետո՝ 30%,<sup>233</sup> որը համապատասխանում է որոշումների կայացման գործընթացում ազդեցություն ունենալու համար պահանջվող կրիտիկական զանգվածին: Բացի այդ, քվոտաների կիրառման համար հաշվարկը սկսվում էր 1-ին տեղից: Նախատեսվել է նաև խորհրդարանում փաստացի մանդատների ապահովման քվոտա, երբ մանդատից հրաժարված կամ պատգամավոր ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած պատգամավորի մանդատը տրվում է նույն սեռի հաջորդ թեկնածուին: Սակայն, վերջինս սահմանված է ապահովել խորհրդարանում փաստացի կանանց մասնակցության ընդամենը 20% շեմ (25%-ի փոխարեն) մինչև 2021թ.-ը և 25% շեմ (30%-ի

---

<sup>229</sup> Միջխորհրդարանական միության «Կանայք ազգային խորհրդարաններում» ցուցիչի համաձայն՝ 190 երկրների շարքում Հաիթին զբաղեցնում է 186-րդ հորիզոնականը՝ ապահովելով կանանց 2.5% մասնակցություն, հասանելի է՝ <http://archive.ipu.org/wmn-e/classif.htm>: Այլ ֆինանսական առավելությունների վերաբերյալ՝ Decret Electoral, adopted in 2015, article 92.1, available at: <https://www.idea.int/node/290534>

<sup>230</sup> Միջխորհրդարանական միության «Կանայք ազգային խորհրդարաններում» ցուցիչի համաձայն՝ 190 երկրների շարքում Չիլին զբաղեցնում է 83-րդ հորիզոնականը՝ ապահովելով կանանց 22.6% մասնակցություն, հասանելի է՝ <http://archive.ipu.org/wmn-e/classif.htm>: Այլ ֆինանսական առավելությունների վերաբերյալ՝ Ley N° 19.884, available at: <https://www.idea.int/node/298197>

<sup>231</sup> Միջխորհրդարանական միության «Կանայք ազգային խորհրդարաններում» ցուցիչի համաձայն՝ 190 երկրների շարքում Սոդոմոնյան կղզիներ զբաղեցնում է 187-րդ հորիզոնականը՝ ապահովելով կանանց 2% մասնակցություն, հասանելի է՝ <http://archive.ipu.org/wmn-e/classif.htm>: Այլ ֆինանսական առավելությունների վերաբերյալ՝ Solomon Islands Political Parties Integrity Act, adopted in 2014, article 58 (1) (a) and (b), available at: <https://www.idea.int/node/286170>

<sup>232</sup> Միջխորհրդարանական միության «Կանայք ազգային խորհրդարաններում» ցուցիչի համաձայն՝ 190 երկրների շարքում Ֆինլանդիան զբաղեցնում է 12-րդ հորիզոնականը՝ ապահովելով կանանց 45% մասնակցություն, հասանելի է՝ <http://archive.ipu.org/wmn-e/classif.htm>: Այլ ֆինանսական առավելությունների վերաբերյալ՝ Ֆինլանդիայի կառավարության ամենամյա որոշում, հասանելի է՝ <https://www.idea.int/node/286780>

<sup>233</sup> ՀՀ ընտրական օրենսգրք (սահմանադրական օրենք), ՀՕ-54-Ն, ընդունված՝ 25.05.2016թ.-ին, հոդված 144, մաս 14 և հոդված 83, մասեր 4 և 10, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=105967>:

փոխարեն) 2021թ.-ից հետո:<sup>234</sup>Քվտան չպահպանելու դեպքում նախատեսված սանկցիան ընտրական ցուցակի գրանցման մերժումն է:<sup>235</sup>

Միջազգային փորձի և ՀՀ գործող իրավակարգավորումների համադրումից պարզ է դառնում, որ դեռևս առկա են հետևյալ խնդիրները՝ փոփոխված կարգավորումները որոշակի անդրադարձ կատարում են խորհրդարանում փաստացի մանդատների ապահովմանը, սակայն՝ անհասկանալի է, թե ինչու միայն 25 տոկոսի չափով, և ոչ թե՝ 30, առկա չէ կուսակցություններում կամավոր քվտաների նախատեսման պրակտիկա, գործող կարգավորումները քվտաների չպահպանման դեպքում չեն նախատեսում ֆինանսական տույժեր, նախատեսված չէ ուղղակի կապ՝ կուսակցությունների պետական ֆինանսավորման և գենդերային հավասարության միջև,<sup>236</sup> նախատեսված չէ կուսակցություններին՝ գենդերային հավասարության խթանման ուղղված որևէ ֆինանսական առավելություն և նախատեսված չեն օրենսդիր իշխանությունում ղեկավար մարմիններում կանանց մասնակցությանն ուղղված քվտաներ:

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- lxxix.** Դիտարկել օրենսդիր իշխանությունում կանանց՝ 30 տոկոսից ավելի մասնակցության շեմի նախատեսման նպատակահարմարության հարցը:
- lxxx.** Փոփոխություններ կատարել ՀՀ ընտրական օրենսգրքի 100-րդ հոդվածում, մասնավորապես «25 տոկոսից» բառերը փոխարինել «30 տոկոսից» բառերով, որի արդյունքում մանդատից հրաժարված կամ պատգամավոր ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած պատգամավորի մանդատը կտրվի նույն սեռի հաջորդ թեկնածուին:
- lxxxi.** Նախատեսել օրենսդրական արտոնություններ, որի արդյունքում կուսակցությունները շահագրգռված կլինեն ներդնել կամավոր քաղաքական կուսակցությունների քվտաներ, այդ թվում՝ նախատեսել ուղղակի կապ՝ կուսակցությունների պետական ֆինանսավորման և գենդերային հավասարության միջև և/կամ այլ ֆինանսական առավելություններ, ներառյալ՝ ֆոնդերի տրամադրում՝ նախատեսված գենդերային հավասարությանը միտված գործունեությանը (ծրագրերի իրականացում և/կամ վերապատրաստումների իրականացում և/կամ հարկերի նվազեցում) և/կամ

<sup>234</sup> Տե՛ս նույն տեղում, հոդված 144, մաս 14 և հոդված 100, մաս 3:

<sup>235</sup> Տե՛ս նույն տեղում, հոդված 86, մաս 2, կետ 3:

<sup>236</sup> ՀՀ ընտրական օրենսգրք (սահմանադրական օրենք), ՀՕ-54-Ն, ընդունված՝ 25.05.2016թ.-ին, հոդված 26, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=105967>: Նշյալ հոդվածը, թվարկելով կուսակցությունների պետական ֆինանսավորման հիմքերը, չի նախատեսում որևէ նման կետ:

կուսակցության պետական գրանցման տուրքի արտոնության նախատեսում և/կամ կին թեկնածուների կողմից կատարված նախընտրական ծախսերի որոշակի փոխհատուցում:

- lxxxii. Դիտարկել քվոտաների չպահպանման դեպքում նաև ֆինանսական տույժերի նախատեսման նպատակահարմարության հարցը:
- lxxxiii. Ընդլայնել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործառույթները և սահմանել վերջինիս կողմից ԱԺ ընտրություններին կանանց մասնակցությանը վերաբերող վիճակագրությունը հավաքագրելու և հրապարակելու պարտավորություն:
- lxxxiv. Սահմանել խրախուսման գործիքակազմեր, մասնավորապես՝ նախատեսել «Լավագույն կին պատգամավոր» անվանակարգերով մրցանակաբաշխություն և այդ նպատակով նախապես սահմանել հստակ մրցութային չափանիշներ, օրինակ՝ գենդերային հիմնախնդիրների լավագույն լուծումների ապահովում:
- lxxxv. Սահմանել պատգամավորների կողմից իրենց պարտականություններ ստանձնելուց որոշակի ժամկետ անց վերապատրաստումների անցկացում՝ թիրախավորելով կանանց իրավունքները և գենդերային բյուջետավորումը:
- lxxxvi. Օրենսդրորեն նախատեսել քվոտա՝ ուղղված կանանց մասնակցության ապահովմանն օրենսդիր իշխանության ղեկավար պաշտոններում, այն է՝ ԱԺ փոխնախագահներ, ԱԺ մշտական հանձնաժողովների ղեկավարներ, ԱԺ նախագահի և փոխնախագահի խորհրդականներ, ԱԺ աշխատակազմի վարչության պետեր և այլն:

## 2. ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱԴԻՐ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՀՀ օրենսդրությամբ առհասարակ նախատեսված չեն քվոտաներ՝ գործադիր իշխանության և/կամ նախագահի աշխատակազմում, ինչպես նաև արտաքին ծառայությունում ղեկավար պաշտոններում, այն է՝ այլ երկրներում և միջազգային կազմակերպություններում դեսպանների և մշտական ներկայացուցիչների պաշտոններում կանանց մասնակցության խթանմանն ուղղված: Արդյունքում, գործադիր իշխանությունում և Նախագահի աշխատակազմում ղեկավար կազմը գրեթե ամբողջովին բաղկացած է տղամարդկանցից, որն արտացոլված է Աղյուսակ 15-ում:<sup>237</sup>

Աղյուսակ 15. Կանայք գործադիր իշխանությունում և Նախագահի աշխատակազմում

<sup>237</sup> Տվյալները վերցված են ՀՀ կառավարության, վարչապետի, նախագահի և ստորև թվարկված այլ մարմինների պաշտոնական կայքերից:



Պաշտոն	Կին	Տղամարդ	Կին (%)	Տղամարդ (%)
Նախագահ	-	1	-	100%
Վարչապետ	-	1	-	100%
Փոխվարչապետ	-	2	-	100%
Նախարար	1	11	8.3%	91.6%
Գլխավոր դատախազ	-	1	-	100%
Գլխավոր դատախազի տեղակալ	-	4	-	100%
Քննչական մարմնի ղեկավար	-	2	-	100%
Քննչական մարմնի ղեկավարի տեղակալ	-	5	-	100%
Մարդու իրավունքների պաշտպան	-	1	-	100%
Սահմանադրությամբ սահմանված անկախ կոլեգիալ մարմնի ղեկավար <sup>238</sup>	-	4	-	100%
Սահմանադրությամբ սահմանված անկախ կոլեգիալ մարմնի այլ անդամ	3	22	12%	88%
Ինքնավար կոլեգիալ մարմնի ղեկավար <sup>239</sup>	-	2	-	100%
Ինքնավար կոլեգիալ մարմնի այլ անդամ	1	7	12.5%	87.5%
Նախագահի աշխատակազմի ղեկավար	-	1	-	100%
Վարչապետի աշխատակազմի ղեկավար	-	1	-	100%
Փոխվարչապետի գրասենյակի ղեկավար	-	2	-	100%
Կառավարությանը ենթակա մարմնի ղեկավար	-	11	-	100%
Վարչապետին ենթակա մարմնի ղեկավար	-	3	-	100%
Նախարարությանը ենթակա մարմնի ղեկավար	1	12	7.69%	92.31%
Փոխնախարար	10	32	23.8%	76.1%
Նախագահի խորհրդական	-	2	-	100%
Վարչապետի խորհրդական	2	8	20%	80%
Փոխվարչապետի խորհրդական	3	4	42.8%	57.1%

Եթե ուսումնասիրենք ՄԱԿ-ի Տնտեսական հանձնաժողովի մեթոդաբանության համաձայն ՀՀ գործադիր իշխանության առանցքային մարմինների անդամներին, ապա՝ կտեսնենք, որ բոլորը ղեկավարվում են տղամարդկանց կողմից, որն արտացոլված է Աղյուսակ 16-ում:

<sup>238</sup> Ներառված են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի, Հաշվեքննիչ պալատի և Կենտրոնական բանկի տվյալները:

<sup>239</sup> Ներառված են Տնտեսական մրցակցության պետական պաշտպանության հանձնաժողովի և Հանրային ծառայությունը կարգավորող հանձնաժողովի տվյալները:



**Աղյուսակ 16. Կանայք գործադիր իշխանության առանցքային մարմիններում**

Պաշտոն	Կին	Տղամարդ	Կին (%)	Տղամարդ (%)
Վարչապետ	-	1	-	100%
Նախարարներ	-	4	-	100%
Ֆինանսներ	-	1	-	100%
Արդարադատություն	-	1	-	100%
Արտաքին գործերի	-	1	-	100%
Պաշտպանության	-	1	-	100%
Ոստիկանության պետ	-	1	-	100%

Բացի այդ, արտաքին ծառայությունում, այն է՝ այլ երկրներում և միջազգային կազմակերպություններում ՀՀ կին դեսպանների և մշտական ներկայացուցիչների ներկայացվածությունը պատկերված է Աղյուսակ 17-ում, որից պարզ է դառնում, որ չի ապահովվում կանանց մասնակցության նույնիսկ 15%:<sup>240</sup>

**Աղյուսակ 17. Կանայք արտաքին ծառայությունում**

Պաշտոն	Կին	Տղամարդ	Կին (%)	Տղամարդ (%)
Դեսպաններ/մշտական ներկայացուցիչներ	6	36	14.28%	85.71%
Միջազգային կազմակերպություններում ներկայացուցիչներ	-	10	100%	100%

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- lxxxvii. Նախատեսել քվոտաներ գործադիր իշխանության ղեկավար պաշտոններում կանանց առնվազն 25% մասնակցություն ապահովելու համար, ներառյալ՝ ՀՀ փոխվարչապետների, նախարարների և փոխնախարարների, Սահմանադրությամբ սահմանված անկախ և ինքնավար կոլեգիալ մարմինների ղեկավարների, կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա մարմինների ղեկավարների, նախագահի վարչապետի և փոխվարչապետների խորհրդականների և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների համար:
- lxxxviii. Նախատեսել քվոտաներ այլ երկրներում և միջազգային կազմակերպություններում դեսպանների և մշտական ներկայացուցիչների պաշտոններում կանանց առնվազն 25% մասնակցություն ապահովելու համար:


<sup>240</sup> Տվյալները՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքից, առ 1 ապրիլի, 2019թ. դրությամբ, հասանելի է [https://www.mfa.am/filemanager/Statics/cat\\_arm.pdf](https://www.mfa.am/filemanager/Statics/cat_arm.pdf)

### 3. ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԵՄ Արդարադատության արդունավետության եվրոպական հանձնաժողովի 2016թ վիճակագրության համաձայն՝ ԵՄ տվյալներ ներկայացրած թվով 40 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է 39-րդ հորիզոնականը՝ ըստ կին դատավորների թվի՝ ապահովելով կին դատավորների ընդամենը 25% մասնակցություն: Բացի այդ, Հայաստանը կիսում է վերջին հորիզոնականը՝ ըստ դատարանների նախագահների թվի՝ 0%:

Հարկ է նշել, որ միջինը կանանց 50% մասնակցությունն է դատավորների և 34%՝ նախագահների պարագայում, որը պատկերված է Աղյուսակ 18-ում:<sup>241</sup>

Աղյուսակ 18. Եվրոպայի Խորհրդի անդամ երկրների՝ կին և տղամարդ դատավորների տեղաբաշխվածությունն ըստ դատավորների և դատարանների ղեկավարների




<sup>241</sup>European Commission for the Efficiency of Justice (CEPEJ), “European judicial systems: Efficiency and quality of justice”, CEPEJ STUDIES No. 26, տվյալները՝ 2016թ, հասանելի է՝ <https://rm.coe.int/rapport-avec-couv-18-09-2018-en/16808def9c>

Հարկ է նշել, որ պատկերը 2016թ.-ից հետո մեծապես չի փոխվել, և ընդհանուր պատկերը կարելի է տեսնել ստորև ներկայացված աղյուսակներից: Մասնավորապես, աղյուսակ 19-ում ներկայացված է տեղաբաշխվածությունն՝ ըստ կին և տղամարդ դատավորների առհասարակ, աղյուսակ 20-ում՝ ըստ ատյանների և ատյանների ղեկավարների, իսկ աղյուսակ 21-ում՝ ըստ ՀՀ սահմանադրական դատարանի դատավորների:

Արդյունքում, տեսնում ենք, որ դատական համակարգում կանանց մասնակցությունը կազմում է շուրջ 26%, սակայն մինչ օրս չկա որևէ կին ղեկավար:<sup>242</sup>

**Աղյուսակ 19. Կանայք դատական համակարգում**




**Աղյուսակ 20. Կանայք դատական համակարգում՝ ըստ ատյանների և ատյանների ղեկավարների**

Պաշտոն	Կին	Տղամարդ	Կին (%)	Տղամարդ (%)
Ընդհանուր իրավասության առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների դատավոր	43	121	26.22%	73.78%
Ընդհանուր իրավասության առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների ղեկավար	-	13	0%	100%
Վերաքննիչ դատարանի դատավոր	12	32	27.27%	72.72%
Վերաքննիչ դատարանի պալատի ղեկավար	-	3	0%	100%
Վճռաբեկ դատարանի դատավոր	4	13	23.52%	76.47%
Վճռաբեկ դատարանի ղեկավար	-	1	0%	100%
Ընդամենը դատավոր	59	166	26.22%	73.77%
Ընդամենը դատարանի/պալատի ղեկավար	-	17	0%	100%

<sup>242</sup> Արդյուրը՝ ՀՀ դատական ղեկարտամենտի և ՀՀ սահմանադրական դատարանի պաշտոնական կայքեր:

## Աղյուսակ 21. Կանայք ՀՀ սահմանադրական դատարանում



ՀՀ դատական օրենսգրքով սահմանված են որոշակի քվոտաներ՝ դատական համակարգում կանանց մասնակցությունն ապահովելու նպատակով. «5. Եթե որևէ սեռի դատավորների թիվը պակաս է դատավորների ընդհանուր թվի 25 տոկոսից, ապա դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում երաշխավորվում է առավելագույն, սակայն ոչ պակաս, քան Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն կեսից ավելի «կողմ» ձայներ ստացած այդ սեռի ներկայացուցիչների համար մինչև 50 տոկոս տեղ»:<sup>243</sup> Սակայն, նախատեսված չեն օրենսդրական քվոտաներ դատարանների ղեկավարների, ՀՀ սահմանադրական դատարանի անդամների, ինչպես նաև՝ ՀՀ բարձրագույն դատական խորհրդի անդամների համար:

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- lxxxix. Օրենսդրորեն բարձրացնել դատավորների համար նախատեսված 25% պարտադիր քվոտան՝ մինչև 40%:
- xc. Նախատեսել 25% քվոտա դատական համակարգի ղեկավար պաշտոնների համար:
- xci. Նախատեսել 25% քվոտա ՀՀ սահմանադրական դատարանի անդամների համար:
- xcii. Նախատեսել 25% քվոտա ՀՀ բարձրագույն դատական խորհրդի անդամների համար:

## 4. ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՎԱԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ

Կանանց մասնակցությունը լոկալ մակարդակում ունի խիստ տխուր պատկեր, քանի որ մենք չունենք որևէ կին մարզպետ, իսկ ՀՀ 502 համայնքներից միայն 9-ն են ղեկավարում կանայք,<sup>244</sup> ընդ որում ՀՀ 10 մարզերից 4-ում՝ Արագածոտնում, Տավուշում, Վայոց Ձորում,

<sup>243</sup> ՀՀ դատական օրենսգրքը ՀՀ սահմանադրական օրենք, ՀՕ-95-Ն, ընդունված՝ 07.02.2018թ.-ին, հոդված 109, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=119531>

<sup>244</sup> Դրանք են Արարատի մարզ Վերին Դվին (Պետրովա Լյուդմիլա), Արմավիրի մարզի Վաղարշապատ (Դիանա Գասպարյան), Արևաշատ (Մուսաննա Գևորգյան), Արտամետ (Անահիտ Դավթյան),

Սյունիքում, կին համայնքի ղեկավարներ չկան: Պատճառն ավելի է վատթարացել համայնքների խոշորացման հետևանքով, երբ համայնքի կին անդամների թիվը ավելի քան կրկնակի կրճատվել է՝ կազմելով 5,5%: Բացի այդ, առկա չէ որևէ կին Երևան համայնքի քաղաքապետի, վերջինիս տեղակալների, խորհրդականների և վարչական շրջանների ղեկավարների շարքերում: Առավել մանրամասները պատկերված են աղյուսակներ 22-ում, 23-ում և 24-ում:<sup>245</sup>

**Աղյուսակ 22. Կանայք տարածքային կառավարման մարմիններում և ՏԻՄ-երում**

Պաշտոն	Կին	Տղամարդ	Կին (%)	Տղամարդ (%)
Մարզպետ	-	10	0%	100%
Փոխմարզպետ	2	11	15.38%	84.61%
Մարզպետարանի գլխավոր քարտուղար	-	8	0%	100%
Համայնքի ղեկավար, որից	9	493	1.79%	98.2%
քաղաքային համայնքի ղեկավար	1	48	2.04%	97.95%
գյուղական համայնքի ղեկավար	8	445	1.76%	98.2%
խոշորացված համայնքի ղեկավար	1	51	1.92%	98.07%
Համայնքի վարչական ղեկավար	24	389	5.8 %	94.2%
Համայնքի ավագանու անդամ	373	3638	5,5%	94.5%


**Աղյուսակ 23. Կանայք Երևան համայնքում**

Պաշտոն	Կին	Տղամարդ	Կին (%)	Տղամարդ (%)
Երևանի քաղաքապետ	0	1	0%	100%
Երևանի փոխքաղաքապետ	0	4	0%	100%
Երևանի քաղաքապետի խորհրդական	0	2	0%	100%
Երևանի վարչական շրջանի ղեկավարներ	0	12	0%	100%
Երևանի ավագանու անդամ	19	46	29.23%	70.76%

**Աղյուսակ 24. Կանայք ՏԻՄ-երում խոշորացումից առաջ և հետո**

Գեղարքունիքի մարզի Գեղաքար (Կարինե Մարտիրոսյան), Լոռու մարզի Բագում (Սրբուհի Հարությունյան) և Քարաձոր (Հրանուշ Ռոստոմյան), Կոտայքի մարզի Նոր Երզնկա (Ալինա Հարությունյան), Շիրակի մարզի խոշորացված Ամասիա (Ջեմմա Հարությունյան) համայնքները:

<sup>245</sup> Աղյուսակում պատկերված բոլոր տվյալները վերցված են պաշտոնական կայքերից՝ առ 07.10.2019թ. դրությամբ: Համայնքի վարչական ղեկավարի և ավագանու անդամների տվյալները վերցված են <http://womennet.am/tim-women/>-ից, որտեղ ներկայացված տվյալները 26.02.2019թ. դրությամբ են: Համայնքի ղեկավարի տվյալներում ներառված են նաև 09.06.2019թ. ՏԻՄ ընտրությունների արդյունքները:



ՄԱԿ-ի կողմից կատարված վերլուծության համաձայն, 2019թ. տվյալներով համապատասխան տվյալների առկայությամբ 103 երկրներում և տարածքների տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց ներկայացվածության աստիճանը տարբերվում է 1%-ից մինչև 50%, և **միջինը կազմում է 26%**:<sup>246</sup> ԵՄ-ում կանանց ներկայացվածության միջին աստիճանը կազմում է **33.3%**, իսկ շուրջ 50% մասնակցությունն ապահովվում է Իսպանիայում, Ֆրանսիայում, Շվեդիայում և Ֆինլանդիայում:<sup>247</sup>

Կանանց հավասար մասնակցությունը և ներկայացվածությունը տեղական որոշումների կայացման գործընթացում ունեն անկյունաքարային նշանակություն տեղական ինքնակառավարման մարմինների օրակարգերում կանանց գործնական կարիքներին և խնդիրներին առաջնահերթություն տալու և **Կայուն զարգացման նպատակները տեղայնացնելու գործում**:<sup>248</sup>

Միջազգային փորձում որպես կանանց մասնակցության խթանման մեխանիզմ, ինչպես խորհրդարաններում, այնպես էլ ՏԻՄ-երում կիրառվում են **քվոտաները**: Քննարկենք վերջինիս արդյունավետության մի քանի օրինակներ: **Ֆրանսիայի** օրենսդրությամբ նախատեսված է, որ ՏԻՄ-երում կանանց մասնակցությունը պետք է լինի 50%:<sup>249</sup> **Ուգանդայում** «Տեղական

<sup>246</sup> United Nations (forthcoming). The Sustainable Development Goals Report 2019. New York <https://unstats.un.org/sdgs/report/2019/The-Sustainable-Development-Goals-Report-2019.pdf>

<sup>247</sup> “Women in politics in the EU State of play”, European Parliamentary Research Service (EPRS), Rosamund Shreeves and Martina Prpic, with Eulalia Claros Members' Research Service, PE 635.548, March 2019, available at: [http://www.europarl.europa.eu/RegData/etudes/BRIE/2019/635548/EPRS\\_BRI\(2019\)635548\\_EN.pdf](http://www.europarl.europa.eu/RegData/etudes/BRIE/2019/635548/EPRS_BRI(2019)635548_EN.pdf)

<sup>248</sup> Consolidated reply of the e-Discussion on Women’s Political Participation in Local Government iKNOW Politics April 2018 [http://iknowpolitics.org/sites/default/files/consolidated\\_reply\\_e-discussion\\_on\\_local\\_government\\_en\\_0.pdf](http://iknowpolitics.org/sites/default/files/consolidated_reply_e-discussion_on_local_government_en_0.pdf)

<sup>249</sup> Ժողովրդավարության և ընտրական աջակցության միջազգային ինստիտուտ, հասանելի է՝ <https://www.idea.int/data-tools/data/gender-quotas/country-view/86/35>

ինքնակառավարման մասին» օրենքում կանանց մասնակցության խթանմանն ուղղված քվոտան սահմանում է կանանց առնվազն 1/3 մասնակցություն ՏԻՄ-երում, որի արդյունքում կանանց մասնակցությունը հասել է 45.7%-ի: Սակայն, քանի որ որևէ քվոտա նախատեսված չէ ՏԻՄ ղեկավարի համար, այն կազմում է ընդամենը 1%<sup>250</sup> **Ֆինլանդիայում** «Ազգային քվոտաների մասին» օրենքը սահմանում է, որ ՏԻՄ մակարդակում որևէ սեռի ներկայացուցիչների քանակը չի կարող պակաս լինել **40%-ից**:<sup>251</sup> Արդյունքում, 1993թ.-ից (քվոտաների մասին օրենքի ընդունումից առաջ) մինչև 1997թ. (քվոտաների մասին օրենքի ընդունումից հետո) կանանց մասնակցությունը համայնքներում 25%-ից դարձել է 45%:<sup>252</sup> **Հնդկաստանում** կանանց քաղաքական մասնակցությունը բարձրացնելու նպատակով 1993թ. սահմանադրական բարեփոխումները պարտադրեցին, որ բոլոր ՏԻՄ-երում ղեկավար պաշտոնների պատահականությամբ ընտրված **մեկ երրորդը** ապահովված լինեն կանանց համար:<sup>253</sup> **Ռուանդայում** 2001թ.-ի և 2006թ.-ի ՏԻՄ-երի ընտրություններին ներկայացվեց եռակի քվեաթերթիկ՝ ընդհանուր, կանանց և երիտասարդական, և ընտրողները ստիպված էին ընտրել յուրաքանչյուր քվեաթերթիկից մեկ թեկնածու:<sup>254</sup> **Լեհաստանում** օրենքով նախատեսված է կանանց առնվազն **35%** մասնակցությանն ապահովմանն ուղղված գենդերային քվոտա, ինչպես նաև կուսակցություններից մեկում գործում է ներքին կուսակցության քվոտա:<sup>255</sup>

Հարկ է նշել, որ միջազգային փորձում քվոտաները միակ մեխանիզմը չեն, այլ նաև՝ **կին թեկնածուների կարողությունների զարգացումը և բացասական մշակութային կարծրատիպերի վերացմանն ուղղված համայնքի իրազեկման մակարդակի բարձրացումը**: Օրինակ, **Բելգիայում** և **Գվինեայում** կին թեկնածուների համար ստեղծվում են **ինկուբատորներ**, իսկ **Ուգանդայում** ընտրությունների անցկացումից 1-2 տարի առաջ կին թեկնածուների համար անցկացվում են **դասընթացներ**, այդ թվում՝ հանրային խոսքի, ընտրարշավի ղեկավարման և ԶԼՄ-ների հետ հարաբերվելու թեմաներով: Հարկ է հավելել, որ միջազգային փորձում առկա է նաև

<sup>250</sup> “Consolidated reply of the e-Discussion on Women’s Political Participation in Local Government”, International Knowledge Network of Women in Politics”, April 2018 available at: [http://iknowpolitics.org/sites/default/files/consolidated\\_reply\\_e-discussion\\_on\\_local\\_government\\_en\\_0.pdf](http://iknowpolitics.org/sites/default/files/consolidated_reply_e-discussion_on_local_government_en_0.pdf)

<sup>251</sup> "Quota trouble: Talking about gender quotas in Finnish local politics", International Feminist Journal of Politics, Holli, Anne Maria; Luhtakallio, Eeva; Raevaara, Eeva, 2006, 8.2.

<sup>252</sup> “Representations of Women in Finnish Local Government: Effects of the 1995 Gender Quota Legislation”, Pikkala, S, paper presented at the European Consortium on Political Research Joint Sessions of Workshops, Copenhagen, 14– 19 April, 2000:

<sup>253</sup> "Raising Female Leaders, J-PAL Policy Briefcase, April 2012, available at: <http://www.povertyactionlab.org/publication/raising-female-leaders>

<sup>254</sup> Abdennebi-Abderrahim, Souad ‘Africa Report’ – see ‘Increasing Women’s Political Participation in Liberia: Challenges and Potential Lessons from India, Rwanda, and South Africa’ by Samuel Cole

<sup>255</sup> “Eastern Europe report”, Fuszara, Malgorzata, 2008.

պրակտիկա, երբ ՏԻՄ ընտրություններին առաջադրվում են նաև քաղաքացիական նախաձեռնությունները՝ բացի կուսակցություններից, ինչը ևս անուղղակիորեն խթանում է կանանց մասնակցությունը ՏԻՄ-ում:

Ուսումնասիրություններն արդեն ապացուցում են, որ կանանց մասնակցությունը տեղական ինքնակառավարման գործընթացում չունի ձևական նշանակություն և կարող է էական փոփոխությունների բերել: Օրինակ, Հնդկաստանում կանանց կողմից ղեկավարվող համայնքների տարածքներում իրականացված ըմպելի ջրի վերաբերյալ ծրագրերը 62%-ով ավելի գերակշռում են տղամարդու կողմից ղեկավարվող համայնքներում իրականացվողներին: Նորվեգիայում, հայտնաբերվել է ուղղակի պատճառահետևանքային կապ համայնքի ավագանիներում կանանց ներգրավվածության և երեխաների խնամքի խնդիրների լուսաբանման և բարձրաձայնման միջև:<sup>256</sup>

Ներկայումս, ՀՀ ընտրական օրենսգրքում բարձրացվել է համայնքների ավագանիների գենդերային քվոտայի շեմը՝ մինչև 2021թ.-ը սահմանվելով 25%, իսկ դրանից հետո՝ 30%:<sup>257</sup> Սակայն, սահմանված է ապահովել ՏԻՄ-ում փաստացի կանանց մասնակցության ընդամենը 20% շեմ (25%-ի փոխարեն) մինչև 2021թ.-ը և 25% շեմ (30%-ի փոխարեն) 2021թ.-ից հետո:<sup>258</sup> Բացի այդ, քվոտաները նախատեսված են միայն Երևանի, Գյումրու և Վանաձորի համար, ինչպես նաև նախատեսված չեն քվոտաներ համայնքի ղեկավարների համար:

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- xciii. Նախատեսել առնվազն 25% մասնակցություն ապահովող քվոտաներ մարզպետների, փոխմարզպետների, մարզպետարանի գլխավոր քարտուղարի, համայնքների ղեկավարների, այդ թվում՝ քաղաքային, համայնքների վարչական ղեկավարների, համայնքների ղեկավարների տեղակալների և խորհրդականների և ՏԻՄ մակարդակում այլ ղեկավար պաշտոնների համար:
- xciv. Կատարել փոփոխություններ ՀՀ ընտրական օրենսգրքում և Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանու ընտրությունների համար սահմանված քվոտան նախատեսել նաև մնացած համայնքների ավագանիների համար՝ սկսելով բոլոր քաղաքային և խոշորացված համայնքներից:

<sup>256</sup> R. Chattopadhyay and E. Duflo (2004). “Women as Policy Makers: Evidence from a Randomized Policy Experiment in India,” *Econometrica* 72(5), pp. 1409–1443; K. A. Bratton and L. P. Ray, 2002, “Descriptive Representation: Policy Outcomes and Municipal Day-Care Coverage in Norway,” *American Journal of Political Science*, 46(2), pp. 428–437.

<sup>257</sup> ՀՀ ընտրական օրենսգրք (սահմանադրական օրենք), ՀՕ-54-Ն, ընդունված՝ 25.05.2016թ.-ին, հոդված 130, մաս 2 և հոդված 141, մաս 8, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=105967>:

<sup>258</sup> Տե՛ս նույն տեղում, հոդված 144, մաս 14 և 16:



- xcv. Կատարել փոփոխություններ ՀՀ ընտրական օրենսգրքում և **մասնակցության շեմը դարձնել 40%**:
- xcvi. Կատարել փոփոխություններ ՀՀ ընտրական օրենսգրքում և դիտարկել նաև **քաղաքացիական նախաձեռնությունների առաջադրման հնարավորությունը ՏԻՄ ընտրություններում**:
- xcvii. Ընդլայնել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործառույթները և սահմանել վերջինիս կողմից ՏԻՄ ընտրություններին կանանց մասնակցությանը վերաբերող վիճակագրությունը հավաքագրելու և հրապարակելու պարտավորություն:
- xcviii. Մարզպետարաններին կից գեներային հանձնաժողովների ակտիվացման և աշխատանքների որակի բարելավման տեսակից սահմանել վերջիններիս կողմից կին թեկնածուների համար ինկուբատորների ձևավորում և ուսուցումների անցկացում:
- xcix. ՏԻՄ-երի գործունեությունը համայնքի անդամների, այդ թվում՝ կանանց, շրջանակում առավել մատչելի դարձնելու նպատակով բարձրացնել իրազեկմանն ուղղված աշխատանքների մակարդակը՝
- Համայնքներում ավագանու հրապարակային նիստերի համայնքի պաշտոնական համացանցային կայքում՝ առցանց հեռարձակման պահանջը նախատեսել 3.000 և ավելի բնակիչ ունեցող համայնքների վրա 10.000-ի փոխարեն,
  - Ավագանու նիստերի մասին հայտարարությունները և օրակարգը հրապարակել համայնքի կազմում գտնվող բոլոր բնակավայրերում՝ բնակիչների համար տեսանելի վայրերում:
- c. Նախատեսել օրենսդրական արտոնություններ, որի արդյունքում կուսակցությունները շահագրգռված կլինեն ներդնել կամավոր քաղաքական կուսակցությունների քվոտաներ, այդ թվում՝ նախատեսել ուղղակի կապ՝ կուսակցությունների պետական ֆինանսավորման և գեներային հավասարության միջև և/կամ այլ ֆինանսական առավելություններ, ներառյալ՝ ֆոնդերի տրամադրում՝ նախատեսված գեներային հավասարությանը միտված գործունեությանը (ծրագրերի իրականացում և/կամ վերապատրաստումների իրականացում և/կամ հարկերի նվազեցում) և/կամ կուսակցության պետական գրանցման տուրքի արտոնության նախատեսում և/կամ կին թեկնածուների կողմից կատարված նախընտրական ծախսերի որոշակի փոխհատուցում:
- ci. Դիտարկել քվոտաների չպահպանման դեպքում նաև ֆինանսական տույժերի նախատեսման նպատակահարմարության հարցը:

- cii. **Սահմանել խրախուսման գործիքակազմեր, մասնավորապես՝ նախատեսել «Լավագույն համայնքի կին ղեկավար» և «Ավագանու լավագույն կին անդամ» անվանակարգերով մրցանակաբաշխություն և այդ նպատակով նախապես սահմանել հստակ մրցութային չափանիշներ, օրինակ՝ գենդերային հիմնախնդիրների լավագույն լուծումներ ապահովող համայնքների համար, ինչպես նաև դիտարկել ավագանու կին անդամների և համայնքի կին ղեկավարների համար խրախուսման այլ մեխանիզմների, օրինակ՝ դրամական տեսքով, առողջապահական սուբսիդիաների տեսքով և այլն:**
- ciii. **Սահմանել համայնքի ղեկավարի և ավագանու անդամների համար իրենց պարտականությունները ստանձնելուց որոշակի ժամկետ անց վերապատրաստումների անցկացում՝ թիրախավորելով կանանց իրավունքները և գենդերային բյուջետավորումը:**
- civ. **Սահմանել համայնքի հնգամյա զարգացման ծրագրերի պարտադիր գենդերային փորձաքննության պահանջ:**

**ՀԱՎԵԼՎԱԾ 1**  
**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ**  
**ՀՀ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2019-2023**  
**ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ**  
**ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ**

Ռազմավարության նախագիծը և Միջոցառումների ծրագրի նախագծերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված «Պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգին»<sup>259</sup> (այսուհետ՝ Մեթոդական հրահանգ):

**1) ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ.**

Մեթոդական հրահանգով սահմանված է՝ «Ռազմավարական նպատակների համար պետք է սահմանվեն իրատեսական, որակական և քանակական արդյունքային ցուցանիշներ, որոնք հետագայում հիմք կհանդիսանան ծրագրերի նպատակների չափման, առաջընթացի և արդյունավետության գնահատման համար: Ռազմավարական փաստաթղթերում արդյունքների ցուցանիշները սահմանելիս, դրանցից յուրաքանչյուրի գծով պարտադիր **պետք է սահմանվեն ինչպես համապատասխան թիրախային, այնպես էլ դրանց բազային ցուցանիշները:** Բազային ցուցանիշները նկարագրում են համապատասխան ցուցանիշի այն փաստացի մակարդակը, որի նկատմամբ սահմանվել են թիրախային ցուցանիշները և որի նկատմամբ նաև հետագայում գնահատվելու է համապատասխան արդյունքի գծով առաջընթացը: Որևէ նպատակի չափման համար արդյունքային ցուցանիշը որակյալ և օգտակար համարվելու համար այն պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին. Ցուցանիշների սահմանման ժամանակ անհրաժեշտ է խուսափել ընդհանրական, անորոշ, ոչ հստակ բնույթի արտահայտություններից (օրինակ՝ «բարձր որակով», «տարվա ընթացքում», «պատշաճ մակարդակով» և այլ արտահայտություններից), Ցուցանիշը կարող է լինել որակական կամ քանակական, ընդ որում քանակական ցուցանիշը պետք է լինի չափելի, իսկ որակականը՝ գնահատվող, Ցուցանիշը պետք է տրամաբանորեն կապված լինի համապատասխան նպատակների կամ արդյունքների հետ և նկարագրի դրանք՝ շեշտադրելով

<sup>259</sup> «Պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգ», ընդունված՝ ՀՀ կառավարության N 42 արձանագրային որոշմամբ, 2017թ.-ի հոկտեմբերի 5-ին, հասանելի է՝ [https://www.e-gov.am/u/files/file/decrees/arc\\_voroshum/2017/10/ardzanagrayinNrq020.pdf](https://www.e-gov.am/u/files/file/decrees/arc_voroshum/2017/10/ardzanagrayinNrq020.pdf):

այն արդյունքները, որոնք որոշում են, թե արդյոք ծրագրի կամ ավելի բարձր մակարդակի ռազմավարական նպատակները/թիրախները նվաճվել են»<sup>260</sup>:

Բացի այդ, ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը պետք է հիմնված լինեն մեթոդական հրահանգով նախատեսված **արդյունքային ցուցանիշների նկարագրության ձևաչափի աղյուսակի** վրա: Մասնավորապես, հարկավոր է յուրաքանչյուր արդյունքի մասով նախատեսել հետևյալ ցուցանիշային նկարագիրները.

- i. **Նպատակը/կարևորությունը.** բացատրվում է թե ինչ է ցույց տալիս ցուցանիշը և ինչու է այն կարևոր:
- ii. **Տեղեկատվության հավաքագրումը/աղբյուրը.** նկարագրվում է, թե որտեղից է ստացվում տեղեկատվությունը և ինչպես է այն հավաքագրվում:
- iii. **Հաշվարկման մեթոդը.** հստակորեն նկարագրվում է թե ինչպես է ցուցանիշը հաշվարկվում:
- iv. **Տեղեկատվության սահմանափակումները.** բացահայտվում են ցուցանիշի հետ կապված տեղեկատվության բոլոր սահմանափակումները, ներառյալ գործոնները, որոնք դուրս են ոլորտային գերատեսչությունների վերահսկողությունից:
- v. **Ցուցանիշի տեսակը.** ներկայացվում է, թե ինչ է չափում ցուցանիշը (վերջնական, միջանկյալ կամ ուղղակի արդյունք, կամ կատարողականի այլ չափումներ՝ ծախսարդյունավետություն, նպատակային արդյունավետություն):
- vi. **Ներկայացման եղանակը.** նկարագրում է, թե ինչպես է ներկայացվում կատարողականը՝ կուտակային թե ոչ կուտակային եղանակով
- vii. **Հաշվետվողականության ցիկլը.** ներկայացվում է ցուցանիշի հաշվետվողականության պարբերականությունը՝ ամսական, եռամսյակային կամ տարեկան:
- viii. **Թույլատրելի շեղումը.** բացահայտում է, թե թիրախային մակարդակի համեմատ փաստացի ցուցանիշի քանի տոկոսային կետով շեղումն է համարվում թույլատրելի:<sup>261</sup>

Վերոհիշյալ պահանջները պետք է վերաբերվեն ինչպես **ռազմավարական նպատակները նկարագրող արդյունքային ցուցանիշներին**, այնպես էլ կարող են վերաբերվել այդ նպատակների հասնելու համար իրականացվող **ծրագրի միջոցառումների համար սահմանվող հիմնական կատարողական ցուցանիշներին**<sup>262</sup>

Հարկ է նշել, որ տեղի չի ունեցել ռիսկերի պատշաճ գնահատում, քանի որ թե Ռազմավարության նախագծով, թե Միջոցառումների ծրագրի նախագծով նախատեսված չեն

<sup>260</sup> Տե՛ս նույն տեղում, կետ 41, 43 և 50, ենթակետեր 3, 5, 7:

<sup>261</sup> Տե՛ս նույն տեղում, կետ 52:

<sup>262</sup> Տես նույն տեղում, կետ 53:

վերոնշյալ արդյուսակով սահմանված բոլոր ցուցանիշային նկարագրերը. Ռազմավարության նախագծի 8-րդ բաժինը մասնակիորեն է անդրադառնում ռիսկերի գնահատմանը, իսկ Միջոցառումների ծրագրի նախագծով նախատեսված թվով 68<sup>263</sup> միջոցառումներից գրեթե 82%-ի արդյունքային ցուցանիշները թերի են: Այսպես, դրանցից՝ թվով 37 միջոցառում չեն պարունակում քանակական կամ այլ եղանակով չափելի արդյունքային ցուցանիշներ առ այն, թե, օրինակ, կոնկրետ որքա՞ն միջոցառում/ծրագիր կիրականացվի, որքա՞ն շահառուներ կօգտվեն դրանից և այլն: Նշված միջոցառումներից շատերում որպես արդյունքային ցուցանիշ նախատեսվում է յուրաքանչյուր տարի արդյունքային ցուցանիշի բարելավում որոշակի տոկոսով նախորդ տարվա նկատմամբ, սակայն սա ևս չի կարող դիտարկվել որպես արդյունքային չափելի ցուցանիշ, քանի որ չի տրվում ռազմավարության գործողության ժամկետի առաջին տարվա որոշակի ցուցանիշ, որը հիմք կհանդիսանա հաջորդ տարիների բարելավումը չափելու համար՝ (N1 գերակայություն՝ N 1, 3, 5 միջոցառումներ, N2 գերակայություն՝ N 2բ, 3, 7, 8, 9, 11, 12, 13, 15ա, 15բ, 15գ, 16, 20 միջոցառումներ, N3 գերակայություն՝ N 2, 3, 4, 5, 9, 10, 11, 12 միջոցառումներ, N4 գերակայություն՝ N 4, 7, 8, 9, 10 միջոցառումներ, N5 գերակայություն՝ N 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 միջոցառումներ), **թվով 13 միջոցառում միայն մասնակի են նախատեսում որոշ արդյունքային ցուցանիշներ** (N1 գերակայություն՝ N 2 միջոցառում, N2 գերակայություն՝ N 1ա, 1բ, 4, 6, 14, 17, 18, 19, 21 միջոցառումներ, N3 գերակայություն՝ N 8 միջոցառում, N 4 գերակայություն՝ N 2, 5 միջոցառումներ), **թվով 6 միջոցառման արդյունքային ցուցանիշները նախատեսում են որոշակի վերլուծության/ հետազոտության/ վիճակագրության/ ուղեցույցի/ օրենսդրական առաջարկությունների ներկայացում, սակայն անհայտ է, թե ո՞րն է լինելու դրանց վերջնական արդյունքը** (N 2 գերակայություն՝ N 10, 21 միջոցառումներ, N3 գերակայություն՝ N 6, 7 միջոցառումներ, N 4 գերակայություն՝ N 3 միջոցառում, N5 գերակայություն՝ N 11 միջոցառում):

## 2) ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Միջոցառումների ծրագրի նախագծով նախատեսված ժամկետների ձևակերպումներն ունեն շատ ընդհանուր բնույթ, որոնք հիմնականում համընկնում են հենց Ռազմավարության վերջնաժամկետի հետ, որի արդյունքում հնարավոր չի լինի իրականացնել ընթացիկ մշտադիտարկում: Բացի այդ, նման մոտեցումը սխալ է նաև աշխատանքների պլանավորման տեսանկյունից:

## 3) ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

<sup>263</sup> Միջոցառումների ծրագրի նախագծի 64 կետերից որոշներով նախատեսված է մեկից ավելի միջոցառում:

Խնդրահարույց է Միջոցառումների ծրագրի նախագծով «Պատասխանատու կատարողների և համակատարողներին» վերաբերող դրույթները: Այսպես, անհասկանալի է, թե ինչո՞ւ Հայաստանի Հանրապետությունում կանանց և տղամարդկանց հավասարության հիմնահարցերով խորհուրդը Միջոցառումների ծրագրի նախագծով, որպես Պատասխանատու կատարող, նշված չէ որևէ միջոցառմամբ: Բացի այդ, «Շահագրգիռ մարմիններ» կամ «Շահագրգիռ հանրապետական գործադիր մարմիններ» եզրույթներն ամրագրված են որպես Պատասխանատու «Համակատարող» 11 միջոցառմամբ (N1 գերակայություն՝ N 2, 6 միջոցառումներ, N2 գերակայություն՝ N 1բ, 2բ միջոցառումներ, N5 գերակայություն՝ N 5, 6, 9, 10, 13, 14, 15 միջոցառումներ), որը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին:

#### 4) ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Միջոցառումների ծրագրի նախագծով նախատեսված թվով 68 միջոցառումներից թվով 18 միջոցառում իրենից ենթադրում է վերապատրաստում/ուսուցում (N1 գերակայություն՝ N3 միջոցառում, N2 գերակայություն՝ N1բ, 2բ, 3, 12, 15բ միջոցառումներ, N3 գերակայություն՝ N 2, 3, 5, 8, 9, 10 միջոցառումներ, N4 գերակայություն՝ N 4, 6, 10 միջոցառումներ, N5 գերակայություն՝ N 4, 5 միջոցառումներ), թվով 9 միջոցառում իրենից ենթադրում է իրազեկման արշավ կամ քարոզարշավ (N1 գերակայություն՝ N 1, 5 միջոցառումներ, N2 գերակայություն՝ N 4, 7, 14, 15բ միջոցառումներ, N3 գերակայություն՝ N 11 միջոցառում, N4 գերակայություն՝ N 7 միջոցառում, N5 գերակայություն՝ N 3 միջոցառում), թվով 11 միջոցառում իրենից ենթադրում է վերլուծության/հետազոտության կատարում, մեթոդաբանական ուղեցույցի, վիճակագրության կազմում (N2 գերակայություն՝ N 1ա, 2ա, 5, 6, 10, 21 միջոցառումներ, N3 գերակայություն՝ N 6, 7 միջոցառումներ, N4 գերակայություն՝ N 3, 5 միջոցառումներ, N5 գերակայություն՝ N 5, 11 միջոցառումներ): Ամենին էլ չթերագնահատելով ուսուցումների և վերոնշյալ այլ միջոցառումների կարևորությունը՝ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներին և հնարավորություններին վերաբերող 5-ամյա ռազմավարական պլանավորմանն ուղղված նման կարևորության փաստաթուղթը, մեր խորին համոզմամբ, չի կարող իր միջոցառումների կեսից ավելին (55%-ը) հատկացնել միայն նման միջոցառումներին: Վերջիններս կարող են ուղղակի լինել ուղեկցող միջոցառումներ, սակայն փոփոխության հասնելու համար՝ անհրաժեշտ է ավելի շատ գործուն քայլեր իրականացնել:

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

cv. Ռազմավարության նախագիծը և Միջոցառումների ծրագրի նախագծերը համապատասխանեցնել Մեթոդական հրահանգին, մասնավորապես՝

- Վերանայել արդյունքային ցուցանիշները և դրանք դարձնել քանակական կամ այլ եղանակով չափելի, ինչպես նաև որոշակի վերլուծության/ հետազոտության/

վիճակագրության/ ուղեցույցի/ օրենսդրական առաջարկությունների դեպքում կոնկրետ նշել դրանց վերջնական արդյունքը,

- Վերանայել Միջոցառումների ծրագրի ժամկետները՝ նշելով, թե կոնկրետ որ ժամանակահատվածում տվյալ միջոցառմամբ նախատեսված որ գործողությունն է իրականացվելու,
- Վերանայել պատասխանատուների շրջանակը,
- Նախատեսել գործուն քայլեր պարունակող միջոցառումներ՝ օգտվելով սույն հետազոտությունից:

## ՀԱՎԵԼՎԱԾ 2

### «ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԿԼՈՐ ՄԵՂԱՆ-ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

2019թ. հուլիսի 12-ին Երևանում տեղի ունեցավ «Կանանց իրավունքների պաշտպանության մեխանիզմների ամրապնդման հեռանկարները Հայաստանում» թեմայով կլոր սեղան-քննարկումը: Այն կազմակերպվել էր «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում:

Համաժողովը նպատակ ուներ կազմակերպել հանրային քննարկում «ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023թթ. ռազմավարության և միջոցառումների ծրագրի» նախագծի վերաբերյալ՝ անդրադառնալով հիմնախնդիրներին հետևյալ ոլորտներում՝

- կանանց տնտեսական և աշխատանքային իրավունքների պաշտպանությունը,
- կանանց իրավունքների պաշտպանությանը ընտանիքում՝ ներառյալ ընտանեկան բռնության և սեփականության իրավունքի ոտնահարման համատեքստում,
- կանանց առողջապահական (վերարտադրողական) իրավունքների պաշտպանությունը,
- կանանց քաղաքական մասնակցությունը:

Կլոր սեղան-քննարկմանը մասնակցում էին ներկայացուցիչներ ՀՀ պետական մարմիններից, ԱԾ-ից, ՔՀԿ-ներից, ԶԼՄ-ներից, փաստաբաններ և փորձագետներ: Կլոր սեղան-քննարկմանը բացման խոսքով հանդես եկավ «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի ղեկավար, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ Կարեն Զադոյանը:

Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի խորհրդական Օլգա Ազատյանը և ՀՀ ԱԾ «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Անուշ Բեդլոյանը:

Զեկույցներով հանդես եկան «ՕքսԵՋեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամի գենդերային հարցերով ծրագրերի ղեկավար Քրիստինե Հովհաննիսյանը, փաստաբաններ Մարիամ Զադոյանը, Նոնա Գալստյանը, Նվարդ Փիլիպոսյանը, հանրային առողջության փորձագետ Գևորգ Գրիգորյանը, բժիշկ-իրավաբան Հովհաննես Մադոյանը, «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի փորձագետ Նարեկ Ենոքյանը և «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի արդարադատության և հարակից ոլորտների համակարգող Արտյոմ Մեսրոպյանը:

Իրավաբանների հայկական ասոցիացիան շնորհակալություն է հայտնում վերոնշյալ անձանց՝ սույն զեկույցը կազմելու գործում իրենց ավանդը ներդնելու կապակցությամբ: